

ԿԱՂԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԱՅԻ  
ԵՎ ՈՒՋԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒ  
СОВЕРШЕНСТВОВАНИЕ КАДРОВОЙ ПОЛИТИКИ  
И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

IMPROVEMENT OF PERSONNEL POLICY  
AND MILITARY EDUCATION

«ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐԱՎՈՒՔ ՉՈՒՐ ՊԱՐՏՎԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՈՒ»

«ԱՐՄԵՆԻԱ ՆԵ ԴԱՆՈ ՊՐՈԻԳՐԱՏ ՆԻ ՕԴՆՈ ՎՈՅՆԵ»  
«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄՔ  
ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄՔ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի  
և Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռումպոյի հանդիպումը.

Երևան, 2012 թ. հուլիսի 4



# ՀԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (73). 2012

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Քորագիշյան Հ. Ա.

քաղաքական գիտությունների

դոկտոր (Դ.Դ.), Ռազմական

գիտությունների ուսուաստանյան  
ակադեմիայի խմբական անդամ,

հակաահարեկչության գծով

փորձագետ (ԱՄՆ)

(նախագահ)

### Չիլինգարյան Գ. Ա.

(գլխավոր խմբագիր)

Այդինյան Ռ. Ա.

Այվազյան Լ. Գ.

Ապրիամով Է. Ա.

Ավետիսյան Վ. Պ.

(գլխ. խմբ. տեղակալ)

Գասպարյան Տ. Շ.

Դավթյան Ա. Մ.

Ժունյան Վ. Վ.

Խսախանյան Մ. Ա.

Խաչատրով Յու. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Մարգարյան Ի. Ժ.

Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակալ)

Մարտիրոսով Լ. Ա.

Միրզաքելյան Ա. Ա.

Նազարյան Ա. Ս.

Շիրինյան Մ. Ա.

Սեղրակյան Ս. Գ.

Վարդանյան Ա. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Փարսադանյան Ա. Մ.

## ԲՈՎԱՆԴԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ս. Ս. Օհանյան, Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեջացման գործոն ..... 9

Ս. Ա. Շիրինյան, Ա. Վ. Հակոբյան, Պաշտպանական համակարգում կադրային քաղաքականության կատարելագործման միտումները ..... 20

Ժ. Հ. Ամիրիկանյան, Միջազգային համագործակցության դերը ՀՀ ռազմակրթական և ԶՈՒ-ի անձնակազմի կառավարման համակարգերի բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում ..... 27

Ս. Ն. Կարապետյան, Ա. Ս. Մելքոնյան, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում իրականացվող բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում ..... 34

Դ. Կ. Բալյայան, Դ. Մ. Աղեքսանյան, ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանմիքերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության զարգացման հարցի շուրջ ..... 42

Բ. Ն. Հարուրյունյան, Ռազմական ժողովության համակարգի կատարելագործումը՝ որպես հայկական բանակի բժշկական ապահովման արդյականացման հիմք ..... 47

Վ. Հ. Մարգարյան, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ ..... 56

Զ. Գ. Ասավրյան, ՀՀ ԶՈՒ-ում ատեսատավոր-ման արդյունավետ համակարգի ներդրման հարցի շուրջ ..... 61

Ռ. Վ. Աղովումյան, Ռազմական կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման որոշ հարցեր քաղաքական հոգեբանության տեսանկյունից ..... 66

## ԱՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Գ. Մ. Հովհաննիսյան, Պետութեաշխնության և Խաղաղաշխնության միջազգային փորձը Կոստոյի օրինակով . . . . . 70

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- L. U. Էվոյսն, «Աղքարեցանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»՝ թուրք-աղքարեցանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբ . . . . . 79*

## ВОЕННАЯ ИСТОРИЯ. КАРАБАХСКАЯ ВОЙНА

- В. А. Пономарев. Трагические события, которые можно было предотвратить . . . . .* 89

## ՈԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Հ. Գ. Խաչարյան, Ո. Ս. Գևառպետյան, Վ. Ե. Խանոյան, ՈՒղիղ Աշանառությամբ հրաձգության հրետանային վարժաասարք . . . . . 103

ԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

- Կ. Հ. Միմնայան, Ա. Գ. Գալստյան, Հայաստանի Հանրապետությունում որակավոր և մասնագիտացված մանկաբուժական օգնության կազմակերպման որոշ հայեցակարգային հարցեր . . . . . 109

- Ա. Գ. Խաչարյան*, Զինվորական բժիշկների ու հիվանդների սոցիալ-իրավական փոխարարերությունների առանձնահատկությունները և ազդեցությունը բուժապարկման գործնքացի վրա . . . . . 113

- Ք. Ա. Սահակյան, Վ. Վ. Ծափուրյան, Ա. Գ. Գալստյան, Ծաքարախստային  
երիկամախտության դեպքում սակավաբարյունության բուժման որոշ հարցեր . . . . . 118

- գ. Վ. Թունյան, Ստամբուլութքային-կերպարափողային անցումի քաղցկելի վիրահատական բուժման փորձի մասին ..... 122

## ԳԻՏԱԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուլումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

- Ա. Գ. Գևորգյան, Երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:*

Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

*Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*

Մ. Մ. Միհրանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Կ. Ա. Մուսյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Վ. Մարգույան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Հ. Ս. Միակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրֆեսոր

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**  
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
№ 3 (73). 2012  
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котамджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член  
Российской Академии военных наук, научный эксперт  
по контртерроризму (США) (председатель), Чилингарян Д. С. (гл. редактор),  
Аветисян В. П. (зам. гл. редактора), Айвазян Л. Г., Айдинян Р. А., Априамов Э. А.,  
Варданян А. Г., Гаспарян Т. Ш., Давтян А. М., Исаханян М. Р., Карапетян М. Н.,  
Маргарян В. Г. (зам. гл. редактора), Мартirosов А. А., Матевосян И. Ж.,  
Мирзабекян А. Р., Назарян А. С., Парсагянян А. М., Седракян С. Г.,  
Тер-Григорянц Н. Г., Тоноян Д. Э., Тунян В. В.,  
Хачатуров Ю. Г., Ширинян М. А.

**СОДЕРЖАНИЕ**

**СОВЕРШЕНСТВОВАНИЕ КАДРОВОЙ ПОЛИТИКИ  
И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ**

<i>С. М. Оганян.</i> Развитие военного образования как фактор повышения эффективности оборононой системы РА . . . . .	9 (18)*
<i>М. А. Ширинян, А. В. Акопян.</i> Тенденции усовершенствования кадровой политики в оборононой системе . . . . .	20 (25)
<i>Ж. А. Амирханян.</i> Роль международного сотрудничества в реформировании систем военного образования и управления личным составом ВС РА . . . . .	27 (32)
<i>М. Н. Карапетян, А. С. Мелконян.</i> Процесс реформирования в военном институте им. В. Саргсяна МО РА в контексте военно-образовательных развитий . . . . .	34 (40)
<i>Д. К. Балаян, Д. М. Алексанян.</i> К вопросу развития военного образования в военном авиационном институте им. маршала А. Ханферянца МО РА . . . . .	42 (46)
<i>Б. Н. Арутюнян.</i> Совершенствование системы военно-медицинского образования как основа модернизации медицинского обеспечения Армянской армии . . . . .	47 (53)
<i>В. Г. Маргарян.</i> К вопросу профессионального психологического отбора кадров в оборононой сфере . . . . .	56 (60)
<i>З. Д. Асатрян.</i> К вопросу внедрения эффективной системы аттестации в ВС РА . . . . .	61 (65)
<i>Р. В. Агузумян.</i> Некоторые вопросы профессионального психологического отбора военных кадров с точки зрения политической психологии . . . . .	66 (69)

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## **ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ**

- Г. М. Оганесян.* Международный опыт государствостроительства и миростроительства в Косово ..... 70 (77)

## **РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ**

- Л. С. Эвоян.* «Договор о стратегическом сотрудничестве и взаимной помощи между Азербайджанской Республикой и Турецкой Республикой» — начало качественно нового этапа двусторонних азербайджано-турецких отношений ..... 79 (87)

## **ВОЕННАЯ ИСТОРИЯ. КАРАБАХСКАЯ ВОЙНА**

- В. А. Пономарев.* Трагические события, которые можно было предотвратить ..... 89

## **ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ**

- Г. Г. Хачатрян, Р. С. Гаспарян, В. Е. Ханоян.* Артиллерийский тренажер для стрельбы прямой наводкой ..... 103 (108)

## **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

- К. Г. Симонян, С. Г. Галстян.* Некоторые концептуальные вопросы организации в Республике Армения квалифицированной и специализированной педиатрической помощи ..... 109 (126)

- Р. Г. Хачатрян.* Особенности социально-правовых взаимоотношений военных врачей и больных и их влияние на процесс медобеспечения ..... 113 (126)

- К. М. Саакян, В. В. Цатурян, С. Г. Галстян.* О некоторых вопросах лечения анемии при диабетической нефропатии ..... 118 (127)

- Г. В. Тунян.* Об опыте хирургического лечения кардиоэзофагеального рака ..... 122 (127)

## **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, доцент;

*Н. У. Аракелян,* академик НАН РА;

*В. М. Арутюнян,* академик НАН РА;

*Г. Е. Багдасарян,* академик НАН РА;

*Г. А. Геворкян,* академик НАН РА;

*Р. Г. Геворкян,* доктор геологических наук, профессор;

*А. А. Манташян,* академик НАН РА;

*Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор;

*М. М. Мириджянян,* доктор медицинских наук, профессор;

*К. С. Мосоян,* доктор технических наук, профессор;

*В. С. Саркисян,* академик НАН РА;

*А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор;

*Ю. С. Чилингарян,* академик НАН РА

# **«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,

DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

Nº 3 (73). 2012

Is published 4 times a year

## **EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,  
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,  
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*,  
*Gasparyan T. Sh.*, *Idynyanyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Karapetyan M. N.*,  
*Khachatourov Yu. G.*, *Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirosov L. A.*,  
*Matevossyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,  
*Sedrakyan S. G.*, *Shirinyan M. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*,  
*Tounyan V. V.*, *Vardanyan A. G.*

## **CONTENTS**

### **IMPROVEMENT OF PERSONNEL POLICY AND MILITARY EDUCATION**

<i>S. M. Ohanyan.</i> Development of military education as a factor for efficiency enhancement of the RA defense system . . . . .	9 (19)*
<i>M. A. Shirinyan, A. V. Hakobyan.</i> The improvement trends of the personnel policy in the defense system . . . . .	20 (26)
<i>Zh. H. Amirkhanyan.</i> The role of international cooperation in reforming the systems of military education and personnel management of the RA Armed Forces . . . . .	27 (33)
<i>M. N. Karapetyan, A. S. Melkonyan.</i> The process of reforms in the V. Sargsyan military institute, MOD, RA in the context of military education development . . . . .	34 (40)
<i>D. K. Balayan, D. M. Aleksanyan.</i> On the question of military education development in the Military Aviation Institute after Marshal A. Khanperiyants of MOD RA . . . . .	42 (46)
<i>B. N. Harutyunyan.</i> Improvement of military medical education system as a basis for modernization of medical support of the Armenian army . . . . .	47 (54)
<i>V. H. Margaryan.</i> On the question of professional psychological selection of the commissioned staff in the defense sphere . . . . .	56 (60)
<i>Z. D. Asatryan.</i> On the question of inculcating an effective merit rating system in the Armed Forces of the Republic of Armenia . . . . .	61 (65)
<i>R. V. Aghuzumcyan.</i> Several aspects of professional psychological selection of the military personnel from the viewpoint of political psychology . . . . .	66 (69)

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## **POLITICAL SCIENCE OF SECURITY**

- G. M. Hovhannisyan.* International experience of state-building and peace-building in Kosovo . . . . . 70 (78)

## **REGIONAL SECURITY**

- L. S. Evoyan.* «Agreement on strategic cooperation and mutual assistance between the Republic of Azerbaijan and the Republic of Turkey» as a beginning of a qualitatively new stage in the Turkish-Azerbaijani bilateral relations . . . . . 79 (87)

## **MILITARY HISTORY. KARABAKH WAR**

- V. A. Ponomaryov.* Tragic events that could have been prevented . . . 89 (101)

## **MILITARY ENGINEERING**

- H. G. Khachatryan, R. S. Gasparyan, V. E. Khanoyan.* An artillery simulator for direct fire . . . . . 103 (108)

## **MILITARY MEDICINE**

- K. H. Simonyan, S. G. Galstyan.* Some conceptual issues of organizing competent and specialized pediatric care in the Republic of Armenia . . . . . 109 (128)

- R. G. Khachatryan.* The characteristics of the social and legal relations of military physicians and patients and its impact on the medical service process . . . . . 113 (129)

- K. M. Sahakyan, V. V. Tsaturyan, S. G. Galstyan.* Some issues of anemia's treatment in diabetic nephropathy . . . . . 118 (129)

- G. V. Tunyan.* On the experience of surgical treatment of cardioesophageal cancer . . . . . 122 (130)

## **SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumetsian,* Candidate of Psychological Sciences, Docent;

*N. H. Arakelian,* Full Member, NAS RA;

*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;

*Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;

*H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;

*R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;

*V. M. Haroutyounian,* Full Member, NAS RA;

*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;

*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;

*M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;

*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;

*V. S. Sargsian,* Full Member, NAS RA;

*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

**ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅԱՆ  
ԵՎ ԱԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

**СОВЕРШЕНСТВОВАНИЕ  
КАДРОВОЙ ПОЛИТИКИ  
И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ**

**IMPROVEMENT  
OF PERSONNEL POLICY  
AND MILITARY EDUCATION**



**ՈԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՇՏԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

*Ա. Մ. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար*



Հայաստանի Հանրապետության զարգացման արդի փուլի առանձնահատկությունն այն է, որ տեղի են ունենում հասարակական կյանքի բոլոր ոլորտների և պետական համակարգի, այդ թվում՝ նրա ռազմական կազմակերպվածքի ու կրթական համակարգի, լայնամասշտար բարեփոխումները: Թեև այդ բարեփոխումների բովանդակությունը, փուլերը, ձևերը և իրագործման ժամկետները տարբեր են, այնուամենայնիվ, դրանց գլխավոր նպատակները օրինակի-փորեն փոխկապված են: Ռազմական համակարգի կատարելագործման նպատակն է ամբողջ պաշտոնոր դրական պարամետրների ձևավորումը և երկրի անվտանգության երաշխավորված ապահովումը: Կրթական համակարգի բարեփոխումը ծառայում է մարդկանց կրթական նախարարակի բարձրացման, ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես ակտիվ, ստեղծագործ անձնավորության ձևավորման նպատակներին, ինչը, ռազմական ոլորտի նկատմամբ կիրառված, նշանակում է հայրենիքի պաշտպանների պրոֆեսիոնալ պատրաստության դրական պահանջման նոր մակարդակի ապահովում:

Վերջին երկու տասնամյակներում աշխարհում տեղի ունեցած ռազմատեխնոլոգիական հեղափոխության, գիտատար սպառազինության և ռազմական տեխնիկայի ի հայտ գալու հետևանքով ռազմական արվեստի (ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական) և ընդհանրապես պատերազմների նկատմամբ նոր մոտեցումների նշանական շնորհիվ զինված ուժերի մարտունակության գնահատման ժամանակ սկսեցին գերակա դեր խաղալ դրական չափանիշները: Առաջին ալան մոլեցին, մի կողմից, գերճշգրիտ սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով հազեցվածության, մյուս կողմից՝ մասնագիտացած արիեստավարժ անձնակազմով ապահովման հարցերը: Ընդ որում, անձնակազմի մասնագիտացմանը ներկայացվող պահանջների կտրուկ խստացման հետևանքով միայն վարժանքն ու պատրաստումը այլևս բավարար չեն, և ի հայտ է գալիս մասնագիտական կրթություն ստանալու անհրաժեշտություն: Ուստի պատահական չէ, որ պետությունների՝ ռազմարվեստի ժամանակակից տեսության վրա հիմնվող զինված ուժերում ռազմական կրթության և ընդհանրապես անձնակազմի կառավարման ոլորտը համարվում է պաշտպանական համակարգի արդյունավետության և ԶՈՒ-ի մարտունակության ապահովման առաջնային գործոն:

Ինչպես ասել է մեծերից մեկը. «Սիգուցե մենք չկարողանամք մեր երեխա-

ների համար ապագա կերտել, բայց առնվազն կարող ենք նրանց նախապատրաստել ապագային»<sup>1</sup>: Փորձը ցույց է տալիս, որ բազմակողմ կրթություն ստացած հրամանատարները բարդ իրավիճակներում ավելի արդյունավետ որոշումներ են կայացնում և ավելի արագ են կողմնորոշվում, քան այն հրամանատարները, որոնք թեև ուսուցանված են, բայց ոչ բավարար չափով կրթված: Այստեղ արժե կրթությունը (*образование, education*) տարրերակել ուսուցանումից (*обучение, training*): Եթե կրթությունը մարդուն որպես կանոն հիմնարար, այդ թվում՝ բազային նաևնագիտական, գիտելիքների փոխանցումն է, վերլուծական մտածողության ձևավորումը նրա հիշողության մեջ տարրեր բնագավառներից փաստերի ամրագրմամբ և այդ փաստերի միջև առնչությունների որոշակի համակարգի ձևավորմամբ, այսինքն՝ նրա նախապատրաստումը անհայտ իրավիճակներում գործելուն, և դրա համար է բազմաթիվ առարկաների ուսուցումը, ապա ուսուցանումը նպատակառուղյամբ է վարքի կոնկրետ, դիմամիկական բնույթի հմտությունների, ալգորիթմների ձևավորմանը՝ նրա հիշողության մեջ «երե-ապա» տրամաբանական սխեմաների ամրագրմամբ և գործողությունների կատարման ավտոմատացմամբ, այսինքն՝ անհայտ նախապատրաստումն է հայտնի իրավիճակներում գործելուն, ուստի և բավարար չէ լիարժեք մասնագետ, կայացած գործիչ ու հրամանատար պատրաստելու համար: Պատահական չէ, որ ժամանակակից մանկավարժության մեջ ընդունված է, որ կրթական ֆունկցիայի իրացման գերջնական արդյունքը գիտելիքի գործունությունն է, որն արտահայտվում է դրանցով գիտակցված գործառության, նոր գիտելիքներ ստանալու համար նախկին գիտելիքները մորթիկացնելու կարողության ձևով, ինչպես նաև թե՝ մասնագիտական (տվյալ առարկայից), թե՝ հանրակրթական առավել կարևոր կարողությունների և հնտությունների ձևավորվածությունը<sup>2</sup>: Իրականում, մի կողմից, կրթության և ուսուցանման արդյունավետ համադրումն է, իսկ մյուս կողմից՝ անձնակազմի պաշտոնեական առաջնադաշտական արդյար ու քափանցիկ կառավարումը, որոնք գինված ուժերի համար կապահովեն գերազանց արդյունավետություն, լինի դա մարտի դաշտում, թե՝ խաղաղ պայմաններում: Ուստի ուզմագիտության մեջ հայտնագործություն արած չենք լինի, եթե ԶՈՒ-ի մարտունակությունն սկսենք չափել ռեսուրսի, առաջին հերթին՝ մարդկային ռեսուրսի դրականական գործակիցներով:

Այս առումով ուշագրավ են ԱՄՆ-ում գիննառայողների դաստիարակության պայմաններին ու համակարգին ներկայացվող հիմնական պահանջները, որոնք են՝ համակողմանիությունը, համակարգվածությունը, տրամաբանականությունը, իրապաշտությունը, արդյունավետությունը, ինչպես նաև մտահղացման, պայմանների, նպատակի, խնդիրների և հնարավորությունների միասնականությունը: Այդ երկրում սպայակազմի դաստիարակության առանձնահատկություն-

<sup>1</sup> Franklin D. Roosevelt. Quotes ([http://www.goodreads.com/author/quotes/219075.Franklin\\_D\\_Roosevelt](http://www.goodreads.com/author/quotes/219075.Franklin_D_Roosevelt)).

<sup>2</sup> Տե՛ս Բ. Սլաստենին, Ի. Իսաև և օր. Պեդագոգիկա ([http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Pedagog/slast/12.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/slast/12.php)):

Աերն եմ՝ խելքի, կամքի, մարմնի մշտական մարզումը, մեծ ուշադրությունը ֆիզիկական պատրաստման նկատմամբ և նրա նշանակալից դերը բոլոր կատեգորիաների զինծառայողների ծառայողական գործունեության մեջ, երկրի ՉՈՒ-ում ծառայության բարձր վարկանիշը, և այլն: Դաստիարակության բովանդակության մեջ ամերիկյան մասնագետներն առանձնացնում են՝ զինծառայողների բարձր ռազմամասնագիտական որակների ձևակորուտն ու զարգացումը, հայրենասիրության դաստիարակումը, զինծառայության նկատմամբ դրական շարժադրավորման ձևավորումն ու զարգացումը, բարոյավարժային դաստիարակությունը, գերիակայունության (*πλεούστοιχικόστε*) դաստիարակությունը, առողջ կենսակերպի կազմակերպումը, ֆիզիկական դաստիարակությունը<sup>3</sup>:

### Ռազմակրթական համակարգի ստեղծումն ու կայացումը

ՀՀ Զինված ուժերի կազմավորումը համընկավ Հայաստանի համար բավականին ծանր ժամանակահատվածի հետ: Այրբեցանի ճենարկած ռազմական ազդեստիայի, շարունակվող շրջափակման և դրա հետևանքով առաջացած պարենային ճգնաժամի ու ռեսուրսների անբավարարության պայմաններում բանակի ստեղծումը և ՀՀ ու ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովումը օրվա հարց էր<sup>4</sup>: Այդ բարդ իրավիճակում ՀՀ Զինված ուժերը լիովին կատարեցին պետության քաղաքական դեկավարության կողմից առաջադրված խնդիրները, սակայն այս ամենի հետևանքով մեր բանակը ճենք բերեց որոշ առանձնահատկություններ, որոնցով տարրերվում էր աշխարհի շատ բանակներից: Այդ առանձնահատկություններից էր այն, որ բանակի շարքերը համալրելու հրատապության պատճառով ինչպես ավագ, այնպես էլ կրտսեր հրամանատարական պաշտոնները մեծ մասամբ համալրվեցին հայրենասեր, մարտունակ, սակայն ռազմական կրթություն չունեցող անձնակազմով: Առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ԽՍՀՄ կազմում եղած տարիներին Հայաստանը միութենական հանրապետություններից միակն էր, որն իր տարածքում չուներ որևէ ռազմակրթական հաստատություն: Բացի այդ, նախկին ԽՍՀՄ բանակի մարտավարությունն ու ռազմավարությունը ոչ ամբողջությամբ էին համապատասխանում Հայաստանի Հանրապետության ռազմական, այդ թվում՝ ռազմակրթական, կարիքներին ու հնարավորություններին:

1994 թ. մայիսի 5-ի հրադադարի հաստատումից անմիջապես հետո սկսվեցին ՀՀ Զինված ուժերը պրոֆեսիոնալ անձնակազմով համալրելուն ուղղված աշխատանքները: Մասնավորապես՝ ԵՊՀ ռազմագիտական ամբիոնի հենքի վրա կազմավորվեց ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատա-

<sup>3</sup>Տես B. Սուկին. Особенности воспитательной работы в ВС США, Великобритании и Франции. «Зарубежное военное обозрение», 2001, № 11:

<sup>4</sup>Այս սպառնալիքները շարունակում են արդիական մնալ մինչ օրս (տես ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 11 (535)) և ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ ռազմական դրամագիր հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամագիրը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 1 (591))):

բական ուսումնարանը<sup>5</sup>: Նորաստեղծ բանակի խնդիրներից ելնելով՝ ուսումնարանն սկզբնական շրջանում զինվորական մասնագետներ էր պատրաստում 8 մասնագիտությունների գծով: Դրա հետ մեկտեղ ուսումնարանի բազայի վրա անցկացվում էին մեկամյա դասընթացներ, որտեղ ընդունվում էին ՀՀ բուհերն ավարտած քաղաքացիներ:

Զուգահեռաբար ՀՀ ՊՆ միջնորդությամբ ստեղծվեց Ռազմավիճացիոն քոփչատեխնիկական ուսումնարանը<sup>6</sup>, իսկ ԶՈՒ-ն որակյալ ռազմարժեշիկական անձնակազմով համալրելու նպատակով Երևանի պետական բժշկական համալսարանում գործող բուժծառայության կազմակերպման և էքստրեմալ բժշկության ամբիոնի հիմքի վրա ստեղծվեց Ռազմավիճական ֆակուլտետը<sup>7</sup>:

Մեծ ուշադրություն դարձվեց նաև նախազորակոչային կրթության համակարգի զարգացմանը, քանի որ այն պետք է դառնար անձնակազմի պլանավորման, հավաքագրման և ընտրության ապագա համակարգի առաջին փուլի կարևոր բաղադրիչներից մեկը: Այդ նպատակով ՀՀ լրսավորության նախարարության ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիրին 1994 թ. տրվեց ուսումնական զորանասի կարգավիճակ<sup>8</sup>:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ-ի կազմավորման արդեն սկզբնական շրջանում անհրաժեշտ հիմք ձևավորվեց բարձրագույն ռազմական կրթության զարգացման համար: Այդ հիմքի վրա ընդհաններ մի քանի տարվա ընթացքում ձևավորվեց ՀՀ ռազմական բուհերի համակարգը: Մասնավորապես՝ ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական բազմաբնույթ ուսումնարանը վերակազմավորվեց Ռազմական ինստիտուտի<sup>9</sup>, իսկ Ռազմավիճացիոն քոփչատեխնիկական ուսումնարանը՝ Ռազմավիճացիոն ինստիտուտի: Միևնույն ժամանակ, ՀՀ-ի և ՌԴ-ի միջև 1997 թ. «Քարեկանության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի ստորագրումից հետո հնարավորություն ստեղծվեց ՀՀ ռազմական ուսումնական հաստատություններում շղասավանդվող մասնագիտություններով

<sup>5</sup> Տես ՀՀ Կառավարության 1994 թ. հունիսի 24-ի «ՀՀ պաշտպանության նախարարության Բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարան ստեղծելու մասին» հմ. 279 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5475>):

<sup>6</sup> Տես ՀՀ Կառավարության 1994 թ. սեպտեմբերի 20-ի «ՀՀ պաշտպանության նախարարության Ռազմանային ուժերի քոփչատեխնիկական ռազմավիճացիոն ուսումնարանի կարգավիճակի մասին» հմ. 447 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5525>):

<sup>7</sup> Տես ՀՀ Կառավարության 1994 թ. մայիսի 19-ի «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների պահանջանելի սպասարկողի սպասների ծրագրով ռազմական պատրաստության հիմնադրությերը և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» հմ. 232 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5467>):

<sup>8</sup> Տես ՀՀ Կառավարության 1993 թ. նոյեմբերի 15-ի «ՀՀ լրսավորության նախարարության ռազմամարզական զիշերօրիկ վարժարանի հիմնա վրա ռազմամարզական վարժարան-ուսումնարան հանձիր ստեղծելու մասին» հմ. 569 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5353>) և ՀՀ Պաշտպանության նախարարի 1994 թ. մարտի 14-ի «Ռազմամարզական վարժարան-ուսումնարան ստեղծելու մասին» հմ. 59 հրամանը:

<sup>9</sup> Տես ՀՀ Կառավարության 1998 թ. հունվարի 16-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության Բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարանը ՀՀ Պաշտպանության նախարարության նախարարի մասին» հմ. 24 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6431>):

ՀՀ ԶՈՒ-ի կուրսանտների կրթությունն իրականացնել ՈՒ ռազմառուսումնական հաստատություններում: 1998 թ. ստորագրված «Հունաստանի Հանրապետության ԱՊՆ և ՀՀ ՊՆ միջև ռազմական ուսումնական հաստատություններում ՀՀ քաղաքացիների ուսուցման կարգի և պայմանների մասին» համաձայնագրի հիման վրա հայ կուրսանտներն սկսեցին կրթություն ստանալ նաև այդ երկուում: Արտերկրյա կրթությունը կոչված էր ոչ միայն լրացնելու բացը, այլև մեծացնելու ՀՀ-ում ռազմական կրթության համակարգի զարգացման հնարավորությունները:

2000-ական թվականների սկզբին ՀՀ-ում արդեն ձևավորվել էր ռազմական կրթության մի համակարգ, որը հնարավորություն էր տալիս նախազորակոշային տարիքի պատաճմներից ընտրելու և պատրաստելու ռազմական գործի ապագա մասնագետների: Այժմ տվյալ ուղղությամբ տարվող աշխատանքները գտնվում են քարեփոխումների փուլում<sup>10</sup>:

Այս ժամանակաշրջանում կարևոր աշխատանքներ կատարվեցին զինվորական անձնակազմի ծառայողական առաջխաղացման, ծառայության տևողության, որակավորման և ընդհանրապես կադրային կառավարման հարցերի համակողմանի վերանայման ու դրանց իրավական ձևակերպման ուղղությամբ: 2002 թ. զինվորական ծառայություն անցնելու և անձնակազմի կառավարման հետ կապված խնդիրները հանվեցին «Զինապարտության մասին» ՀՀ օրենքից և ամրագրվեցին առանձին օրենքով<sup>11</sup>: Նոր օրենքով սպայական կազմի ծառայողական առաջխաղացման համար որպես պարտադիր նախապայման սահմանվեց որակավորում անցնելը, ընդումին որակավորման պահանջներին զիտելիքների համապատասխանեցումն ապահովվում էր վերապատրաստման միջոցով:

Միևնույն ժամանակ, չնայած կատարված զգալի աշխատանքին, ռազմական կրթության համակարգը դեռ հեռու էր ավարտուն լինելուց: Մասնավորապես՝ ԶՈՒ-ի պահանջարկը քավարարելու համար տարեցտարի ընդույնվում էր կրթությունն արտերկրում՝ ընդգրկելով ավելի մեծ քով երկրների ռազմառուսումնական հաստատությունները: Դա թեև օգտակար էր փորձի փոխանակման և մի շարք մասնագիտությունների զարգացման տեսանկյունից, սակայն առաջ էր բերել նաև զգալի կախվածություն, որն առավել ակնհայտ էր ավագ սպայակազմի պատրաստման բնագավառում, քանի որ ՀՀ-ում չկային ավագ սպաների համար նախատեսված կրթահամալիրներ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ ռազմակրթական չափորոշիչները շարունակում էին կրել նախկին ԽՍՀՀ-ում գործող չափորոշիչների շեշտված ազդեցությունը: Կրթական հաստատություններում զիտական և հետազոտական աշխատանքների մասնաբաժննը փոքր էր և չէր կարող բավարար լինել ռազմական կրթության մեջ:

<sup>10</sup> Տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2011 թ. նոյեմբերի 10-ի հմ. 1356-Ն և ՀՀ կրթության գլուխքան նախարարի 2011 թ. նոյեմբերի 9-ի հմ. 1222-Ն «ՀՀ իիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոշային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասին» համատեղ հրամանը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73753>):

<sup>11</sup> Տես «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ 2002 թ. հուլիսի 3-ի հմ. ՀՕ-380-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 26 (2011)):

յան ոլորտում զգալի որակական առաջընթաց ապահովելու համար: Իրավիճակը բարդանում էր նաև այն պատճառով, որ ռազմական կրթության ոլորտը դուրս էր մնացել ռազմարվեստի ընդհանուր վերանայնան գործընթացներից, որոնք իրականացվում էին հիմնականում ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտարում:

Անցած ժամանակաշրջանում ՀՀ Զինված ուժերը մեծ զարգացում ապրեցին՝ վերածվելով քաղմաճյուղ և պետական կառավարման տարրեր ոլորտներում կարևոր դերակատարություն ունեցող պաշտպանական կառույցի<sup>12</sup>: Վերագնահատվեցին մարտահրավերները, ավելացան պաշտպանական համակարգի վրա դրված խնդիրները, Զինված ուժերն ավելի մեծ դեր ստանձնեցին ինչպես բնական ու տեխնիկական մարտահրավերները, ավելացան պաշտպանական բնակչությանը օգնության ցուցաբերման գործում, այնպես էլ ահարելչության դեմ պայքարում, բնակչության և հատկապես երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության, տեղեկատվական հակապայքարի, ռազմական արդյունաբերության և մի շարք այլ ոլորտներում, ՀՀ պաշտպանական համակարգում ներդրվեց քաղաքացիական հասուլ ծառայությունը<sup>13</sup>: Այդ ամենը լավ հիմք էր ՀՀ պաշտպանական համակարգի հետագա պլանավորված զարգացման համար:

### **Պաշտպանական կրթության համակարգի զարգացում**

Ինչպես Գիտելիքի օրվա առթիվ իր ուղերձում նշել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, «Հայաստանը կարող է լինել միայն կրթված: Այլ Հայաստան պարզապես չի կարող գոյություն ունենալ»<sup>14</sup>: Այս խոսքերն ամբողջությամբ վերաբերում են նաև պաշտպանական ոլորտին:

ՀՀ պաշտպանական կրթության համակարգը ներկայում գտնվում է ակտիվ զարգացման գործընթացում: Արդեն երկու տարի է, ինչ ռազմական կրթության զարգացումն ընդգրկված է ՀՀ Կառավարության գերակա խնդիրների շարքում<sup>15</sup>: Այս ոլորտում ապագա 2-5 տարիների համար նախանշված քարեփոխությունները համակարգելու նպատակով մշակվեցին և 2012 թ. մարտի 14-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատվեցին «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը», ինչպես նաև դրան կից «Սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզն» ու «Հայեցակարգի ապահովման միջոցառումն»:

<sup>12</sup> Տես «Պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015» (հանրային օգտագործման համար) (<http://www.mil.am/files/SDR-Arm.pdf>):

<sup>13</sup> Տես «Քաղաքացիական հասուլ ծառայության մասին» ՀՀ 2007 թ. նոյեմբերի 28-ի հմ. ՀՕ-286-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 66 (590)):

<sup>14</sup> «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առթիվ», 01.09.2012, ՀՀ Նախագահի պաշտոնական կայք (<http://www.president.am/hy/congratulatory/item/2012/09/01/president-Serzh-Sargsyan-congratulation-knowledge/>):

<sup>15</sup> Տես ՀՀ Կառավարության 2011 թ. հոնվարի 13-ի «ՀՀ Կառավարության 2011 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 111-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2011, հմ. 12 (815)) և ՀՀ Կառավարության 2012 թ. օգոստոսի 9-ի «ՀՀ Կառավարության 2012 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 1055-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 42 (916)):

ների ծրագիրը»<sup>16</sup>: «Հայեցակարգով» սահմանվում է, որ բարեփոխված ռազմական համակարգը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

– համապատասխանություն ՀՀ պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

– համապատասխանություն նիշազգային չափորոշիչներին և ունակություն լիարժեք կերպով ինտեգրվելու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին՝ Բոլոնիայի գործընթացում ՀՀ ներգրավվածության շրջանակներում,

– կրթության փուլայնություն և շարունակականություն՝ եռաստիճանությամբ հանդերձ,

– միջազգային առաջավոր փորձը հաշվի առնող, ճկուն և գիտության նոր նվազումները ներառող,

– սպայական ու ենթասպայական կազմների պաշտոնեական առաջխաղացման փուլերին և ընթացակարգերին համահունչ,

– որակապես նոր դասախոսական կազմ ունեցող,

– անձնակազմի կրթության շարունակականությունն ապահովող:

Ներկայումս կատարվում են ակտիվ աշխատանքներ «Հայեցակարգի» դրույթների իրագործման ուղղությամբ: Մասնավորապես՝ վերանայվել են 2004 թ. հունվարի 27-ից գործող Սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնի (ՄԿՈԲԿ) ուսումնակրթական ծրագրերը, ստեղծվել է մայորների պատրաստման համար «մայոր» գիննվորական կոչումով սպայական վերապատրաստման դասընթաց: ՀՀ ՊՆ-ի կողմից մշակվել ու ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ աշխատանքային կարգով համաձայնեցվել են «Բարձրագույն ռազմական կրթության ռազմական կառավարման մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշիչները», վերանայման փուլում են «Բարձրագույն ռազմական կրթության բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչները»: Առաջարկություններ են պատրաստվել 2007 թ. օգոստոսի 30-ի «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և ՀՀ Կառավարության 2005 թ. նոյեմբերի 9-ի հմ. 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության հմ. 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Ըստ այդ՝ ՀՀ ռազմակրթական համակարգը կիհանապատասխանեցվի ազգային և միջազգային չափանիշներին՝ դառնալով եռաստիճան:

Նախատեսվում է 2013 թ. գործարկել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հենքի վրա ձևավորվող ավագ սպայական հրամանատարաշտարային դասընթացները, որոնք հաստատուն հիմքեր են ստեղծում 2015 թ. ՀՀ ՊՆ հրամանատարաշտարային բարձրագույն ուսումնական հաստատության կայացման համար: Այս ուղղությամբ արդեն մշակվել են հիմնական կրթական ծրագրին ներկայացվող պահանջները, սահմանվել են կրթարաժինները,

<sup>16</sup> Տես ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը և սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» հմ. 9-18 արձանագրային որոշումները (<https://www.e-gov.am/protocols/item/135/>):

ուսուցանվող առարկաներին հատկացվող ժամաքանակները և կրթաբաժինների տոկոսաչափը:

Այն հանգամանքի հաշվառմամբ, որ առաջատար պետությունների ԶՈՒ-ի մարտունակուրյան ապահովման կարևոր գործոններից է արիեստավարժ սերժանտական կազմը, մենք ձեռնամուխ ենք եղել ՀՀ ԶՈՒ-ում ննան հաստատության հիմնադրման գործին: Մասնավորապես՝ սերժանտական կազմը հանվել է շարքային կազմից և որպես կրտսեր բաղադրիչ մտցվել ենթասպայական կազմի մեջ<sup>17</sup>: Ըստ այդմ՝ աշխատանքներ են տարվել արոտինային ենթասպայական կազմի կրթությունը որպես միջնակարգ մասնագիտական կրթություն կայացնելու ուղղությամբ: Այսպես՝ 2012 թ. հուլիսին մեկնարկեցին նորացված ծրագրով դասակի հրամանատարների տեղակալների դասընթացները, որտեղ դասախոսություններ են կարդացել նաև օտարերկրյա սերժանտ-հրահանգիչները:

Եապես ընդլայնվել է ՀՀ ՌՈՒՀ-երի միջազգային համագործակցության դաշտը, հատկապես՝ գիտամանկավարժական, մեթոդաբանական, նյութատեխնիկական աջակցության բնագավառներում: Այսպես, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ուսանուական ինստիտուտի կազմում գործող ՍԿՈԲԿ-ում դասախոսություններ են կարդացել ԱՄՆ-ից, Բուլղարիայից, Լեհաստանից, Ռումինիայից, Չեխիայից հրավիրված դասախոսներ: 2012 թ. հունիսի 12–14-ը ՀՀ պաշտպանության նախարարությունը հյուրընկալել է Անվտանգության և պաշտպանական ակադեմիաների ԳՀԽ կոնսորցիոնի կրթական հարցերով աշխատանքային խմբի ամառային նստաշրջանը<sup>18</sup>: Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են ՀՀ ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ուսումնական ինստիտուտությունների ինստիտուտը, համագործակցելով ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի և Հարվարդի համալսարանի հետ, զգալի նախապատրաստական աշխատանք է կատարել ԱՌՀ-ն Պաշտպանական ազգային համալսարանի կերպավոխներու ուղղությամբ: Ապագա համալսարանի գործարկումը կապահովի ուսումնական մակարդակում աշխատող և պետական կառավարման գործընթացներում ընդգրկված բարձրագույն զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաների վերապատրաստումը պաշտպանական-անվտանգային քաղաքագիտության գծով: Մեր կարծիքով՝ ՀՀ կրթական համակարգում նպատակահարմար կիմներ ստեղծել հետազոտական համալսարաններ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային համալսարանը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս կրթական և գիտական բաղադրիչների համադրմամբ ապահովելու ուսումնական ծրագրերի մշտական համապատասխանությունը ամենաբարձր գիտական նվաճումներին:

<sup>17</sup> Տես ««Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թ. մարտի 20-ի հմ. ՀՕ-92-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 18 (894):

<sup>18</sup> Տես «Ավարտվել են «Նոր ուսանողներ, նոր մեթոդներ և նոր գնահատականներ» խորագրով համաժողովի աշխատանքերը», 15.06.2012 ([www.mil.am/1339773435/page/5](http://www.mil.am/1339773435/page/5)):

## Հեռանկարներ

Այսօր աշխարհում շատ երկրներ կարևորում են շարունակական կրթությունը՝ այն համարելով ամբողջ կյանքի ընթացքում մարդու գիտելիքների հարստացման ու դրանց գործնական կիրառման հմտությունների զարգացման, փորձի փոխանակման, միջազգային փորձի հետ հաղորդակցման միջոց։ Պաշտպանության համակարգում շարունակական կրթության կենտրոնական գաղափարը անձնակազմի զարգացումն է, փոփոխվող միջավայրին արագորեն հարմարվելու նրանց ունակության ձևավորումը, նպաստումը նրանց մտավոր հնարավորությունների առավել նպատակային զարգացմանն ու արտահայտմանը, իրամանատարակառավարչական կարողությունների զարգացմանը։ ՀՀ ուզմակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումների շնորհիվ այն ի զորու կլինի ապահովելու այդ շարունակական կրթությունը՝ ներառելով բոլոր մակարդակները՝ սկսած նախազորակոչայինից մինչև բարձրագույն ուզմավարական-անվտանգայինը։

Մեր կարծիքով՝ ժամանակն է արմատապես փոխելու մոտեցումները ընդհանրապես կրթական և մասնավորապես ուսումնական կրթության համակարգի զարգացման նկատմամբ։ Պետք է այդ համակարգի աստիճանակարգության մեջ ավելի բարձր դիրք զբաղեցնող օղակի գործունեությունը պայմանավորել ստորին օղակի շրջանավարտի մակարդակով, այդ պահանջները ներկայացնել վերևից ներքեւ։ Այսինքն՝ հստակ կերպով որոշել այն որակական պարամետրները, որոնց պետք է համապատասխանի մեր ապագա սպան, ըստ այլմ սահմանել այն շափանիշները, որոնց պետք է բավարարի բարձրագույն կրթությունը և այլն։ Ընդհանին այդ պարամետրները պետք է լինեն տարրերակված ըստ զինվորական աստիճանակարգային օղակների։ Օրինակ՝ Հայոց բանակի մարտավարական օղակի ապագա սպան, ըստ մեզ, պետք է՝

- խորապես տիրապետի ժամանակակից մարտի կազմակերպման ու վարման տեսությանն ու պրակտիկային, կարողանա արագ կերպով կողմնորոշվել և ճիշտ որոշումներ կայացնել մարտական իրադրության սրընթաց փոփոխությունների ու տեղեկությի անբավարարության պայմաններում, գիտենա իր ենթակա ստորաբաժանումների ուժեղ և բույլ կողմերը, կարողանա գրագետ ձևով կազմակերպել հակառակորդի ուժերի և դիրքերի հետախուզումը՝ նրա բույլ և ուժեղ կողմերը պարզելու համար, ապա մարտավարական հնարների հմուտ կիրառմամբ շեղորացնի հակառակորդի ուժեղ կողմերն ու օգտագործի բուլությունները, իսկ մարտի ելքի վրա ենթակա ստորաբաժանման բուլությունների ազդեցությունը նվազեցնի՝ գերազանցությունը հասցնելով վճռորոշ գործոնի,
- խաղաղ ժամանակ կարողանա ենթակա ստորաբաժանումում հաստատել մարտական համերաշխություն, տիրապետել ստեղծված իրավիճակին և կանխատեսել բացասական զարգացումները՝ կանխելով միջանձնային լարվածությունների վտանգավոր աճումը, խուճապային վիճակները, և այլն։

Որպեսզի ապագայում Հայաստանի Հանրապետությունը լինի ժամանակին

համընթաց քայլող Զինված ուժեր ունեցող անվտանգ, ժողովրդավարական և առաջադիմական պետություն, անհրաժեշտ է համակարգային մոտեցումներ ցուցաբերելով շարունակել բարեփոխել ռազմական կրթության համակարգը՝ նրա բոլոր բաղկացուցիչներով հանդերձ, ինչն արդեն մոտ ժամանակներս գիտականորեն հիմնավորված հենադաշտ մեր Զինված ուժերում արիեստավարժության մի նոր վերելքի համար:

## РАЗВИТИЕ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ОБОРОННОЙ СИСТЕМЫ РА

*С. М. ОГАНЯН, Министр Обороны РА*

### РЕЗЮМЕ

Образование представляет собой процесс формирования фундаментальных, в том числе базовых специальных, знаний, способности аналитически мыслить. Именно поэтому в ВС ведущих стран мира сфера военного образования и управления личным составом считается первичным фактором обеспечения эффективности функционирования оборонной системы и боеспособности ВС. В США к системе военного образования и воспитания предъявляются следующие основные требования: всесторонность, системность, логичность, реалистичность, эффективность, единство замысла, условий, цели, задач и возможностей. Особенности воспитания состоят в постоянной напряженности ума, воли, тела, большом внимании к физической подготовке и ее весомой роли в служебной деятельности всех категорий личного состава; высоком престиже службы в ВС и т. д.

В этом контексте рассмотрена история развития системы военного образования в ВС РА и очерчиваются основные направления ее развития. Подчеркивается необходимость коренного пересмотра подходов к теоретико-прикладному осмыслинию перспектив развития: требования должны исходить сверху вниз. В частности, необходимо определить те качественные параметры, которым должен соответствовать будущий офицер ВС РА. Таковыми для тактического звена являются: глубокое овладение теорией и практикой организации и ведения современного боя, умение ориентироваться в быстро меняющейся боевой обстановке и принимать правильные решения в условиях недостаточности информации; знание сильных и слабых сторон подчиненных подразделений, умение грамотно организовать разведку сил и позиций противника и использовать их слабые стороны; умение в мирное время обеспечивать боевую слаженность подчиненных подразделений и управлять морально-психологическим климатом, и т. д. В соответствие с данными параметрами должна выстраиваться иерархическая система образования: вуз–школа, причем каждое низшее звено на выходе должно обеспечивать результат, соответствующий требованиям более высокого звена.

DEVELOPMENT OF MILITARY EDUCATION  
AS A FACTOR FOR EFFICIENCY ENHANCEMENT  
OF THE RA DEFENSE SYSTEM

*S. M. OHANYAN, Minister of Defense of the RA*

SUMMARY

Education is a process of forming fundamental, including basic special knowledge, ability to think analytically. Therefore, in the Armed Forces of leading countries of the world, the field of military education and personnel management is regarded as the primary factor for ensuring the efficiency of the defense system and combat capability of the Armed Forces. In the US, the system of military education and training meets certain basic requirements, namely it should be comprehensive, systemic, consistent, realistic, effective, unanimous in concept, terms, goals, challenges and opportunities. The features of training are constant tension of the mind, will and body, great attention to physical fitness and its major role in service activity of all categories of personnel; high prestige of service in the Armed Forces, etc.

In this context, the history of development of the military education system in the RA Armed Forces is examined, and the main directions of its development are outlined. The need for a radical review of the approaches to the theoretical and applied comprehension of the development perspectives is emphasized: the requirements should be top-down. In particular, it is necessary to define the qualitative parameters to be met by a future officer of the RA Armed Forces. Those for the tactical level are: profound mastery of the theory and practice of the organization and conduct of modern warfare, ability to orientate oneself in the rapidly changing combat situation and make the right decisions under lack of information; awareness of the strengths and weaknesses of subordinates of the units, ability to competently organize the reconnaissance of forces and positions of the enemy and use their weaknesses; ability to ensure in peacetime combat coordination of subordinates of the units and control moral and psychological atmosphere, etc. In line with these parameters the hierarchical system of education should be designed: higher educational institution–school, and each lower output level should provide a result meeting the requirements of a higher level.

## ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մ. Ա. ՇԻՐԻՆՅԱՆ, ՀՀ ՊՆ Կադրերի և ռազմական կրթության վարչության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական, Ա. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, փոխնախապետ, ՀՀ ՊՆ Կ և ՌԿՎ ՀՀ և օպարերերի պետությունների ՈՒՀ-երում կադրերի պատրաստման բաժնի պետ-վարչության պետի դիրքակալի պաշտոնի ժամանակավոր կապարող, ՀՊՄՀ հայցորդ



«Կադրային քաղաքականությունը այն տեսակետների, սկզբունքների, կանոնների, նորմերի համակարգն է, որոնք սահմանում են անձնակազմի հետ աշխատանքի հիմնական ուղղությունները և ապահովում են մարդկային ռեսուրսի համապատասխանեցումը կազմակերպության ռազմակառության վեհականությանը»<sup>1</sup>: Այն պետք է լինի՝ գիտականորեն հիմնավորված, համալիր ու համակարգային (հիմնված կադրերի հետ աշխատանքի նպատակների, սկզբունքների, ձևերի ու մեթոդների միասնության վրա՝ կադրային հարցերի տարրեր կողմերի (տնտեսական, սոցիալական, քաղաքական, քարոյական, սոցիալ-հոգեբանական և այլն) լուծումների ապահովմանը), հեռանկարային (առաջանցիկ և նախականինից բնույթի), հոգևոր-քարոյական (յուրաքանչյուր ծառայողի մեջ ձևավորի մարդասիրություն և քաղաքացիական-զինվորական պատասխանատվություն իրեն հանձնարարված գործի և անձնական վարքի համար), իրավաչափի (իրականացվող օրենքի շրջանակներում ու դրա հիման վրա, կադրային հարցերի օրյեկտիվ և արդար լուծման իրավական երաշխիքների ստեղծմամբ), արդյունավետ և այլն<sup>2</sup>:

ԱՄՆ-ում սպայակազմի ձևավորման ուղղությամբ կադրային քաղաքականությունը դիտվում է որպես ռազմական շինարարության կարևոր քաղաքականացման, որի գլխավոր նպատակն է բոլոր տեսակների ԶՈՒ-ի պահանջմունքի քավարարությունը բարձր արհեստավարժությամբ ռազմակրթված անձնակազմով ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ: Կադրային քաղաքականություն մշակելիս ռազմական դեկավարությունը որոշակի պահանջներ է ներկայացնում ԶՈՒ-ի համալրման, անձնակազմի պատրաստման ու գործունեության համակարգին, ծառայության պայմաններին ու զինվորական կոչումների շնորհմանը, ինչպես նաև նյութական-կենցաղային ապահովմանը<sup>3</sup>:

<sup>1</sup> E. B. Еремина, В. Н. Регинская. Управление персоналом. Пенза, 2007, с. 7.

<sup>2</sup> Տես նոյն տերում, էջ 9–10:

<sup>3</sup> Տես В. Күжислин. Кадровая политика военного руководства США по формированию офицерского корпуса Вооруженных сил. «Зарубежное военное обозрение», 2001, № 2:

Կադրային քաղաքականության մշակման համար ելակետային են՝ ազգային շահերն ու պաշտպանական քաղաքականությունը, զարգացման տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, ազգային-մշակութային իրողությունները, մասնավորապես՝ նարտական գործողությունների վարման ձևերի, մերոդների ու միջոցների փոփոխման պայմաններում նոր խնդիրներ կատարելու անձնակազմի ունակության ապահովման, ԶՈՒ-ի կենսագործունեության բոլոր ոլորտներում շուկայական տնտեսության տարրերի ներդրման և պետության ռեսուրսների հետ դրանց հաշվեկշռման անհրաժեշտությունը<sup>4</sup>:

ՀՀ պաշտպանության բնագավառում կադրային քաղաքականությունը ձևավորում է ՀՀ Պաշտպանության նախարարը, իսկ իրականացնում են կադրային ծառայությունները (ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչություն, ԶՈՒ-ի ԳԸ կադրերի վարչություն՝ պաշտպանության նախարարի առաջին տեղակալի անմիջական ղեկավարությամբ:

ՀՀ ԶՈՒ-ի կադրային քաղաքականությունն իրականացվում է մի քանի ուղղություններով՝ ամբողջացնելով այն նպատակներն ու խնդիրները, որոնք ուղղված են ԶՈՒ-ի որակական հատկանիշների բարձրացմանը:

Կադրային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է **համալրումը**: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կազմավորման փուլում պատերազմական գործողություններն ստիպում էին նորաստեղծ բանակը շուտափույթ կերպով համարել սպայական կադրերով, որոնք, սակայն, հիմնականում չլունեին ռազմական կրթություն: Այդ էր պատճառը, որ ԶՈՒ-ի ստեղծման առաջին տասնամյակում զինվորական կրթությամբ սպաների թիվը չեր գերազանցում 5 %-ը, մինչդեռ այսօր նրանց թիվը կազմում է գրեթե 55 %:

Ըստ այդմ՝ պաշտպանական համակարգի կադրային քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը սպայակազմի երիտասարդացումն է՝ բարձրագույն ռազմական և բարձրագույն ռազմամասնագիտական կրթությամբ սպաներով համալրմամբ: Այդ գործընթացի հիմքերը դրվել են դեռ 2007 թվականին: Որպես այդ ուղղությամբ տասնամյա գործունեության արդյունք՝ երկարամյա ծառայության դեպքում պահեստագոր է արձակվել անձնակազմի ընդհանուր թիվ 11 %-ը, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում վերջին հինգ տարիներին, մինչդեռ տարիքի հետ կապված՝ նույն ժամանակահատվածի համար արձակվածների թիվը կազմում է 21 %: Գործընթացը շարունակական բնույթ է կրելու:

Ուազնական կրթությամբ երիտասարդներով համալրումից բացի, միջոցներ են ձեռնարկվում նաև զինծառայության մեջ քաղաքացիական բարձրագույն կրթությամբ գորակոչի ենթակա երիտասարդների ներգրավելու ուղղությամբ: Այսպիսում նրանցից են թեկնածուներ՝ ռազմական ինստիտուտների 1-ամյա սպայական դասընթացներում սովորելու համար: Դա հնարավորություն է տալիս նվազագույն ֆինանսական ծախսերով պատրաստելու սպաներ և ԶՈՒ-ի համարելու դասակների ու մարտկոցների կրթված հրամանատարներով:

<sup>4</sup> Концепция кадровой политики в Вооруженных Силах Украины (Утверждена приказом Министра обороны Украины от 27.11.2007, с изменениями) ([http://www.mil.gov.ua/index.php?lang=ru&part=manpower\\_policy&sub=conception](http://www.mil.gov.ua/index.php?lang=ru&part=manpower_policy&sub=conception)).

Կարևորվում է նաև ռազմաքաղական կրթություն ստացած ներուժի օգտագործման խնդիրը: Ռազմաքաղական կրթությունն իրականացվում է ԵՊՀ ՌԴՖ-ում, որի շրջանավարտներին հնարավորություն է տրվում մասնակցելու ՀՀ ՊՆ պատվերով քաղական ուսումնական հաստատությունների օրդինատուրայի ընդունելության մրցույթին: Ռազմական բժիշկները հնարավորություն ունեն վերապատրաստվելու նաև ՌԴ-ում, Զինաստանում և Գերմանիայում:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում վերջին տարիներին ներորպել է քաղաքացիական հասուլ ծառայության համակարգը, ընդունի պաշտոնների համարումը կատարվում է մրցութային կարգով՝ վերապատրաստման և ատեսատավորման նախատեսմամբ:

Կայդերի առավել արդյունավետ ընտրության նպատակով կազմվում են պաշտոնների անձնագրեր: Այդ գործընթացն արդեն ամփոփման փուլում է:

**Ռազմակրթական ոլորտի** վերջին շրջանի կարևորագույն ձեռքբերումներից է ՀՀ Կառավարության 2012 թվականի մարտի 7-ի հմ. 9 արձանագրային որոշումով ընդունված «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգը»<sup>5</sup>: Դրա նախագծի մշակման աշխատանքներին ակտիվ աջակցություն են ցուցաբերել միջազգային փորձագիտական տարրեր խմբեր՝ Կանադայի Թագավորական ռազմական քուեցի պրոֆեսոր, դոկտոր Ջիմ Քարենի և ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի «Ռազմավարական փոխություններ» ծրագրի ղեկավար, վաստակավոր պրոֆեսոր, դոկտոր Ջեյմս Փիգի գլխավորությամբ:

Հայեցակարգը, հիմնվելով ազգային կրթական փորձի և ռազմական կրթության ոլորտում տեղի ունեցող միջազգային զարգացումների վրա, նախանշում է ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունը, գիտական և գիտատեխնիկական կայդերի պատրաստումը, վերապատրաստումը, որակափորումը, ռազմական կրթության բնագավառում ներառյալ կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախավորակոչային պատրաստումը՝ որպես սպաների պատրաստման փուլ:

Հայեցակարգում կան և առանձին դրույթներ, որոնք վերաբերում են՝

1) գիտական և դասախոսական անձնակազմի պատրաստմանը, վերապատրաստնանն ու որակափորման մակարդակի բարձրացմանը,

2) ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների հետ համագործակցությանը՝ ՀՀ Զինված ուժերի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստնան, օտարերկրյա պետությունների գիտակրթական ներուժի օգտագործման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր պետությունների զինված ուժերի հետ փոխգործության ապահովման նպատակով,

3) միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական-անվտանգային քա-

<sup>5</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգ» ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նախագծի հմ. 9 արձանագրային որոշում, հավելված հմ. 1 ([http://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](http://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)):

դաքագիտական բարձրագույն, հետրուհական և լրացուցիչ կրթության կազմակերպմանը:

Հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագրով նախատեսվում է անցկացնել կոնկրետ միջոցառումներ, մասնավորապես՝ ուղղմական կրթության բնագավառի որոշ առանձնահատկությունների հաշվառմամբ կատարել փոփոխություններ և լրացումներ «Կրթության մասին» և «Բարձրագույն հետրուհական կրթության մասին» ՀՀ օրենքներում, ՊՆ համակարգում սպայական կադրերի որակավորման մակարդակի բարձրացման կենտրոնի, ուղղմատումնական հաստատությունների, ենթասպաների դպրոցի և Ազգային ուղղմավարական հետազոտությունների ինստիտուտի վերակազմակերպում, ինչպես նաև հրամանատարաշտարային դասընթացների կազմակերպում:

Տվյալ միջոցառումները սահմանված ժամկետներում ճիշտ և որակով իրականացնելու համար ներկայումս անհրաժեշտ է հավատարմագրել պաշտպանական համակարգում գործող ուղղմակրթական հաստատությունները: Հավատարմագրման գործընթացը ներառում է վերլուծական, ինքնավերլուծական, սոցիոլոգիական հարցման, հաշվետվությունների, ներքին և արտաքին առդիտի ապահովման գործընթացներ:

Ռազմակրթական համակարգի արդյունավետության մեծացման նպատակով կարևոր խնդիրների շարքն է դասվում կրթական ծրագրերի համապատասխանեցումը պետական կրթական շափորչիշներին, որոնք են՝

- ա. ուսումնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը,
- բ. կուրսանութերի ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը,
- գ. շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

Ներկայումս մշակվել են ուղղմատումնական հաստատություններում ուսուցնավոր մասնագիտությունների «քակալավոր» և «մագիստրոս» կրթական աստիճանի որակավորման կրթական շափորչիշների նախագծերը:

Քանի որ ուղղմական կրթության ոլորտը ՀՀ ընդհանուր կրթական համակարգի մի մասն է, ուստի քայլեր են կատարվում այդ համակարգին հնարավորինս ինտեգրվելու ուղղությամբ: Հաջու առնելով ԶՈՒ-ի առանձնահատկությունները՝ 2007–2008 ուսումնական տարվանից մասնակցում ենք ընդունելության միասնական քննություններին՝ կոռուպցիոն ռիսկերը բացառելու և ՌՈՒՀ-երի ընդունելության գործընթացն առավելագույն բափանցիկ դարձնելու նպատակով: Դրան է ուղղված նաև ՀՀ Կառավարության որշմամբ հաստատված «ՀՀ ուղղմատումնական հաստատություններում ընդունելության և օտարերկրյա պետությունների ուղղմատումնական հաստատություններում սովորելու համար բեկնածուների ընտրության կարգը», որը հնարավորություն է ընձեռում բացառելու չկանոնակարգված գործողությունները:

Կարևոր ձեռքբերումներ կան կրտսեր հրամանատարական կազմի (սերժանտների) պատրաստման համակարգում: Սերժանտական կազմի պատրաստման համակարգի ներդրման նպատակը մեկն է՝ պատրաստել կրտսեր հրամանատարի, որը վաղը կդառնա առաջավար: Բացի տեսական ու գործնական գիտելիքներից, կրտսեր հրամանատարը պետք է ունենա մանկավար-

ժական հմտություններ ու փորձ: Սա տևական և հետևողական ջանքեր պահան-ջող գործընթաց է, որի իրականացման համար ուսումնասիրվում է առաջավոր երկրների փորձը, շարունակվում են ուսումնական ծրագրերի մշակման աշխա-տանքները, որոնց առանցքն են ՆԱՏՕ/ԳՀԽ ծրագրերի դրույթները\* և այդ ծրագրերին պարբերական թիմային մասնակցությունները: Այս գործում մեծ օգնություն է ցուցաբերում փորձագիտական խումբը՝ կազմված ԱՄՆ-ի պաշտ-պանության դեպարտամենտի, ԱՄՆ-ի Եվրոպական հրամանատարության ծո-վային հետևակի և Մոնթելիսանիայի պաշտպանության նախարարության ներ-կայացուցիչներից, մասնավորապես՝ դոկտորներ Հարրի Թինի, Ռոբերտ Մակ-նարի, Ռանդալ Սալիվանի և ուրիշների մասնակցությամբ: Քննարկումները չեն սահմանափակվում նրանց այցելություններով, այլ շարունակվում են համացան-ցի միջոցով:

2007 թվականին ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների համար կազմակերպվել է օտար լեզուների ուսուցում (ՕԼՈՒ): Դա հնարավորություն է տալիս հափոր պատշաճ մասնակցելու համագործակցող երկրների ներկայացուցիչների հետ երկնող փորձագիտական հանդիպումներին և սեմինարներին, ապահովում է նաև օտարերկրյա պետություններում տարբեր կրթական ծրագրերին մասնակ-ցության հնարավորությունը: ՕԼՈՒ կենտրոնի զարգացման նպատակով համա-գործակցել ենք Լեզվի միջազգային համագործակցության բյուրոյի (BILC) հետ՝ միջազգային թեստավորման համակարգի ներդրման, դասախոսների վերա-պատրաստման, գրականության, տեսանյութերի, ուսումնական օժանդակ նյու-թերի տրամադրման հարցերով: ՀՀ-ում ՌԴ, ԱՄՆ-ի, Հունաստանի դեսպանութ-յունների և Բրիտանական խորհրդի (BC) կողմից կահավորվել են լսարաններ և տրամադրվել սարքավորումներ: Այդ ամենը հնարավորություն է ընձեռում առավելագույնս արդյունավետ կերպով լուծելու ուսումնական գործընթացի մերուդարձանական խնդիրները: Իրանի դեսպանությունը նախատեսում է մինչև 2012 թ. վերջը ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտում վերա-բացել պարսկերնեն լեզվի լսարանը:

Վերջին երկու տարիների միջազգային ուազմական համագործակցության շնորհիվ ուազմական կրթության ոլորտը զարգացման մեծ առաջնորդացությաց է ապրել: Ավելացվել է նաև Չինաստանի ժողովրդապատրական բանակի ՌԴՌՀ- երում վերապատրաստվող միջին օղակի սպաների թվաքանակը: Խաղաղապահ առաքելություն իրականացնելու համար սպաների պատրաստման հարցում զգայի օգնություն է ցուցաբերում Հունաստանը:

**Սպայական կադրերի կառավարման համակարգի կատարելագործման նպատակով հաստատվել է «ՀՀ ՊՆ կենտրոնական որակավորման հանձնա-ժողովի կողմից բարձրագույն և ավագ սպայական կազմների որակավորում անց-կացնելու կարգը»: Բարձրագույն և ավագ սպայական կազմների որակավորումը հնարավորություն է տալիս ստեղծելու պաշտոնների առաջնադաշտական ռեզերվ,**

\* ՀՀ ԶՈՒ-ի ուսումնական ծրագրերի մշակման համար ուղեցույց են ծառայում ՆԱՏՕ/ԳՀԽ պրոֆեսիոնալ ուազմական կրթության տիպային կողմնորոշչները:

որից լնարկում են թեկնածուներ՝ ԶՈՒ-ն ակադեմիական կրթությամբ սպաներով ապահովելու համար:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնում ՀՀ ԶՈՒ-ի սպաները հնարավորություն ունեն տարրեր մասնագիտությունների գծով իրենց ռազմամասնագիտական որակավորման մակարդակը բարձրացնելու Միջազգային փորձագիտական խմբերի աջակցությամբ վերանայված ուսումնական ծրագրերով:

ՀՀ ռազմակրթական համակարգում գերակա խնդիր է այլովենտրարասախոսական կազմի ձևավորումը: ՈՒսադի կրթության պատշաճ մակարդակի ապահովման նպատակով կատարվում են գիտականորեն հիմնավորված աշխատանքներ՝ ուղղված ՀՀ ՊՆ Ռ-ՌՀ-երի դասախոսական կազմի վերապարաստմանն ու որակավորմանը, այդ թվում նաև ՌԴ ռազմառումնական հաստատություններում:

Այսպիսով՝ հստակ ու նպատակային կադրային քաղաքականության իրականացման դեպքում կադրերի պլանավորված պատրաստումը լիովին կհամապատասխանի ՀՀ պաշտպանական համակարգի զարգացման պահանջներին՝ բանիմաց և որակյալ կադրերով Զինված ուժերի համարման ապահովմամբ:

## **ТЕНДЕНЦИИ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ КАДРОВОЙ ПОЛИТИКИ В ОБОРОННОЙ СИСТЕМЕ**

*М. А. ШИРИНЯН, начальник Управления кадров и военного образования МО РА,  
советник 1-ого класса СГС, А. В. АКОПЯН, подполковник, начальник отдела  
подготовки кадров в УЗ РА и зарубежных стран Управления кадров  
и военного образования МО РА*

### **РЕЗЮМЕ**

За последние два года в кадровой политике в ВС РА, включающей сферы комплектования, подготовки кадров и управления кадрами, при консультационной поддержке экспертов из НАТО, в первую очередь США и Канады, произошли динамичные преобразования, нацеленные на обеспечение ВС высококвалифицированными кадрами. В частности: был начат процесс омоложения офицерского состава за счет кадров с высшим военным и военно-специальным образованием, а также привлечения к службе лиц с высшим специальным гражданским образованием; внедрен институт особых гражданских служащих; в рамках Болонского процесса разработаны и внедрены передовые стандарты и параметры высшего военного образования, а также подготовки унтер-офицерских кадров с созданием профессионального сержантского состава; организована регулярная переподготовка преподавательского состава ВВУЗ-ов, в том числе в зарубежных вузах; осуществляется интеграция системы военного образования с системой высшего образования республики; при методологической поддержке Национального Университета Обороны и Гарвардского универси-

тета США разработан и утвержден pilotный проект трансформирования ИНСИ МО РА в Национальный университет обороны МО РА, путем совмещения научной и образовательной составляющих обеспечивающий оборонно-безопасностную политологическую подготовку кадров для высшего безопасностного руководящего состава республики и резерва для него; с учетом передового международного опыта разработаны и внедрены транспарентные механизмы продвижения по службе на базе переподготовки по результатам аттестации и т. д.

## THE IMPROVEMENT TRENDS OF THE PERSONNEL POLICY IN THE DEFENSE SYSTEM

*M. A. SHIRINYAN, Chief of the Personnel and Military Education Department,  
MOD, RA, SCS 1st Degree Advisor, A. V. HAKOBYAN, Lieutenant-Colonel,  
Head of the Personnel Training Branch in Educational Institutions of the RA  
and Foreign Countries, Personnel and Military Education Department, MOD, RA*

### SUMMARY

Over the past two years in the personnel policy of the RA Armed Forces, including the spheres of recruitment, training and management of the personnel, with the advisory support of experts from NATO, primarily the US and Canada, there occurred dynamic changes aimed at providing the Armed Forces with highly qualified personnel.

In particular, the rejuvenation process of the commissioned staff was initiated on account of personnel with higher military and military-specialized education, as well as of the involvement in the service of people with higher specialized civil education; the institution of special civil servants was introduced; within the framework of the Bologna Process the advanced standards and parameters of higher military education, as well as of the training of non-commissioned officers with the establishment of professional non-commissioned staff were developed and implemented; regular refresher courses are organized for the faculty of higher military educational institutions, also at foreign universities; the system of military education is being integrated into the system of higher education of the Republic; with the methodological support of the US National Defense University and Harvard University, the pilot project of transforming the INSS, MOD, RA into the National Defense University, MOD, RA was developed and approved, through combining academic and educational components ensuring defense security policy training of the top security executives of the Republic and the reserve for it; with a view to international best practices, transparent mechanisms of promotion on the basis of retraining by the results of efficiency report were developed and introduced, etc.

**ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՀՀ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԶՈՒ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ**

*Ժ Հ ԱՄԻՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ պաշտպանական  
քաղաքականության վարչության պաշտպանական քաղաքականության  
պլանավորման բաժնի պետի փեղակալ*



ԶՈՒ-ի զարգացման ընթացքում առաջ է գալիս ռազմական արվեստում (դրկտրինում), կազմակերպական կառուցվածքում, մարտական պատրաստման, ղեկավարման ու նյութական ապահովման, անձնակազմի կառավարման համակարգերում, ենթակառուցվածքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն<sup>1</sup>: Այդ ոլորտներից երեքում (մարտական պատրաստություն, ղեկավարում, անձնակազմի կառավարում) ցանկալի արդյունքների հասնելու, ինչպես նաև երկուսի (ռազմարվեստ, կազմակերպական կառուցվածք) զարգացմանը նպաստելու համար կարևոր միջոցներ են ռազմակրթական և անձնակազմի կառավարման ոլորտների համապատասխան բարեփոխումները: Հայաստանի Հանրապետության ԶՈՒ-ում այդ բարեփոխումներն իրականացվում են միջազգային ռազմական համագործակցությամբ:

Բանակաշինության գործնքացը սկսելով զրոյից՝ ՀՀ Զինված ուժերն ստիպված էին պատերազմի, կայացման ու որակական առաջընթացի (1992–2007 թթ.) փուլերում ռազմական կրթության և անձնակազմի կառավարման, ինչպես և այլ ոլորտներում առաջնորդվել Խորհրդային բանակում կիրառված լրացներով: Այս ժամանակահատվածում ՀՀ ԶՈՒ-ն անզնահատելի օժանդակություն ստացավ Ռուսաստանի Դաշնությունից, որի ռազմակրթական հաստատություններում ուսանել և ուսանում են հայ կուրսանտների մի գգալի մասը և ավագ ու բարձրաստիճան սպայակազմի գերակշիռ մեծամասնությունը: Եվ եթե մինչ օրս մի շարք մասնագիտությունների բնակչության ավելացման շնորհիվ հետզհետեւ աճում է նախնական զինվորական կրթության տիրույթում ՀՀ ՌՈՒՀ-երի՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական և մարշալ Ա. Խանիկյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտների ներդրումը, ապա ավագ և բարձրաստիճան սպայակազմի պատրաստման գործում մինչ օրս Հայաստանը կախված է արտերկրի, իիննականում՝ Ռուսաստանի օգնությունից:

2008 թ. ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման մեջնարկն ազդարենց Հայաստանում բանակաշինության նոր՝ բարեփոխումների փուլի սկիզբը: Դրանք իրականացվում էին նաև ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտներում: Այստեղ բարեփոխումները միտքած էին

<sup>1</sup> Տես «ԱՄՆ-ի ցամաքային զորքերի դաշտային կանոնադրություն» (FM-1), 2005, գ. 4 (<http://www.army.mil/fm1/chapter4.html>):

ոազմական կրթությունը և անձնակազմի կառավարումը միջազգային արդի չափանիշներին համապատասխանեցնելուն, ոազմական կրթության ոլորտում Հայաստանի ինքնարավության աճմանը, ինչպես նաև Զինված ուժերում պայմանագրային (պրոֆեսիոնալ) սերժանտների հաստատության ստեղծմանը: Միևնույն ժամանակ, ՀՀ ՊՆ-ն պես է կարևորել այս ոլորտներում ընթացիկ կարիքների բավարարումը՝ խուսափելով այնպիսի իրավիճակից, երբ արմատական վերափոխումները ուշադրությունը կշեղեին ընթացիկ խնդիրների լուծումից՝ խարիսխելով գրյուրյուն ունեցող համակարգը և դրանով իսկ նվազեցնելով Զինված ուժերի մարտունակությունը: Ասպիսով՝ առկա էր երկընտրանք՝ ձեռնամուխ լինել սրբնաց բարեփոխումների, բայց հարցականի տակ դնել առկա համակարգի գործունակությունը, կամ ցուցաբերել զգուշավոր նոտեցում՝ դանդաղորեն իրագործելով փոփոխությունները, սակայն կանգնելով զարգացնան միջազգային միտումներից անդառնալիորեն հետ մնալու վտանգի առջև:

Տվյալ հարցում պաշտպանության նախարարությունը ցուցաբերեց թերևս առավել կշռադատված նոտեցումը, այն է՝ բարեփոխումներն իրականացնել ոչ թե տարերայնորեն և ամրող սպեկտրով, այլ փուլ առ փուլ և առանձին ուղղություններով՝ դրական արյունքների հիմքի վրա ընդլայնելով փոփոխությունների շրջանակը: Առկա համակարգի պահպանամ անհրաժեշտության և նորի ստեղծման հրատապության միջև հավասարակշռության ապահովման ևս մեկ գրավականն այն էր, որ ի շահ բարեփոխումների՝ նոյն կերպ ուղղորդվեց նաև միջազգային ռազմական համագործակցությունը: Մի կողմից՝ պաշտպանության նախարարությունը շարունակեց ապավիճել Ռուսաստանի Դաշնության օժանդակությանը՝ որպես արտերկրում ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի պատրաստման զիսավոր աղյուրի: Մյուս կողմից՝ որոշում կայացվեց ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտների բարեփոխումներում հիմնականում կիրառել արևմտյան պետությունների փորձը, որը կուտակվել էր տասնամյակների, նոյնիսկ դարերի ընթացքում և օգտագործվում էր նաև ՌԴ ԶՈՒ-ի համապատասխան բարեփոխումներում: Նման մոտեցումը հնարավորություն էր տախիս հասու լինելու խորհրդատվության «սկզբնաղբյուրից» և ունակ լինելու գործընկեր երկրներում նոր լուծումների երևան զալուն պես համապատասխան շտկումներ կատարելու հայրենական բարեփոխումներում:

ՀՀ ԶՈՒ-ի ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտների բարեփոխումների վերաբերյալ ՆԱՏՕ-ի անդամ պետություններից խորհրդատվության ստացման համար լավ նախադրյալ էր ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, որում մեծ տեղ էր հատկացվում նշված հարցերին: Հիմնվելով ԱԳԳԾ փաստաթղթում առկա հանձնառությունների և օժանդակության պարտակորությունների վրա՝ ՀՀ ՊՆ-ն 2008 թ. գարնանը Հայաստան հրավիրեց ՆԱՏՕ-ի միջազգային քարտուղարության մասնագետների խումբը՝ ՀՀ ԶՈՒ-ի ռազմական կրթության ոլորտի բարեփոխումներին Հյուսիսաստլանայան Դաշինքի անդամ երկրների հետ համագործակցության ուղիները նախանշելու համար: Որպես արյունք՝ 2009 թ. սկզբին ՀՀ ՊՆ-ն ՆԱՏՕ-ի հետ համաձայնեցրեց ՀՀ ռազմակրթական բարեփոխումների աշխատանքային

ալլանը, որում տեղ գտան բարեփոխումների հետևյալ ենթահարցերը. ռազմակրթական հայեցակարգի մշակում, կրտսեր սպայակազմի (ավագ լեյտենանատից մինչև մայոր) որակավորման բարձրացման ծրագրի (դասընթացների) արդիականացում, ավագ սպայակազմի (մայորից մինչև զնդապետ) հրամանատարաշտարային դասընթացների ստեղծում (որոնց հիման վրա հետազյում պետք է ստեղծվեր հրամանատարաշտարային ակադեմիա), պայմանագրային (արդյունաբանական սերժանտական կազմի պատրաստման ուսումնական ծրագրերի կատարելագործում, հեռավար տարարաշխված (ինտերնետային) ուսուցման հնարավորությունների ստեղծում, ռազմակրթական բնագավառում Բոլոնիայի գործընթացի շափանիշների ներդրում և քաղաքացիական ու ռազմական ԲՈՒՀ-երի միջև համագործակցության ամրապնդում, ռազմակրթական համակարգում ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում կրթական բաղադրիչի զարգացում, ՊՆ քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստման ուսումնական ծրագրի կատարելագործում: Այս ենթահարցերում խորհրդատվության ապահովման նպատակով ՆԱՏՕ-ի հովանու ներքո ձևավորվեց միջազգային փորձագիտական խումբ, որին այս տարիների ընթացքում իրենց մասնակցությունն են քերել Կանադայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Լեհաստանի, Չեխիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Լիխտվայի ներկայացուցիչները:

Զուգահեռաբար, 2011 թ. երկրող կեսին, հիմնվելով ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման եղբափակիչ արդյունքների վրա, երկկողմ ռազմական համագործակցության շրջանակներում ՀՀ ՊՆ-ն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմական գերատեսչությունների հետ համաձայնություն ձեռք բերեց ՀՀ ՉՈՒ-ի անձնակազմի կառավարման ոլորտի բարեփոխումներին օժանդակող համատեղ խորհրդատվական խումբ ստեղծելու մասին: Խումբը ՀՀ ՊՆ-ին խորհրդատվություն է տրամադրում սերժանտական կազմի հաստատության զարգացման, ինչպես նաև անձնակազմի կառավարման ոլորտում համընդգրկում բարեփոխումների վերաբերյալ (անձնակազմի հավաքագրում, վերապատրաստում, որակավորում, դրամական բավարարում, ծառայողական ուղեգիծ, կոչումային և պաշտոնեական առաջխաղացում, սոցիալական ապահովում, ծառայությունից արձակման և թոշակավորման ընթացակարգեր):

ՀՀ ՊՆ ուղղորդմանք միմյանց միջև ջանքերի փոխլրացման բարձր մակարդակի հասած երկու խորհրդատվական խմբերի աջակցության շնորհիվ ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտների բարեփոխումների համար պատասխանատու ՀՀ ՊՆ համապատասխան աշխատանքային խմբերը հաշվետու ժամանակահատվածում ունեցել են նշանակալի առաջընթաց, այդ թվում,

1. մշակվել և հաստատվել է ՀՀ ռազմակրթական հայեցակարգը, որը՝ որպես ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ, սահմանելով զինվորական անձնակազմի կայացման փուլերը, նախանշում է Հայաստանում այս ոլորտի երկարաժամկետ զարգացման ուղիները<sup>2</sup>,

<sup>2</sup> Տես «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգ» ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի

2. կատարելագործվել են ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում գործող սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնի ուսումնական ծրագրերը: Նախկինում կենտրոնում գործում էին գումարտակի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի, սպառագինության և թիկունքի գծով տեղակաների համար նախատեսված վերապատրաստման առանձին դասընթացներ, որոնք, շրջանավարտներին տալով սահմանափակ ոլորտի գիտելիքներ, նեղացնում էին նրանց ծառայողական առաջնորդացի (կարիերայի) շրջանակները: Այժմ նախկին 3 դասընթացները միավորվել են՝ կազմելով մեկ միասնական հաստիքապաշտոնային «մայոր», կամ այլ կերպ ասած՝ կրտսեր շտաբային սպաների դասընթաց, որը ավելացված ժամաքանակի և հարստացված առարկայացանուկի շնորհիվ ապահովում է գումարտակի և գնդի տարբեր ծառայությունների սպաների լիարժեք վերապատրաստումը,

3. ընթացքում են ՀՀ ԶՈՒ-ի ավագ սպայակազմի հրամանատարաշտարային դասընթացների և դրանց հիման վրա՝ ակադեմիայի ստեղծման աշխատանքության նպատակը և խնդիրները: Մշակվել է դասընթացների նախնական մոդել, որում ներառվել են հաստատության նպատակը և խնդիրները, դիմորդներին, շրջանավարտներին և պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջմերը: Մշակվել է նաև դասընթացների ուսումնական ծրագրի նախագիծը, որն անցել է միջազգային խորհրդատվական խմբի փորձաքննությունը: Նախատեսվում է դասընթացները մեկնարկել 2013 թ. սեպտեմբերին,

4. շարունակվում են ՀՀ ԶՈՒ-ի պայմանագրային սերժանտական կազմի գարգացման աշխատանքները: Պայմանագրային սերժանտների հաստատությունն ամրագրվել է ՀՀ ԱԺ-ի ընդունած «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագծում: Սերժանտական նոր համակարգը ավելացված գործառությունների և բանհմացության շնորհիվ դառնալու է սպայական և շարքային կազմերի միջև միջանկյալ օղակ՝ շարքայինների հետ մշտական շփոմների շնորհիվ հասու լինելով նրանց խնդիրներին և դրական ազդեցություն գործելով կարգապահության ամրապնդման վրա: Բացի այդ, պայմանագրային սերժանտները, որոնք անցնելու են ծառայողական առաջնադաշտական ուղևորություն, տարիների ընթացքում կուտակելու են գինվորական մասնագիտության գծով խոր գիտելիքներ՝ դրանք կիրառելով ինչպես մարտական պատրաստման պարապմունքների, այնպես էլ մարտի ժամանակ և այս կերպ դառնալով հրամանատարների անփոխարինելի օգնականներն ու նպաստելով բանակի ընդհանուր մարտունակության բարձրացմանը,

5. շարունակվում են ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը ՀՀ Պաշտպանական ազգային համալսարանի կերպափոխներու աշխատանքները: Նոր հաստատությունում, որում սերտորեն համադրվելու են գիտական և կրթական բաղադրիչները, գործելու են ռազմավարական մա-

նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ. 1 ([https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)):

կարդակի վերապատրաստման միջգերատեսչական դասընթացներ՝ նախատեսված ՀՀ պաշտպանության և անվտանգության հարցերում շահագրգիռ պետական կառավարման մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչների համար<sup>3</sup>: 2012 թ. հունիսին ՀՀ պաշտպանական ազգային համալսարանի ճանապարհային քարտեզի գործարկման շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարությունում անցկացվեց ուղղմավարական խաղաղամիջնամյակ:

Սակայն ուղղմակրթական ոլորտում միջազգային ուղղմական համագործակցությունը չի սահմանափակվում առայլ Հայաստանի համապատասխան բարեփոխումներին արտերկրի փորձագիտական և խորհրդատվական աջակցմամբ: 2009 թվականից ի վեր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն իրենց ավանդն են բերում Գործընկերություն հանուն խաղաղության (ԳՀԽ) ծրագրի շրջանակներում համատեղ ուսումնական ծրագրերի մշակման գործում: Մասնավորապես՝ հայ սպաները մասնակցել են սպայակազմի պյուֆեսիոնալ ուղղմական կրթության տիպային կողմնորոշիչ ուսումնական ծրագրի մշակման աշխատանքներին: Տվյալ ուսումնական ծրագրը, որը հաստատվել է 2011 թ., տարբեր երկրների ուղղմակրթական հաստատությունների ուսումնական ծրագրերը կազմելու ուղեցույց է, որն ապահովում է ծրագրերի օպերատիվ համատեղելիությունը:

Սպայակազմի ուսումնական ծրագրի մշակման ավարտից հետո աշխատանքներ են կատարվում սերժանտական կազմի համար նման ծրագրի մշակման ուղղությամբ: Դրանց նույնականացումը են ՀՀ ՊՆ ներկայացուցիչները:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ակտիվորեն համագործակցում է նաև պաշտպանական ակադեմիաների և անվտանգության հետազոտությունների ինստիտուտների Գհիւ կոնսորցիոնի հետ՝ ապահովելով կոնսորցիոնի կազմակերպած և ուղղմական կրթության առավել հրատապ հարցերին նվիրված աշխատաժողովներին ու համաժողովներին Հայաստանի պատվիրակների մշտական մասնակցությունը: Համագործակցության վառ օրինակ է 2012 թ. հունիսին Գհիւ կոնսորցիոնի կրթության ոլորտի մասնագետների ամենամյա 6-րդ համաժողովի հյուրընկալությունը Երևանում<sup>4</sup>:

Կարենի է փաստել, որ ինչպես ՀՀ այլ պաշտպանական, այնպես էլ ուղղմակրթական և անձնակազմի կառավարման ոլորտներում ընթացող բարեփոխումները ևս կրում են «Երկկողմանի ճանապարհի» բնույթ, երբ ստանալով առաջադիմական միջազգային խորհրդատվություն՝ Հայաստանն անհրաժեշտության դեպքում այն փոխանցում է այլ երկրների՝ առաջին հերթին դաշնակից և գործընկեր պետություններին:

<sup>3</sup> Տես < U. Քորանջյան, Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային ուղղմակրթական հետազոտությունների ինստիտուտի փուլային կերպավոխումը Պաշտպանական ազգային համալսարանի: «ՀԲ», 2010, հմ. 1:

<sup>4</sup> «Նոր ուսանողներ, նոր մեթոդներ և նոր գնահատականներ», 13.06.2012 (<http://www.mil.am/1339568487/date/2012-06-13>), Ասկ՝ «ՊՆ-ում մեկնարկել է կրթության ոլորտի մասնագետների 6-րդ համաժողովը»: «armtown.com», 13.06.2012 (<http://www.armtown.com/news/am/pan/20120613/111609/>):

Այսիսով՝ ԶՈՒ-ի մարտունակության մեծացման երկու կարևոր միջոցներից են ռազմական կրթության և անձնակազմի կառավարման համակարգերի կատարելագործումը: Այդ միջոցների համար ՀՀ պաշտպանության նախարարությունն ընտրել է 2 միջանկյալ եղանակ՝

1. ռազմական գործընկերող՝ ՌԴ-ի հետ համագործակցության խորացում՝ այս երկու ոլորտներում առկա ձեռքբերումներն ավելի անրապնդելու նպատակով,

2. համագործակցություն արևմտյան պետությունների հետ՝ այս երկու ոլորտներում առկա միջազգային առաջադիմական փորձին «սկզբնաղբյուրից» իրազեկ լինելու նպատակով:

Այս եղանակները զուգամիտում են՝ առաջ բերելով մեկ միասնական եղանակ, այն է՝ ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտների հայաստանյան ուրույն նորելի ստեղծում ու կիրարկում մի մոդելի, որն առավել հարմարեցված կլինի մեր իրականությանն ու պայմաններին:

Թեպետ ռազմական կրթության և անձնակազմի կառավարման համակարգերը առանձին ոլորտներ են, սակայն դրանք անքակտելիորեն փոխկապված են միմյանց հետ: Եթե կրթության նպատակն է պատրաստել որակյալ մասնագետների, ապա անձնակազմի կառավարման նպատակը նրանց ճիշտ տեղում, ճիշտ պահին և ճիշտ թվով օգտագործելն է: Եթե կրթությունն ապահովում է քանինացություն, ապա անձնակազմի ճիշտ կառավարումն ապահովում է շարժադրավորում: Միայն քանինացության և շարժադրավորման համադրումն է հանգեցնում բարձր կատարողականության:

## РОЛЬ МЕЖДУНАРОДНОГО СОТРУДНИЧЕСТВА В РЕФОРМИРОВАНИИ СИСТЕМ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ И УПРАВЛЕНИЯ ЛИЧНЫМ СОСТАВОМ ВС РА

Ж. А. АМИРХАНЯН, подполковник, заместитель начальника отдела планирования  
оборонной политики Управления обороны политики МО РА

### РЕЗЮМЕ

Реформирование систем военного образования и управления л/с ВС в РА осуществляется поэтапно по отдельным направлениям с расширением спектра изменений на основе достигнутых на каждом этапе положительных результатов. Залогом обеспечения сбалансированности реформ стало международное военное сотрудничество в данной сфере. Оно осуществляется как в форме консалтинговой поддержки в рамках «ПДИП Армения–НАТО», так и путем учебы армянских военнослужащих в военных учебных заведениях РФ, США, КНР, ФРГ и других стран, что позволяет на национальной основе синтезировать современные западные и российские концепции. За последние 2 года при активной консалтинговой поддержке специалистов из Канады, США, Великобритании, Австрии, Швецарии, Польши, Чехии, Румынии, Болгарии, Литвы были осуществлены: разработка кон-

цепции военного образования и программы повышения квалификации младшего офицерского состава; внедрение в систему высшего военного образования критериев Болонского процесса; разработка «пилотного» проекта преобразования Института национальных стратегических исследований в Национальный университет обороны МО РА; создание командно-штабных курсов с перспективой их преобразования в Командно-штабную академию; усовершенствование учебных программ подготовки сержантского состава; создание возможностей для дистанционного обучения и т. д.

## THE ROLE OF INTERNATIONAL COOPERATION IN REFORMING THE SYSTEMS OF MILITARY EDUCATION AND PERSONNEL MANAGEMENT OF THE RA ARMED FORCES

*Zh. H. AMIRKHANYAN, Lieutenant Colonel, Deputy Chief of the Branch of Defense Policy  
Planning, Department of Defense Policy, MOD, RA*

### SUMMARY

The reforming of the systems of military education and personnel management of the RA Armed Forces is gradually under way in separate areas by broadening the range of changes based on the positive results achieved at each phase. International military cooperation in this field became the pledge to ensure balance of the reforms. It is implemented in the form of advisory support within the Armenia-NATO IPAP, as well as through education of Armenian servicemen in military educational institutions of Russia, the US, China, Germany and other countries, which makes it possible to synthesize the contemporary Western and Russian concepts on the national basis. Over the last 2 years, with the active advisory support of the experts from Canada, the US, the UK, Austria, Switzerland, Poland, Czech Republic, Romania, Bulgaria, Lithuania the following was implemented: elaboration of the concept of military education and the qualification improvement program for junior officers; introduction of the Bologna process criteria in the system of higher military education; development of the pilot project of transforming the Institute for National Strategic Studies into the Armenian MOD, National Defense University; establishment of command and staff courses with a view to transforming them into the Command and Staff Academy; improvement of training programs for Non-Commissioned Officers (NCOs); setting up of distance learning capabilities, etc.

## ՀՀ ՊՆ Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՂՈՒՄ

Մ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, գեներալ-լեյտենանդ, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան  
ռազմական ինստիտուտի պետ, Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, գնդապետ,  
ֆիզիկամաթեմատիկական գիտուրյունների բեկմածու, դոցենտ,  
ինստիտուտի պետի՝ գիտուրյան գծով պետակալ\*



Ժամանակակից բարձրագույն ռազմական կրթությունը պետք է զարգանա դիմամիլիոնն և պատրաստ լինի ճիշտ արձագանքելու ռազմաքաղաքական ոլորտում սպասվող գործնարարության: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե հաշվի են առնում ժամանակակից աշխարհաքաղաքական բոլոր զարգացումները, դրանցից բխող մարտահրավերները, ժամանակակից ռազմավարական մտածելակերպի եռթյունը և դրա ձևավորման մեխանիզմները: Ակնհայտ է, որ ժամանակակից միջազգային անվտանգությունը փխրուն է, և դրա պահպանումը բազմակողմանի միջազգային համագործակցություն է պահանջում:



Նման իրավիճակում պետությունների առաջնային խնդիրներից մեկն է դառնում համբուղականուր ռազմական մտածողության ձևավորմանը նպաստելը՝ իրենց ազգային շահերի գերակայությամբ:

Որպես նման զարգացումների հետևանք՝ առանձնակի կարևորություն են ստանում ռազմակրթական համակարգերի արդիականացման, կրթական ծրագրերի և ուսումնական պլանների արդյունավետության նեճացման խնդիրները: Ռազմակրթական համակարգի հիմնական նպատակը դառնում է այնպիսի կադրերի պատրաստումը, որոնք ի վիճակի լինեն կողմնորոշվելու ժամանակակից թե՛ տեխնիկական, թե՛ քաղաքական զարգացումների լարիթիմքում: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ինչպես տվյալ պետության գինվորական և քաղաքական կառույցների համագործակցության, այնպես էլ տարբեր պետությունների միջապետական գործընկերության դերը:

Հայաստանի Հանրապետության ռազմակրթական համակարգն սկսել է ձևավորվել ընդամենը 18 տարի առաջ՝ բարձրագույն գինվորական բազմա-

\* Հողվածի համար հիմք է ծառայել նաև ինստիտուտի պետի՝ ուսումնական մասի գծով տեղակալ գնդապետ Խ. Խաչատրյանի տեղեկատվությունը՝ բակալավրի ու մագիստրոսի համար չափանիշների ու չափորոշչների ճշակման, հրամանատարաշտարային դասընթացների, հավատարմագրման գործընթացի, ՍԿՈՐԿ-ում ընթացող բարեփոխումների վերաբերյալ:

<sup>1</sup> See Graeme P. Herd. Security. «Political Issues in the World Today». Ed. by D. N. MacIver. Manchester, 2004, chap. 1, PP. 17–32:

բնույթ իրամանատարական ուսումնարանի հիմնադրմամբ (ԲԶԲՀՈՒ), ապա օրգանացիա կապված լինելով ոուսական ոազմակրթական համակարգի, զինամքերը ու ոազմարվեստի ավանդույթների հետ՝ միջազգային համագործակցությամբ ձեռնարկել միջոցառումներ միջազգայնորեն ընդունված շափանիշների ներդրման ուղղությամբ: Այս առումով շատ դիպուկ է արտահայտվել ՀՀ Պաշտպանության նախարարն իր «XXI դարի բանակը» գրքում. «...մեզ համար, անշուշտ, հոյժ կարևոր խնդիր է սեփական փորձի ուսումնասիրությանը զուգահեռ հասուն ուշադրություն դարձնել նաև աշխարհի տարրեր երկրների զինված ուժերի զարգացման դինամիկային, առանձնացնել դրանցում տեղ գտած լավագույնը և այն հնարավորինս տեղայնացնել մեր պայմաններից բխող պահանջների հաշվառումով: Բանակների ստեղծման և կայացման օրինաչափությունը հուչում է, որ հզոր ու մարտունակ են այն պետությունների զինված ուժերը, որոնք իրենց գործունեության հիմքում դնում են ոչ միայն ազգային, այլ նաև համաշխարհային զինական արժեքների կիրառման պրակտիկան»<sup>2</sup>:

Վերջին երկու տարում ՀՀ ոազմակրթական համակարգում բուռն գործընթացներ են ծավալվել ՀՀ ԶՈՒ-ի զարգացման պլանի համատեքստում: Այս տարի կառավարության կողմից հաստատվել են ՀՀ ոազմակրթական հայեցակարգը, սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը և ՀՀ ոազմական կրթության հայեցակարգի պահովման միջոցառումների ծրագիրը, որոնք կուղղորդեն ՀՀ ոազմակրթական համակարգի զարգացումը հետագա տարիներին:

Նշանակալի ձեռքբերումներ կան նաև ՀՀ Զինված ուժերում պայմանագրային սերժանտական կազմի պատրաստման ու ներդրման նպատակով միջազգային մասնագիտական խմբերի հետ իրականացվող համագործակցության ոլորտում: Ինստիտուտում պատրաստվող սպաների և ապագա հրամանատարաշտարային ակադեմիայի ունկնդիրների համար մշակվել են «Մոտոհրածգային ստորաբաժանումների կառավարում», «Հետանային ստորաբաժանումների կառավարում», «Ինժեներասակրագորային ստորաբաժանումների կառավարում», «Հետախուզական ստորաբաժանումների կառավարում», «Տանկային ստորաբաժանումների կառավարում» մասնագիտությունների բարձրագույն ոազմական կրթության «Ուազմական կառավարման բակալավր»՝, «Միավորումների, գորամասերի կառավարում» մասնագիտության բարձրագույն ոազմական կրթության «Ուազմական կառավարման մագիստրոս» որակավորման պետական չափորոշչների նախագծերը: Դրանք քննարկել են ԲԿ-ների, ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳԸ վարչություններն ու առանձին բաժինները, ինչպես նաև ոազմական կրթության «Ուազմական կառավարման մագիստրոս» որակավորման պետական չափորոշչների նախագծերը: Դրանք քննարկել են ԲԿ-ների, ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳԸ վարչություններն ու առանձին բաժինները, ինչպես նաև ոազմական կրթության՝ ՀՀ ՊՆ գործուղված արտահմանայան փորձագետները: Քննարկումների ժամանակ հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է կրթարաժինների, դասավանդվող առարկաների ընտրության, ինչպես նաև «Ուազմական կառավարման բակալավրի» և «Ուազմական կառավարման մագիստրոսի» պատրաստման մակարդակներին ներկայացվող պահանջների վրա: Այս

<sup>2</sup>Տես Ս. Մ. Օհանյան, XXI դարի բանակը: Ե., 2011, էջ 113:

քննարկումների արդյունքներով նախագծերն ամբողջությամբ վերանայվել են՝ կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ: Լրամշակված «Ռազմական կառավարման բակալավրի» և «Ռազմական կառավարման մագիստրոսի» որակավորման պետական կրթական չափորոշիչների նախագծերը քննարկվել են ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության վարչության փորձագետների հետ և ներկայացվել հանաձայնեցման ՀՀ ՊՆ առաջին տեղակալին՝ հետազայում ՀՀ ՊՆ և ԿԳ նախարարների կողմից հաստատելու համար:

Ինստիտուտում մեծ աշխատանքներ են տարվում գործող ուսումնական ծրագրերը կատարելագործելու և ուսումնական այսօրվա արագ զարգացող պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Լիովին վերանայվել են ինստիտուտի ՍԿՈԲ կենտրոնի «կապիտան» գինվորական կոչումով 12-շաբաթյա դասընթացների ուսումնական ծրագրերը և ներկայացվել ՀՀ ՊՆ առաջին տեղակալի հաստատմանը: Ներկայում վերանայվում են հաստիքապաշտոնային «փոխզննդապետ» գինվորական կոչումով 25-շաբաթյա դասընթացների ուսումնական ծրագրերը:

Հրամանատարաշտարային դասընթացների շրջանակում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում ուսումնական ծրագրերի, դասավանդվող առարկաների և թեմատիկ պլանների մշակման, ինչպես նաև հրամանատարաշտարային դասընթացների էլեկտրոնային դասերի և այլ ուսումնական բազայի ստեղծման ուղղությամբ:

Ուսումնական ինստիտուտի՝ տաճկային, ինժեներասակրավորային և հետախուզական մասնագիտություններով շրջանավարտների նախին ԲԿ-ների արձագանքների, ինչպես նաև ՊՆ և ՉՈՒ-ի ԳԸ վարչությունների առաջարկությունների հաշվառմամբ այդ մասնագիտություններով սպաների պատրաստման ժամկետն ավելացվել է և այժմ կազմում է երկու տարի: Համապատասխանաբար վերանայվել են այդ մասնագիտությունների ուսումնական ծրագրերն ուղանելով:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել ինստիտուտի ուսումնանյութական բազայի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես՝ վերակառուցվել է ուսումնական դաշտը, որտեղ կառուցվել են կրակային, մարտավարական, Ռ-ԶԿՊ, ինժեներասակրավորային, հրետանային ավաններ, ամբողջությամբ բարձացվել է «Մարտական հերթապահության նախապատրաստման» ավանը: Պատրաստվել և ՊՆ առաջին տեղակալին է ներկայացվել կրակային պատրաստման նոր ուսումնական համալիրի նախագիծը:

ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով այս տարի սկսվել են էլեկտրամեխանիկական արհեստանոցի ստեղծման աշխատանքները: Արհեստանոցը, ուսումնանյութատեխնիկական բազայի ստեղծման ու նորոգման աշխատանքներից բացի, կընձեռի նորարարական ու գյուտարարական աշխատանքների խթանման, նոր սարքերի պատրաստման ու փորձարկման մեծ հնարավորություններ:

Քաղաքացիական մասնագիտությունների դասախոսների վերապատ-

բաստման նպատակով ինստիտուտն սերտորեն համագործակցում է ՀՀ ԿԳՆ-ի և առանձին բուհերի հետ, իսկ զինվորական մասնագիտությունների դասախոսներն առաջմ վերապատրաստվում են միայն արտերկրում: Բացի այդ, ինստիտուտի դասախոսները մասնակցում են նաև արտերկրից ՀՀ ՊՆ գործուղված փորձագետների մերողական սեմինարներին:

Հասունացել է ինստիտուտում դասախոսների վերապատրաստման և հրահանգիչների մերողական դասընթացների կազմակերպման խնդիրը: Դա հնարավորություն կրնածելի ոչ միայն ավելացնելու դասախոսների վերապատրաստման հաճախականությունը, այլև դասախոսական քափուր հաստիքները լրացնելու նպատակով բեկնածուներ ընտրելու հրահանգիչներից: Նման փորձը լայնորեն կիրառվում է ՆԱՏՕ-ի դպրոցում:

Ողջունելի է ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով ինստիտուտում իրականացված՝ դասախոսական քափուր հաստիքները մրցութային կարգով համարելու առաջին փորձը: Ինստիտուտի ներկայացրած առաջարկությունների հիման վրա լրամշակվելուց հետո այն կնպաստի ռազմական ուսումնական հաստատությունների համարմանը որակյալ կարդերով:

Կազմավորվող հրամանատարաշտարային ակադեմիայի համար պրոֆեսորադասախոսական, գիտական ու վարչական կադրերի ընտրության, պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև աղյունկտների և ասպիրանտների պատրաստման խնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է համագործակցել արտերկրի համապատասխան որակավորում ունեցող ռազմատումնական և գիտական կենտրոնների հետ:

Ռազմական ինստիտուտում գիտական աշխատանքների խթանմանն է ուղղված գիտության բաժնի ստեղծումը: Այս կառուցվածքային փոփոխությունը հնարավորություն կտա ակտիվացնելու ինստիտուտի կապը ՀՀ ԿԳՆ ուսումնական և գիտական կենտրոնների, ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Այն կնպաստի ռազմական ոլորտում գիտական գերակա ուղղությունների որոշմանը և այդ աշխատանքներում ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավմանը:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական գիտությունների զարգացման առումով հասունացել են իրավական, կազմակերպական, կարգային և այլ բնույթի խնդիրները, որոնց լուծման նպատակով ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի գիտության բաժնում մշակվել են որոշ առաջարկություններ: Դրանք բխում են ռազմակերպական համակարգի զարգացման հիմնախնդիրներից, կազմում են բաժնի աշխատանքային պլանի հիմքը և համահունչ են ՀՀ ռազմական կրթության հայեցակարգին:

Ռազմական գիտությունների զարգացման խնդիրի լուծման ուղիները պետք է կանխորչվեն ամբողջ համակարգի ներդաշնակ զարգացման համատեքստում: Համալիր լուծում են պահանջում ոլորտի կառուցվածքային տարրերի որոշման (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, այլունկտուրա, դոկտորականության) և ըստ ռազմական կրթության ձևավորվող փուլերի դրանց տեղակայման (ռազմական ինստիտուտներ, Ռազմական համալսարան, ԳԵ

ակադեմիական դասընթացներ, ԳԸ ակադեմիա) հիմնախնդիրները: Մասնավորապես՝ հույժ կարևոր են ռազմական գիտությունների ոլորտի մասնագետների պատրաստման, որակավորման, ռազմական գիտությունների գծով ատենախոսությունների թեմաների առաջադրման և հաստատման, աշխատանքների փորձաքննության և դրանց մասին կարծիքների ներկայացման, գիտական ղեկավարների, մասնագիտացված խորհրդի ձևավորման, գիտական և գիտամեթոդական գրականության հրատարակման, գյուտարարական ու նորարարական աշխատանքների կազմակերպման, նյութատեխնիկական ու ֆինանսական ապահովման և այլ հարցեր: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում չկա ռազմական թեմաներով ատենախոսություններ պաշտպանելու համար մասնագիտացված խորհրդ, քանի որ չկան համապատասխան գիտական աստիճան և որակավորում ունեցող բավարար թվով գինվորական մասնագետներ: ԲՈՀ-ի կանոնակարգում ռազմական մասնագիտությունների անվանումները գրանցվել են ըստ ռուսերեն տերմինների՝ առանց հաշվի առնելու մեր Զինված ուժերի պահանջնունքներն ու հնարավորությունները:

Ռազմական ինստիտուտում չկային տարրական նյութատեխնիկական պայմաններ, որպեսզի գյուտարարական կամ նորարարական ձիրք ունեցող անձինք տեխնիկապես իրականացնեն իրենց մտահղացումներն ու փորձարկեն ստեղծված սարքերը: Չկային նաև նման աշխատանքների հեղինակներին խրախուսելու, թեմաները ֆինանսավորելու և հեղինակային իրավունքի վկայական տալու գործուն մեխանիզմները: Հոյսք դրվում էր անձի էնուուզիազմի ու հետաքրքրասիրության բավարարման բնական ձգուման վրա, ինչը, մեղմ ասած, սիսալ էր:

Առաջարկվել է մինչ ռազմամասնագիտական առարկաների գծով մասնագիտացված խորհրդի ստեղծումը ռազմական գիտությունների գծով ատենախոսությունների պաշտպանության համար օգտագործել քաղաքացիական բուհերի և ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի մասնագիտացված խորհրդները: Դրանք կարելի է լրացնել այնպիսի բարձրակարգ գինվորական մասնագետների ներգրավմամբ, որոնք թեև լիարժեքորեն չեն համապատասխանում ԲՈՀ-ի կանոնակարգի համաձայն ներկայացվող պահանջներին, սակայն ավարտել են արտասահմանյան ռազմական ակադեմիաները և Հայաստանում իրենց ոլորտի առաջատար մասնագետներն են ու բարձր պաշտոններ են գրադեցնում: Այդ մասնագետների անվանացուցակը կարող է ՀՀ ՊՆ ներկայացմամբ հաստատել գիտության և կրթության նախարարությունը՝ ժամանակավորապես նրանց տալով հասուն կարգավիճակ և քաղաքացիական բուհերի մասնագիտացված խորհուրդներում խորհրդակցական ձայնով հանդես գալու իրավունք: Մեր երիտասարդ սպաների համար ընդլայնվել են արտերկրի ՌՈՒՀ-երի այլունկուուրաներում այն ատենախոսական աշխատանքների կատարման և պաշտպանության հնարավորությունները, որոնց թեմաներն ընտրված են մեր Զինված ուժերի կարիքներին համապատասխան:

ՀՀ ԲՈՀ-ի կանոնակարգի համաձայն՝ ռազմական մասնագիտությունների գծով ատենախոսությունների թեմաները կարող են հաստատել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (միայն

Ի.00.03-մանկավարժական գիտությունների վերաբերյալ) և ռազմական ինստիտուտը: Սակայն անհրաժեշտ է, որ ՀՊՄՀ-ում հաստատվող ռազմական թեմաները համաձայնեցվեն նաև ՌՈՒՀ-երի և ՊՆ ու ԳԸ համապատասխան վարչությունների հետ:

Ռազմական ինստիտուտում և զորքերում առկա գիտական ներուժի հայտնաբերման և արդյունավետ օգտագործման, գիտական հետազոտությունների կիրառական արդյունքների վերահսկման և ատենախոսական աշխատանքների ավտիվացման առումով նպատակահարմար կլինիկ, որ ՊՆ և ԳԸ վարչությունները խնդիրներ և կիրառական ու հետազոտական բնույթի թեմաներ առաջադրեն ինստիտուտի գիտական բաժնին՝ արտացոլելով ՀՀ ԶՈՒ-ում առկա գիտատար խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Գիտական թեմայի հաստատման և դրա կատարման նպատակահարմարության դեպքում, համապատասխան հայտի հիման վրա, առաջնահերթ կարգով այն պետք է ապահովվի նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներով: Գյուտերի և նորարարությունների հեղինակներին անհրաժեշտ է տրամադրել հեղինակային իրավունքի վկայական՝ համագործակցելով ՀՀ Մտավոր սեփականության գործակալության հետ:

Գիտության բաժնի կարևորագույն խնդիրներից է նաև մասնակցությունը ՀՀ Ռազմակրթական համակարգն արդիականացնելու, միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ու ռազմակրթական ոլորտում այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ ռազմակրթական հարցերով համագործակցության արդյունքները վերլուծելու և ընդհանրացնելու գործընթացներին:

Հաշվի առնելով ՀՀ կրթական և ռազմակրթական համակարգերի զարգացման ներկա փուլի առանձնահատկությունները և հարցի հիմնարար բնույթը՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական և Ա. Խանիկյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտներում նպատակահարմար է ստեղծել կրոպության որակի ներքին ապահովման անկախ խմբեր, որոնք ենթարկվեն միայն համապատասխան ՌՈՒՀ-երի պետերին և անընդիատ վերլուծեն ու գնահատեն կրոպության ընթացիկ վիճակը, ուսումնական ծրագրերը, ՀՀ Զինված ուժերի պահանջմունքները, ինչով հնարավորություն կստեղծվի ՀՀ ռազմական բարձրագույն կրոպության ամրող տարածքում անհրաժեշտ փոփոխությունների դիմամիկ կատարման համար: ՀՀ կրթական համակարգում ինտեգրվելու համատեքստում պլանավորված է ՌՈՒՀ-երի հավատարմագրման և կրոպության որակի ապահովման գործընթացներն սկսել 2013 թ. հոկտեմբերին, սակայն, հաշվի առնելով խնդիրի կարևորությունը, նպատակահարմար կլինիկ արագացնել ՌՈՒՀ-երի կրոպության որակի ներքին ապահովման խմբերի ստեղծումը:

Մեր կարծիքով՝ այդ խմբերը պետք է համալրվեն ռազմական կրոպության ոլորտի առաջատար մասնագետ-փորձագետներով, որոնք հստակ կերպով պատկերացնուն են ՀՀ ռազմական կրոպության ներկայիս վիճակը, խնդիրները, զարգացման հեռանկարները և տիրապետում են կրթական ոլորտում ներքին առողջի ժամանակակից մեթոդաբանությանը:

ПРОЦЕСС РЕФОРМИРОВАНИЯ  
В ВОЕННОМ ИНСТИТУТЕ ИМ. В. САРГСЯНА МО РА  
В КОНТЕКСТЕ ВОЕННО-ОБРАЗОВАТЕЛЬНЫХ РАЗВИТИЙ

*М. Н. КАРАПЕТЬЯН, генерал-лейтенант, начальник Военного института МО РА  
им. В. Саргсяна, А. С. МЕЛКОНЯН, полковник, кандидат  
физико-математических наук, доцент, заместитель начальника  
Военного института им. В. Саргсяна по науке*

РЕЗЮМЕ

В рамках формирования системного военного мышления с учетом своих национальных интересов важное место отводится модернизации военно-образовательной системы, повышению эффективности образовательных программ и учебных планов.

В этом аспекте в Военном институте (ВИ) МО РА проведена значительная работа в сотрудничестве с консультационными группами НАТО, в частности: разработаны проекты государственных образовательных стандартов и квалификационных требований для «Бакалавра военного управления» и «Магистра военного управления»;

— ведутся работы по обеспечению соответствия учебных программ быстро меняющимся требованиям военного искусства; полностью пересмотрены учебные программы центра повышения квалификации офицерских кадров; проведены крупномасштабные работы по усовершенствованию материально-технической базы ВИ, в том числе по созданию электромеханической мастерской, которая также создаст возможности для новаторской и изобретательской деятельности; внедряется система комплектования профессорско-преподавательского состава на конкурсной основе; создан отдел науки ВИ.

Внедрение адекватных корректипов в динамичную систему военного образования способствует обеспечению ее целенаправленного развития и осуществлению рациональной кадровой политики ВС РА.

THE PROCESS OF REFORMS  
IN THE V. SARGSYAN MILITARY INSTITUTE, MOD, RA  
IN THE CONTEXT OF MILITARY EDUCATION DEVELOPMENT

*M. N. KARAPETYAN, Lieutenant General, Head of V. Sargsyan Military Institute, MOD, RA,  
A. S. MELKONYAN, Colonel, PhD in Physical and Mathematical Sciences,  
Associate Professor, Deputy Head for Science of V. Sargsyan Military Institute, MOD, RA*

SUMMARY

Within the framework of shaping systemic military thinking with regard for its national interests an important part is assigned to the modernization of the military education system, the increase of the effectiveness of educational programs and curricula.

In this aspect, the Military Institute (MI), MOD, RA carried out considerable work in cooperation with the NATO advisory panels, in particular: projects of

state academic standards and qualification requirements for the Bachelor of Military Management and Master of Military Management are elaborated; compliance of training programs with the rapidly changing requirements of the military art is being ensured; study programs of the training center for officers are fully revised; large-scale work is conducted to improve the material and technical base of the MI, including the creation of an electromechanical workshop which will also provide opportunities for innovative and inventive activity; the system of recruitment of a faculty on a competitive basis is being introduced; the department of science of the MI is established.

The adoption of appropriate adjustments in the dynamic system of military education contributes to its targeted development and implementation of the sound personnel policy of the RA Armed Forces.

**ՀՀ ՊՆ ՄԱՐՇԱԼ ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՓԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ  
ՈԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԻՆՍԻՏՈՒՏՈՒՄ  
ՈԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Դ. Կ. ԲԱԼԱՅԱՆ, գնդապետ, 1-ին կարգի օդաչու-հրահանգիչ,

ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն  
ինսպիրուութիւնի պետ, Դ. Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, փոխգնդապետ

*համբակութական առարկաների ֆակուլտետի էլեկտրակայինիկական  
և ռադիոլուսնիկական առարկաների ամբիոնի պետ*



«Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտորինում» ռազմական անվտանգության համակարգի խնդիրներից է ռազմական կրթության ոլորտի բարեփոխումը, որը նախատեսում է ռազմական կրթության և կադրերի պատրաստման համակարգի կատարելազործում և զարգացում՝ միջազգային առաջավոր փորձի օգտագործմամբ<sup>1</sup>:

Ըստ այդմ՝ 2010–2012 թվականները դարձան ՀՀ Զինված ուժերի արմատական որակական վերափոխումների ժամանակաշրջան։ Այդ վերափոխումների հիմնական նպատակներից է ամբողջ անձնակազմի, առաջին հերթին՝ հրամանատարական կազմի մասնագիտական պատրաստության մակարդակի բարձրացումը՝ միջազգային համագործակցության միջոցով պատրաստման համակարգի արդյունավետության մեծացմանը, մասնավորապես՝ առաջադիմական միջազգային ստանդարտներին համապատասխանեցմանը։ Այդ խնդիրի իրականացման առաջատարները պետք է լինեն ռազմառուսումնական հաստատությունները և ուսումնական գրամասերը։

ՈՒստի ռազմական ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է ապահովել որակյալ կրթություն, ինչի գրավականը ՌՈՒՀ-երում որակի ապահովման ներքին համակարգի ծևավորումն է։ «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգի» պահանջներից է ռազմական կրթության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչներին<sup>2</sup>։ Դա նշանակում է, որ անհրաժեշտ է ներդրել նախանշված կրթական և մասնագիտական չափորոշիչներին կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանության գնահատման և հավատարմագրման հուսալի համակարգ։

Ըստ այդմ՝ ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտի ղեկավարությունը որպես առաջնային խնդիրներ է դիտում՝

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտորին»։ «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 54։

<sup>2</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգ» ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված 1 ([https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)):

1. ռազմական կրթական ծրագրերի համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչներին,
2. մասնակցությունը ռազմակրթական համակարգի կատարելագործման ուղիների մշակմանը,
3. մասնակցությունը պաշտոնեական առաջնադաշտական համակարգերի գարզացման ուղիների որոշմանը,
4. մասնակցությունը ռազմական ուսուցման կառավարման և ռազմական կրթության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորմանը:

Անցած երկու տարիներին ինստիտուտում ՆԱՏՕ-ի խորհրդատվական խմբերի հետ ակտիվ համագործակցությամբ որոշակի աշխատանք է կատարվել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Այսպես. յուրաքանչյուր մասնագիտության համար վերամշակվել և ՀՀ պաշտպանության ու ՀՀ կրթության և գիտության նախարարությունների միջև փոխհամաձայնեցվել են որակավորման «քակալավոր» աստիճանի պետական կրթական չափորոշիչները: Ըստ այդմ՝ փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրերում, հանրակրթական առարկաները դասավանդում են ՀՀ քարձուագույն ուսումնական հաստատություններից հրավիրված դասախոսներ, իսկ մասնագիտական առարկաները՝ ՀՀ Զինված ուժերում ծառայած, հետազոտման արտասահմանյան ռազմական ակադեմիաներ կամ ակադեմիական դասընթացներ ավարտած սպաները: Որոշ ներ մասնագիտական առարկաների ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի լաբորատորիաներում: Ի դեպ, հարկավոր է նշել, որ այս տարվանից դասախոսական կազմի ընտրությունը կատարվում է մրցուային հիմունքներով:

Մասնագետների պատրաստման ուսումնական գործընթացում իր ուրույն տեղի ունենալու համագործակցությունը այն գորամասերի հետ, որտեղ իրենց ծառայությունն են անցնում ինստիտուտի շրջանավարտները: Զորամասերից ստացված առաջարկությունները կանոք նշանակություն ունեն հետազ ուսումնական ծրագրերում փոփոխություններ և շտկումներ կատարելու առումով:

ՈՂԻՀ-երի ընդունելության համակարգն ինստեգրվել է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության միասնական համակարգին՝ ընդունելության համար գիտելիքների ստուգման միասնական չափանիշների կիրառմամբ: Ռազմական ավիացիոն ինստիտուտ դիմողները միասնական քննություններ են հանձնում մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից, իսկ «ֆիզիկական պատրաստություն առարկայից» նորմատիվներ հանձնում են տեղում: Մրցույթը կազմակերպվում է հետևյալ կերպ. ըստ մրցութային առարկաներից հավաքած միավորների (քարձրից ցածր՝ նվազման կարգով) կազմվում են անվանացուցակներ և այդ հերթականությամբ դիմորդների հետ անցկացվում է «Մասնագիտական կողմնորոշում և հոգեբանական համատեղելիություն» թեմայով հարցազրույց: Կատարվում է նաև թեստավորում, ընդունման թեստերում ընդգրկվում են այնպիսի հարցեր, որոնց նպատակն է պար-

գել դիմորդի զարգացածության աստիճանը, մասնագիտական կողմնորոշումը և կարևոր հոգեբանական առանձնահատկությունները: Միցույթն անցկացնում է ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանվերյանցի անվան ուազմական ավիացիոն ինստիտուտում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողով՝ դիմորդների ծնողների և լրատվամիջոցների հրավիրված ներկայացուցիչների մասնակցությամբ: Հարկավոր է նշել, որ ուազմական ավիացիոն ինստիտուտ ընդունվող դիմորդների մրցակցությունը գնալով աճում է. մեկ տեղի համար լինում է միշտներ 5 դիմորդ: Համապատասխանարար աճում է նաև ընդունելության միասնական քննությունների շեմային միջին միավորը:

Մասնագետ պատրաստելու գործում կարևոր տեղ ունի ապագա մասնագիտության ճիշտ ընտրության հարցը, մարդատեխնիկական համակարգում նրա գործունելության հուսալիության նախնական պարզումը: ՈՒստի նպատակահարմար կլինիկ ընդունելության ժամանակ կիրառել նաև հոգեբանական ընտրազատման մեթոդիկա<sup>3</sup>:

Ինստիտուտում, բացի ուազմական մասնագիտություններից, տրվում է նաև հանրապետությունում ընդունված բարձրագույն կրթության «բակալավր» աստիճանին համապատասխանող քաղաքացիական մասնագիտացման որակավորում:

Համաձայն «ՀՀ ուազմական կրթության հայեցակարգով» սահմանված սպայակազմի պատրաստման փուլերի՝ արդեն երկրորդ տարին է, ինչ քաղաքացիական բուհեր ավարտած ուսանողները մեր ինստիտուտում ուսումը շարունակելու միջոցով ձեռք են բերում երկրորդ՝ ուազմական մասնագիտություն: Ինստիտուտում զինվորական մասնագիտական առարկաներ են դասավանդվում ՀՊՄՀ «Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար: ՈՒսանողները այստեղ են անցկացնում իրենց ուսումնական և գիտահետազոտական պրակտիկան:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթության համակարգին ուազմական ուսումնական հաստատությունների ցածր մակարդակի ինտեգրվածությունը կարող է նվազեցնել ուազմական կրթության արդյունավետությունը: Հետևաբար կարևոր նշանակություն է ստանում այդ ուղղությամբ համագրծակցության նորանոր ծրագրերի մշակումը, որոնց իրականացումը կնպաստի ուազմական կայրերի պատրաստման համակարգի արդյունավետության մեծացմանը:

Դրա հետ մեկտեղ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի որակն ավելի բարձրացնելու համար հարկ է անցնել ինտերակտիվ ուսուցման մեթոդներին՝ կուրսանատների ակտիվության շարժադրությամբ:

Քանի որ ՀՀ ՊՆ ուազմական ավիացիայի ինստիտուտի շրջանավարտներն ստանում են սախոազինության ու ուազմական տեխնիկայի շահագործման սպա-մասնագետի որակավորում, ուստի բավական մեծ ուշադրություն է

<sup>3</sup> Տե՛ս Վ. Հ. Մարգարյան, Սպայի անձնավորության ձևավորման հարցի շուրջ: «Հայկական քանակ», 2004, հմ. 3–4:

դարձվում ինստիտուտի ուսումնանյութական բազայի քարմագմանը և կատարելագործմանը: Մասնավորապես՝ ինստիտուտում գործում է օտար լեզուների ուսուցման կենտրոն, որտեղ կազմակերպվում է անգլերեն լեզվի ուսուցում, տարեցտարի մեծանում է ուսումնամասնագիտական լաբորատորիաների և վարժասարքերի թվաքանակը, ինչը նպաստում է ավելի խոր մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանն ու հմտությունների համակարգի ձևավորմանը: Տեսական նյութի յուրացման արդյունավետությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնական պլաններում ավելացնել գործնական պարապմունքների, լաբորատոր և կուրսային աշխատանքների ծավալը: Կուրսանտների գիտելիքների հարստացման նպատակով առանձնահատուկ կարևորություն է ստանում նրանց մասնակցությամբ գիտաժողովների կազմակերպումը, նրանց ներգրավումը գիտական գործունեության մեջ: Այս նպատակով ինստիտուտում ստեղծված է գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների բաժին, որը լուրջ ծրագրեր է իրականացնում գիտատեխնիկական ոլորտի ոչ միայն տեսական, այլև գործնական ասպարեզմներում:

Մասնագիտական ունակությունների, հոգեբանական հատկությունների և զրադեցվելիք պաշտոնին համապատասխանության աստիճանի գնահատման արդյունքներով որոշվում են ուսանական կադրերի առաջխաղացման հեռանկարները: Ուստի պաշտոննեական առաջխաղացման գործընթացը պետք է դիտարկել կրթության ու դաստիարակության հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր հաստիքի համար սահմանելով հստակ կրթական և վարժանքային ցենզ<sup>4</sup>: Այդ դեպքում հնարավորություն է ստեղծվում ապահովելու մասնագիտական գործունեության և կրթական համակարգերի միջև մշտական փոխադարձ կապ և դրական ազդեցություն գործելու մասնագիտական գիտելիքների մակարդակի բարձրացման և գործունեության արդյունքների վրա: Միջազգային փորձը<sup>5</sup> (ՆԱՏՕ-ի երկրներ, ՌԴ) ևս ցույց է տալիս, որ սպաների պատրաստման գործում հարկավոր է ապահովել կրթության և դաստիարակության շարունակականությունը ծառայության ամբողջ ընթացքում, ինչով կապահովվի որակավորման աստիճանի մշտական բարձրացումը:

Կուրսանտական կազմի պետական ավարտական քննությունների արդյունքները ցույց են տալիս, որ վերը նշված համային ձեռնարկումների շնորհիվ մեր շրջանավարտների մասնագիտական գիտելիքները և ունակությունները համապատասխանում են մասնագիտական որակավորման շահանագներին, ինչով էլ ապահովում է ՀՀ ԶՈՒ-ի համալրումը ժամանակակից պահանջներին համապատասխանող կադրերով:

<sup>4</sup> Այս մասին ավելի հանգանանորեն տես Դ. Կ. Բալայան, Զ. Ա. Հակոբչանյան, Ռազմական կրթության և կադրերի պաշտոննեական առաջխաղացման համակարգերի զարգացումն ու կատարելագործումը՝ Մարշալ Ա. Խանդերյանցի անվան ուսանական ավիացիոն ինստիտուտի փորձի հաշվառմամբ: «ՀԲ», 2010, հմ. 1:

<sup>5</sup> Տես C. A. Savick. Подготовка офицерских кадров в Республике Белорусь в контексте реформирования системы военного образования в ведущих странах НАТО и СНГ. 2012 ([www.lexed.ru/pravo/journ/0612/sav.doc](http://www.lexed.ru/pravo/journ/0612/sav.doc)):

## К ВОПРОСУ РАЗВИТИЯ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ В ВОЕННОМ АВИАЦИОННОМ ИНСТИТУТЕ ИМ. МАРШАЛА А. ХАНФЕРЯНЦА МО РА

Д. К. БАЛАЙН, полковник, летчик-инструктор I класса, Начальник

Военного авиационного института им. маршала А. Ханферянца,

Д. М. АЛЕКСАНЯН, подполковник, начальник кафедры электротехнических и радиотехнических дисциплин факультета общеобразовательных дисциплин

### РЕЗЮМЕ

В контексте реформирования системы военного образования в РА при консультационной поддержке со стороны соответствующих специалистов из стран НАТО в рамках ПДИП Армения – НАТО в Военном авиационном институте за последние два года были: выработаны образовательные нормативы для квалификации «бакалавр» по всем институтским специальностям с усовершенствованием программ обучения, привлечением специалистов из гражданских вузов для преподавания общеобразовательных дисциплин и преподаванием некоторых узкоспециальных предметов в соответствующих лабораториях Государственного инженерного университета Армении; прием в институт производится по общереспубликанским критериям в рамках единой приемной системы; укрепляется обратная связь с частями, в которых служат выпускники института, в целях корректировки программ обучения в соответствии с требованиями ВС; обогащение учебно-материальной базы с широким использованием новых технических средств обучения; расширение научной деятельности с активным вовлечением курсантов, и т. д.

### ON THE QUESTION OF MILITARY EDUCATION DEVELOPMENT IN THE MILITARY AVIATION INSTITUTE AFTER MARSHAL A. KHANPERYANTS OF MOD RA

D. K. BALAYAN, Colonel, 1<sup>st</sup> class Pilot-Instructor, Head of the Military Aviation Institute after Marshal A. Khanperyants, D. M. ALEKSANYAN, Lieutenant-Colonel, Head of the Chair of Electro-Technical and Radio-Technical Disciplines of the Faculty of General Subjects

### SUMMARY

In the context of reformation in the RA defense education system with the consultative assistance from appropriate experts from the NATO states in the framework of the IPAP Armenia-NATO program the following developments took place at the Military Aviation Institute within the last 2 years: educational guidelines were set for the bachelor's degree at all the professions taught at the Institute with more advanced educational programs, inviting specialists from civil colleges or universities for teaching general subjects and several ad-hoc disciplines in corresponding laboratories of the Yerevan State Engineering University of Armenia; the admission process is accomplished according to the criteria practiced state-wide in the framework of the unique admission system; the feedback with the regiments where the Institute alumni serve is reinforced aiming to update the educational programs in conformity of the AF requirements; enhancement of the academic and material facilities with broadband application of high-tech tutorials; expansion of the academic practice with the students' active participation, etc.

**ՈԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ  
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔ**

**Բ. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, թ/թ պաշտոնարող գնդապետ, բժշկական  
զիլինիումների ղոկոր, պրոֆեսոր, ՀՀ Պաշտպանության նախարարի՝  
ուղամարժշկական հարցերի գծով խորհրդական**



Վերջին 20 տարիներին բնորոշ է դիմամիկորեն զարգացող ժամանակակից բժշկական զիտության մակարդակին չհամապատասխանող, մերոդարձանորեն ու կազմակերպորեն հնացած բժշկական կրթության համակարգի և բարձրորակ մասնագետների պատրաստման որակի անկման միտում: Բժշկական կրթության բավական պահպանողական և ոչ բավարար շարժում, զարգացման մեջ իներս համակարգը իր գաղափարաբանությամբ, ձևով, բովանդակությամբ և վերջնական արդյունքներով ընդհանուր առնամբ չի համապատասխանում ժամանակակից մարտահրավերներին ու պահանջներին, ընդունակ չէ լիովին ապահովելու նոր սերնդի մասնագետների պատրաստումը:

Առավել ևս դա վերաբերում է ուղամարժշկական ոլորտի համար այնպիսի զիտամանկավարժական կայրերի պատրաստման համակարգին, որոնք պետք է ունակ լինեն ապագա ուղամական բժիշկներին ոչ միայն տեսական զիտելիքներ տալու և մասնագիտական գործնական հմտություններ ձևավորելու, այլև նպաստելու նրանց ուղամարժշկական աշխարհայցքի, ուսումնական նյութի վերլուծական ընկալման, տրամարանական նոտածության, ընդհանուրից մասնավորին անցնելու և ձեռք բերված զիտելիքների ու հմտությունների պաշարն իր ապագա գործունեության կոնկրետ դաշտում կիրառելու կարողության զարգացմանը: Ուսուցման արդյունավետության մեծացման կարևոր տարրերից է մասնագիտական զիտելիքների ձեռքբերման ու իրենց հետագա ամենօրյա գործունեության համար այդ զիտելիքների անհրաժեշտության վերաբերյալ հստակ պատկերացումների ձևավորման գործում ապագա ուղամական բժիշկների շահագրգության մեծացման նպատակով բազմազան և ճկուն մոտեցումների օգտագործումը:

Ուղամարժշկական կայրերի պատրաստման համակարգում որակական վերափոխումների գաղափարաբանությունն ու ուղամավարությունը պետք է նպատակառուղղված լինեն ուղամարժշկական ծառայության (ՈԲԾ)՝ որպես ՀՀ Զինված ուժերի (21-րդ դարի Հայոց բանակի տիպարի) բարձր մակարդակի մարտունակության ապահովման անքակտելի մասի արդիականացմանը և ներառնեն մերոդարձանական բնույթի առավել կարևոր հետևյալ պահանջները:

• տարրերական մոտեցման շրջանակներում ժամանակակից պահանջներին և չափանիշներին համապատասխանող ուղամարժշկական կայրերի մաս-

նազիտական, հայրենասիրական ու գաղափարաբարոյական պատրաստման մակարդակին և որակին ներկայացվող հիմնական պահանջների հստակ ձևակերպում՝ միջազգային հարուստ փորձի հաշվառմամբ, կրթության ակադեմիական համակարգի լավագույն ավանդույթների պահպանման պայմանով,

• շարունակական կրթության արդյունավետ, ՀՀ ԶՈՒ-ի բուժծառայության համար առավել ընդունելի այնպիսի համակարգի ընտրություն, որ այն ներառի բժշկական գիտության և պրակտիկայի նվաճումների, առաջատար բժշկական և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնվոր բազային դիպլոմային և հետդիպլոմային կրթությունը, մասնագիտացումն ու կատարելագործումը,

• ուսումնական ծրագրերում այնպիսի արմատական փոփոխությունների կատարում, որոնց միջոցով բովանդակային արտացոլում ստանան բազային (դիպլոմային), հետդիպլոմային կրթության և ներ մասնագիտացման որակական տարրերություններն ու ներքին փոխկապվածությունը, հստակորեն հիմնավորված լինեն բարձրագույն ուսումնաբժշկական կրթության բուրգը կազմող տեսական և կլինիկական առարկաների ամբողջ աստիճանակարգության տեսակարար կշիռները, հաջորդականությունն ու ինտեգրման բնույթը,

• համակարգչային տեխնոլոգիաների, մոդելների, իրավիճակային խնդիրների, նմանարկող վարժասարքերի և այլ ժամանակակից տեխնիկական միջոցների լայն կիրառմամբ ուսուցման ձևերի և մերոդների արդիականացում՝ ուղղված ոչ միայն տեսական գիտելիքների և մասնագիտական գործնական հմտությունների, այլև խաղաղ ժամանակի տարրեր իրավիճակներում և ուսումնական գործողությունների բատերարեմին առավելագույն նույն իրադրությունում ճկուն կերպով կողմնորոշվելու և արագ որոշումներ ընդունելու ունակության ձեռքբերմանը:

**Բազային (դիպլոմային) ուսումնաբժշկական կրթություն:** Ըեշտենք, որ, մեր կարծիքով, Բողոքյան երկաստիճան մոդելը, որը ներդրվել է ՀՀ կրթության համակարգում, բժշկական կրթության ոլորտի համար անընդունելի է և հակասում է նրա հիմնարար սկզբունքներին: Բացի այդ, ՀՀ Առողջապահության նախարարության (ԱՆ) և ՀՀ ՊՆ Ռ-Ծ համակարգի մասնագիտությունների ցանկում բակալավրի դիպլոմով շրջանավարտի համար համապատասխան պաշտոններ նախատեսված չեն: Մեր պատկերացմամբ՝ ստեղծված իրավիճակից տրամաբանական ելքը այդ մոդելի այնպիսի մեկնակերպի մշակումն է, որում բակալավրիատն ու մագիստրատուրան լինեն ընդամենը բազային դիպլոմային կրթության փուլեր: Ինչ վերաբերում է Բողոքյան հոչակագրի այլ դրույթների, ապա ենթադրում ենք, որ դրանցից մի քանիսը, ինչպիսիք են «ուսուցում ամբողջ կյանքի ընթացքում» հասկացությունը, Եվրոպական ինտեգրման սկզբունքներին համապատասխանող միասնական մերուդարձանությունների, ստանդարտների, համադրելի չափանիշների, ուսուցանող և այլ ծրագրերի մշակումը, կարիք ունեն վերլուծման ու հարմարեցնան՝ ըստ հանրապետության կրթական համակարգի առանձնահատկությունների և խնդիրների:

Բարձրագույն ուսումնաբժշկական կրթության համակարգը բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով և առաջին հերթին նրանով, որ ներառում է երկու արմատական խնդիրներ՝ պատրաստել բժշկի և, միևնույն ժամա-

նակ, սպայի: Այդ հարցը պետք է մշտապես գտնվի ուշադրության կենտրոնում:

Կազմակերպական կարևոր միջոցառումներից է բարձրագույն ուսումնական հաստատության ռազմաբժշկական ֆակուլտետ ընդունվելու ցանկություն հայտնած դիմորդների ճախճական ընտրազատումը: Ռազմական բժշկի և սպայի մասնագիտության ընտրության ժամանակ պետք է հիմնական չափանիշները լինեն որոշակի առարկաներից կոնկրետ գիտելիքներ ունենալու հետ մեկտեղ նաև հայրենասիրությունը և ազգային շահերին խորին նվիրվածությունը, բժիշկ-սպա դաշնայրությունը ու բարոյականությունը, անձնային և բնութագրաբանական առանձնահատկությունները և այլն:

Ռազմական բժշկի մասնագիտության գրավուրյունը մեծացնելու համար անհրաժեշտ է մշակել հստակ ծրագիր, որով երաշխավորված լինեն սոցիալական պաշտպանվածությունը, անընդհատ մասնագիտական ու ծառայողական աճման հեռանկարները: Դա հնարավորություն կտա ՌԲԾ-ի մեջ ներգրավելու ավելի մեծ քով շնորհայի ժամանակակից ինտեգրումային գործընթացներում արագ ընդգրկվելու ունակությամբ օժտված երիտասարդների:

**Հետդիպումային ռազմաբժշկական կրթություն:** Այսօր արմատական արդիականացման կարիք ունի նաև հետդիպումային բարձրագույն ռազմաբժշկական կրթությունը, որը կիմիկական օրդինատորայի շրջանակմերում կատարվող ուսուցման նպատակով, խնդիրներով, ուսումնական ծրագրերի բովանդակությամբ, միջոցներով ու ձևերով դեռ չի համապատասխանում ներկայիս պահանջներին: Եթե ուսումնասիրները ժամանակակից տեխնիկայի և սպառազինության կիրառմամբ բնորոշվող տեղային զինված հակամարտություններն ու տարածաշրջանային պատերազմները, որոնք ուղեկցվում են մեծ սանհտարական և անդառնայի կորուստներով<sup>1</sup>, կիամոզվենք, որ ԶՈՒ-ի մարտունակությունն զգայի շափով պայմանագորված է նրա բուժառայության գործունեության մակարդակով և արդյունավետությամբ, ընդունին այն պետք է լինի շարժուն, օպերատիվ և կառավարելի: Դրան կարելի է հասնել միայն հետդիպումային կրթության շրջանակներում հետևյալ երկու կատեգորիաների ռազմական բժիշկների տարբերակված պատրաստման դեպքում.

- ռազմաբժշկական ծառայության կազմակերպիչների, որոնք ունակ լինեն խաղաղ ու պատերազմական ժամանակ և արտակարգ իրավիճակներում ծառայությունը արդյունավետ և օպերատիվ կերպով կառավարելու բուժապահովման տարրեր նաև կարդաբակներում, մասնակցելու բնույթով տարրեր բուժառազմական ու բուժառատարական խնդիրների ամրող ծավալով լուծմանը,

- բարձր որակավորում ունեցող ներ պրոֆիլի մասնագետների՝ կանխարգելիչ և կիմիկական բժշկության տարրեր ոլորտների բուժող բժիշկների, ինչպես նաև սանհտարահիգիենիկ և համաճարակաբանական, քիմիական ու ճառագայթային պաշտպանության ոլորտների մասնագետների, որոնց խնդիրներն են.

<sup>1</sup> Տես B. A. Иванцов, A. M. Шелепов, I. T. Русев. Система медицинского обеспечения войск в локальных войнах и контртеррористических операциях. СПб., 2006; C. J. L. Murray, G. King, A. D. Lopez, N. Tomijima, E. G. Krug. Armed conflict as a public health problem (<http://gking.harvard.edu/files/armdpd.pdf>):

*իսպաղ ժամանակ՝ զինծառայողների առողջության ամրապնդումը, կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, որակավոր և մասնագիտացված բուժօգնության ցուցաբերումը, պարերազմական ժամանակ՝ ամբողջ ծավալով առաջն բժշկական օգնության պատեհաժամ և օվերատիվ ցուցաբերումը, վիրավորների ու վնասվածների հստակ տեսակաբորումը և պատեհաժամ տարահանումը՝ հետագա որակյալ և մասնագիտացված բուժօգնության ցուցաբերման համար, զորահավաքային պարարագուրույն՝ պատերազմի դեպքում կամ զինված հակամարտությունների ժամանակ ներառում է լայն շրջանով նարտավարակազմակերպական հարցեր: Պահեստայինը պետք է առաջին հերթին գիտենա իր նշանակման այն կոնկրետ վայրը, որտեղ պետք է ներկայանա զորահավաքի և ժամանման ժամկետների հայտարարման դեպքում: Զորահավաքային պատրաստությունը ներառում է այնպիսի հիմնական պահանջներ, ինչպիսիք են՝ իրադրությունում արագ կողմնորոշվելու կարողությունը, զիսավոր խնդիրների հստակ սահմանազատումը և դրանց կատարման ժամկետների ու հաջորդականության որոշվածությունը, շարժունակության, օվերատիվ դեկավարման և հուսալի կապի ապահովումը: Տարերային ու տեխնինաժին աղետների և առանձնակի վտանգավորություն ներկայացնող համաճարակների ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում տուժածներին, վիրավորներին և հիվանդներին տարբեր տեսակի բուժօգնության ամբողջ ծավալով ցուցաբերման ապահովումը Արտակարգ իրավիճակների նախարարության ծառայության ստորաբաժնումների հետ համատեղ:*

*Այսպիսով՝ բարձրագույն ռազմարժշկական կրթության հետդիպլոմային փուլում ուսուցման համակարգի, նրա բովանդակության և ձևերի արդիականացումը, նախ, նեղ մասնագիտական գիտելիքների ու հնտությունների ձեռքբերման և, երկրորդ, խիստ անհատական մոտեցման վրա հիմնվածության ու տարբեր պրոֆիլի կոնկրետ նեղ մասնագետների նկատմամբ ՀՀ ԶՈՒ-ի ռազմական բուժծառայության պահանջարկի հաշվառման ապահովումն է:*

*Ռազմարժշկական ծառայության կազմակերպիչների և բարձր որակավորում ունեցող նեղ մասնագետների պատրաստման որակի բարելավման կարևոր ուսումնամեթոդական տարրերն են՝*

*• բարձր մակարդակի այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք տիրապետեն անհրաժեշտ տեսական գիտելիքների ու հնտությունների և պատկերացում ունենան բժշկության իրենց ընտրած ոլորտում ժամանակակից զիտության ու պրակտիկայի նվազումների մասին, լիովին պատրաստ լինեն որպես սպա ծառայելու ԶՈՒ-ի բուժապահովման համակարգում,*

*• ապագա սպա-բժշկի կիրակական մտածողության, պատերազմական ժամանակ սովորական և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու և օվերատիվ որոշումներ ընդունելու ունակության զարգացմանն ուղղված վեկտորի ձևավորումը:*

**Ռազմական բժիշկների շարունակական ուսուցման հայեցակարգը:** Արդի պայմաններում ռազմական բժիշկների շարունակական ուսուցումը (մասնագիտացում, կատարելազործում, որակավորման բարձրացում), այդ թվում՝ միջազգային համագործակցության և փորձի փոխանակման շրջանակներում, ՀՀ

ԶՈՒ-ի ռազմաբժշկական համակարգի արդյունավետ գործունեության ապահովման հիմնական և վճռորշ պայմանն է: Դա վերաբերում է բուժծառայությունում եղած բոլոր մակարդակների գինծառայողներին:

Նախանշված գրաֆիկով և ծառայողական աճման դինամիկային համապատասխան՝ ք/թ սպաների շարունակական ուսուցման ծրագրի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև զինվորական բուժաշխատողների մասնակցությունը գիտագործնական գիտաժողովների, սիմպոզիումների, սեմինարների ու վարժանքների, նոր գիտելիքներ ձեռք բերելու և բժշկական տեխնոլոգիաների ու բժշկության ոլորտում ձեռքբերումներին ծանոթանալու հետ մեկտեղ, Բոլոնյան համաձայնագրով նախատեսված Կրետիտների եվրոպական կուտակային համակարգ<sup>2</sup> (*ECTS – European Credit Transfer System*) ներդրման դեպքում, կարող է օրյենտիվ հիմք դառնալ զինվորական բժիշկների ծառայողական առաջընթացի և գիտական հետազոտություններում նրանց ավելի լայն ներգրավման համար՝ այն նպատակով, որ նրանք 5-6 տարում դառնան արհեստավարժ մասնագետներ:

Ուազմաբժշկական ծառայության ուշադրության կենտրոնում մշտապես պետք է լինի ուազմական բուժակների և սանհրահանգիների շարունակական ուսուցման կարևոր հարցը: Դրա համար մշակված՝ ուսուցման հատուկ ծրագիրը և դիտողական ուսուցողական միջոցները պետք է ներառեն ընկալման համար մատչելի նյութ (հուշաբերեր, պրակներ և այլն), որը հնարավորություն կտա ծանոթանալու առաջին մինչքծշկական օգնության ժամանակակից միջոցներին ու մերողներին, արդի պատերազմներում և զինված հակամարտություններում վիրավոր ու վնասվածքներով զինծառայողների տեղափոխման առանձնահատկություններին՝ այդ հարցերը հետևողականորեն մշակելով տարբեր մարտական իրավիճակներին առավելագույնս նոտեցված զրավարժություններում:

Նշված հարցը սերտորեն կապված է հանրապետության մասնագիտական միջնակարգ բուժկրթության համակարգում (բժշկական ուսումնարաններ և քոլեջներ) ուազմական բժշկության հիմունքների ուսուցման համակարգի կատարելագործման խնդրի հետ: Անհրաժեշտ է առանձնացնել տվյալ խնդրի երկու կողմերը, միջնակարգ բուժկրթության բվակազմի՝ ապագա զինվորական բուժակների ու բուժքույրերի ուազմաբժշկական պատրաստման մակարդակի բարձրացում և, երկրորդ, ինչպես ցույց տվեց Ղարաբաղյան ազգային-ազատագրական պայքարի փորձը, պատերազմական շրջանում վիրավորներին և վնասվածներին բժշկական օգնությունը ցուցաբերելու համար որպես հոսպիտալային բազա օգտագործվող քաղաքացիական բուժիմնարկների բժիշկների հետ նաև միջին բուժանձնակազմի ներգրավում: Ուստի հետզիվլումային ուազմաբժշկական վերապատրաստումը և բուժքույրերի ու բուժակների որակավորման բարձրացումը պետք է դիտվեն որպես ուազմաբժշկական անձնակազմի շարունակական ուսուցման համակարգի կարևոր տարրեր:

Առանձնակի պետք է շեշտվի այսպես կոչված պահեստայինների մասնա-

<sup>2</sup> Տես Յ. Բելյաև, Գ. Ժաբրեվ. Болонский процесс – попытка конкуренции. «Высшее образование в России», 2006, № 4.

գիտական պատրաստման և զորահավաքային պատրաստության վիճակի կարևոր հարցը: Ներկայումս տարածաշրջանում տիրող իրադրությունը թելադրում է նվազագույն ժամկետներում նշված հարցը կարգավորելու և, առաջին հերթին, տարբեր ծառայությունների դերերն ու պատասխանատվությունները հստակ կերպով սահմանազատելու անհրաժեշտություն:

Մասնավորապես՝ ՀՀ ՊՆ ՌՔԾ-ն պետք է ներկայացնի ճշգրիտ հայտ՝ նշելով տարբեր պրոֆիլի մասնագետների պահանջարկը, առաջարկությունները ուսուցման առավել արդյունավետ եղանակների օգտագործման մասին, ներառյալ՝ կարճաժամկետ հավաքներն ու զորավարժությունները: ՀՀ գինկոմիսարիատի գործառույթներում պետք է ներառվեն ռեսուրսների ուսումնասիրում՝ ՀՀ ԱՆ-ի հետ համատեղ, ուսուցման և կատարելազորման տարբեր ձևերի պահանջուրումն ու ապահովումը, պահեստայինին հանձնվող կարգադրագրում հստակ կերպով նշվեն զորահավաքի հայտարարման դեպքում նշանակման կոնկրետ վայրը (շտաբ, հոսպիտալ և այլն) և ժամանական ժամկետները: Պահեստային մասնագետների շարունակական ուսուցման համակարգը պետք է բխի իրագործման ռեսալ հնարավորություններից (կազմակերպական, ֆինանսական և այլն) ու կառուցված լինի խիստ նեղ մասնագիտությունների ուսուցման սկզբունքի վրա՝ ըստ ժամանակակից ծրագրերի: Ուսուցման մեթոդների ու եղանակի ընտրությունը (լսարանային վարժանք (այդմորուն որենուց), աշխատանք կաղապարվածքներով, կարճաժամկետ ուսումնական հավաքներ, դաշտային շարժական հոսպիտալի ծավալմամբ զորավարժություններ և այլն) պետք է լինի խիստ տարբերակված և բխի շարունակական ուսուցման յուրաքանչյուր փուլի կոնկրետ խնդիրներից:

Հարունակական ուսուցման հարցերի պլանավորման ու կազմակերպման և, հատկապես, նեղ մասնագիտությամբ գինվորական բժիշկների ու պահեստայինների կատարելազորման ժամանակ հարկ է հաշվի առնել, որ Հայաստանը տարածքով համեմատարար փոքր պետություն է և ունի սահմանափակ ռեսուրսներ, ուստի հոսպիտալային նակարդակում ՀՀ ԱՆ-ի համակարգի մասնագիտացված բժշկական հիմնարկների հետ համատեղ կատարվող նեղ մասնագիտացման կազմակերպման դեպքում (Այրդավիրարություն, սրտավիրաբուժություն, վերակառուցողական ու պլաստիկ վիրաբուժություն և այլն) պետք է ճշգրիտ կերպով հաշվարկել յուրաքանչյուր նեղ պրոֆիլի և հարակից ճյուղերով մասնագետների անհրաժեշտ քվարանակը՝ ըստ սանհիտարական կորուստների կանխատեսվող կառուցվածքի մակարդակի և առանձնահատկությունների:

Այսպիսով՝ հարկ է ներ համարում շեշտել հետևյալ արմատական հարցերը.

– ժամանակն է, որ ՌՔԾ արդիականացման՝ որպես ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության բարձրացման բաղադրիչի պրոբլեմը լուծվի համակարգային մոտեցման հիմն վրա՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ և համահունչ լինի ուսումնագործական կրթության և որակյալ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ոլորտում տեղի ունեցող որակական վերափոխումներին,

– միջազգային համագործակցության ընդլայնման շրջանակներում ԶՈՒ-ի ՌՔԾ ինտեգրումը պետք է կատարվի, աշխարհաքաղաքական շահերի և այլ նկա-

տառումների հաշվառման հետ մեկտեղ, նաև կոնկրետ խնդիրների ավելի արդյունավետ լուծման նպատակների ու ձևերի և ՀՀ ԶՈՒ-ի բուժապահովման զարգացման ու մակարդակի բարձրացման գերակա ուղղությունների շեշտվածության մեջացմամբ,

–ՀՀ ԶՈՒ-ի ՌԲԾ-ի համար կադրերի ընտրության հիմքում կարևոր սկզբանքների շարքում պետք է լինեն հայրենասիրությունը և ազգային շահերին գաղափարական նվիրվածությունը, բարոյականությունը և մարդասիրությունը, ինչպես նաև հայոց բանակի սպա դառնալու հակումը<sup>3</sup>,

– անհրաժեշտ է զինվորական բժիշկներին՝ ՀՀ ԶՈՒ-ի ապագա սպաներին շահագրգռել նրանց ծառայողական աճման հետանկարով, սոցիալական պաշտպանության միջոցների ու եղանակների փաթեռով և այլ ձևերով ու մերողներով խրախուսմամբ ու խրանմանք,

– տվյալ վերափոխումների վերջնական արդյունք պետք է լինի հանրապետությունում այնպիսի մքնոլորտի ձևավորումը, որն առավելագույնս նպաստի բանակ-հասարակություն համակարգում փոխհարաբերությունների ու փոխօրոգության որակապես նոր մակարդակի ձևավորմանը՝ արդի քաղաքակրթության զարգացման այնպիսի հիմնարար սկզբունքին համապատասխան, ինչպիսին է զիտուրյան և կրթության առաջանցիկ զարգացումը:

<sup>3</sup> Տես «ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը ՀՀ ԶՈՒ-ի երիտասարդ սպաների համարակային առաջին համաժողովում»: «ՀՔ», 2012, հմ. 1–2:

## СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ВОЕННО-МЕДИЦИНСКОГО ОБРАЗОВАНИЯ КАК ОСНОВА МОДЕРНИЗАЦИИ МЕДИЦИНСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ АРМЯНСКОЙ АРМИИ

Б. Н. АРУТЮНЯН, полковник м/c в отставке, доктор медицинских наук, профессор,  
советник Министра обороны РА по военно-медицинским вопросам

### РЕЗЮМЕ

Для приведения качества военно-медицинского образования в соответствие с современными требованиями на перспективу представляется целесообразным: подготовку военно-медицинских кадров осуществлять по двум основным направлениям: организаторы военно-медицинской службы всех уровней, способные обеспечивать эффективную деятельность службы как в мирное, так и военное время и при чрезвычайных ситуациях, и лечащие врачи-профессионалы узкого профиля; постоянно совершенствовать учебные программы с учетом самых современных достижений как в области медицинских наук, так и обеспечивающих технологий и технических средств, а также модернизировать формы и методы процесса обучения на базе компьютерных технологий, моделей, ситуационных задач, имитационных тренажеров и других современных технических средств обучения; пересмотреть Болонские принципы в плане их применения в сфере военно-медицинского образования и условий армянской действительности и на

этой основе разработать и внедрить собственную версию данной модели; с внедрением Европейской накопительной системы кредитов ECTS обеспечить непрерывность военно-медицинского образования: специализация, усовершенствование, повышение квалификации, – включая и систему профессионального среднего медицинского образования, а также подготовки военных фельдшеров и санинструкторов; разработать и внедрить систему четкого представления военно-медицинской службой ВС РА заявок на подготовку военно-медицинских кадров по узким специальностям; обеспечить качественную работу с резервистами и их периодическую подготовку к действиям при объявлении мобилизационного призыва, и т. д.

Необходимо выделить следующие наиболее кардинальные вопросы: проблема модернизации военно-медицинской службы как составной части повышения боеспособности ВС РА, должна быть реализована на базе системного подхода с использованием современных технологий иозвучна качественным преобразованиям в сфере военно-медицинского образования и подготовки высококвалифицированных научно-педагогических кадров; интеграция военно-медицинской службы ВС в рамках расширения международного сотрудничества должна проводиться, наряду с учетом геополитических интересов других соображений, с большим акцентированием цели и форм более эффективного решения конкретных задач и приоритетных направлений развития и повышения уровня медицинского обеспечения ВС РА; в основу отбора кадров для военно-медицинской службы ВС должны быть заложены и такие принципы, как патриотизм и идеальная преданность национальным интересам, нравственность и гуманизм, призвание стать офицером Армянской армии; необходимо военных врачей – будущих офицеров ВС РА заинтересовать перспективой четкого карьерного роста, пакетом мер и способов социальной защиты и другими формами и методами стимулирования и поощрения; конечным результатом указанных преобразований должно стать создание в республике атмосферы, максимально способствующей формированию качественно нового уровня взаимоотношений и взаимодействия в системе «Армия–Общество» в соответствии с одним из основополагающих принципов развития современной цивилизации – опережающего развития науки и образования.

## IMPROVEMENT OF MILITARY MEDICAL EDUCATION SYSTEM AS A BASIS FOR MODERNIZATION OF MEDICAL SUPPORT OF THE ARMENIAN ARMY

B. N. HARUTYUNYAN, Retired Colonel of Medical Service, MD, Professor,  
Advisor to the RA Defense Minister on Military Medical Affairs

### SUMMARY

To bring the quality of the military medical education into line with the current requirements in prospect it seems reasonable to: carry out the training of military medical personnel in two main directions: organizers of military

medical service of all levels able to ensure the effectiveness of the service both in peace and wartime and in emergency situations, and attending physicians-professionals of narrow specialization; continuously improve the curriculum to reflect the most contemporary achievements in the field of medical sciences, as well as of providing technology and equipment, also upgrade the forms and methods of the training process based on computer technologies, models, case studies, simulators and other advanced training facilities; review the Bologna principles in terms of their use in military medical education and the conditions of the Armenian reality, and on this basis develop and implement own version of this model; with the introduction of the European Credit Transfer and Accumulation System (ECTS) ensure the continuity of military medical education: specialization, advanced training, professional development – including also the secondary vocational medical education system, as well as training of military medical assistants and sanitary instructors; develop and implement a system of clear-cut understanding of the military medical service of the RA Armed Forces of applications for training military medical personnel in narrow specialties; ensure quality work with reservists and their periodic training for action when mobilization call-up is declared, etc.

The following cardinal questions should be highlighted: the problem of modernizing the military medical service as a constituent of raising the combat effectiveness of the AF RA, should be carried out on the basis of systemic approach with an application of up-to-date technologies and be consonant with qualitative reforms in the sphere of military medical education and training of high skilled academic and teaching personnel; the integration of the military medical service in AF in the framework of developing international cooperation should be carried out alongside with taking into account the geopolitical interests of other considerations, with a more accentuation of the goal and the forms of more effective solutions to certain tasks and priority directions of development and raising the medical service level in the AF RA; such principles as patriotism and ideal commitment to national interests, morality and humanism, vocation to be an Armenian Army officer should be laid upon the basis of selection of the personnel for military medical service in the AF; military doctors—the future officers of AF RA—should be interested in perspectives of distinct promotion in their career, in a package of certain means and ways of social protection and other forms and methods of stimulation and encouragement; the aforementioned reforms should finally result in creating an atmosphere in the country contributing to the great extent to the development of a new high quality level of interrelations and interaction in the system of «Army-Society» in line with one of the fundamental principles of development of modern civilization—outstripping the development of the science and education.

## ՊԱՇՏՈՎԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱԴՐԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիլրությունների քեկնածող, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի «Հայկական բանակ» ռազմագիրական հանդեսի գլխավոր իսլբագրի պետակալ



Պաշտպանական համակարգում կադրերի ուսուցումը, դաստիարակությունը, վերապատրաստումը, հոգեբանական մասնագիտական կայացումն ու զարգացումը, ըստ պաշտոնների ուսցինալ բաշխումը ՇՈՒ-ի շինարարության գերակա խնդիրներից են: Այդ խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է ոչ միայն կադրային քաղաքականության բովանդակային ուղղությունների

հստակեցում, այլև այդ ուղղություններով կատարվող աշխատանքների գիտամեթոդական ապահովում դրանց արդյունավետության մեջացման նպատակով:

Այսպես. սպայական կադրերի պատրաստման համակարգի արդյունավետության մեջացումը ենթադրում է ուշադրության կենտրոնում պահել այն հանգամանքը, որ մասնագիտական գործունեությանը անձնավորության պիտանիությունը չի կարող կանխատեսվել միայն ըստ ուսման մեջ նրա առաջադիմության, քանի որ ուսումնական ընդունակությունները և պրակտիկ գործունեության ընդունակությունները շատ դեպքերում չեն համընկնում<sup>1</sup>: Ուստի, քաջի ուազմական կրթօջախների պրոֆեսորադասախոսական կադրերի ընտրությունից, գիտամանկավարժական կադրերի որակավորման մակարդակի բարձրացումից, կորսասների ուսուցման և դաստիարակման մեթոդների ու ձևերի կատարելագործումից, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի համայրումից, մենք ունենք մի խստ կարևոր խնդիր, այն է՝ ԲՌՈՒՀ ընդունվողների հոգեբանական մասնագիտական ընտրազատման\* համակարգի՝ որպես ուղղմակրթական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացման կարևոր գործոնի մշակումն ու գործարկումը:

Հոգեբանական մասնագիտական ընտրազատման ոլորտում իրականացվող աշխատանքների կոնկրետ նպատակները, այդ նպատակներին հասնելու տեխնոլոգիական հնարները ավելի լավ հասկանալու և այդ գործում ճիշտ կողմնորոշվելու համար նպատակահարմաք է ուսումնասիրել առաջատար պե-

<sup>1</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Սպայի անձնավորության ձևավորման հարցի շորք: «ՀՔ», 2004, հմ. 3–4:

\* Հոգեբանական մասնագիտական ընտրազատումը միջոցառումների համայիր է՝ ուղղված կազմակերպության անձնակազմի արդյունավետ ընտրության ապահովմանը: Այն հիմնվում է նաև նագիտական գործունեության պահանջներին անձնակազմի անհրաժեշտ հոգեֆիզիոլոգիական և անձնային հատկությունների զարգացման մակարդակի համապատասխանության զնահատման վրա (այդ մասին հանգամանորեն տես Ա. Գ. Մակլակով. Профессиональный психологический отбор персонала. Теория и практика. СПб., 2008):

տուրյունների փորձը: Նշենք, որ ներկայումս հոգեբանական մասնագիտական ընտրազատման մեթոդաբանության, մեթոդների ու տեխնիկական միջոցների մշակման, այդ ոլորտում առկա պրոբլեմների լուծման նպատակով դրանց ԶՈՒ-երում սպայական կորպուսի ձևավորման կադրային քաղաքականության կատարելազգործման<sup>2</sup> ընդհանուր շրջանակներում կատարվում են համապատասխան հետազոտական ու գիտագործնական ինտենսիվ աշխատանքներ<sup>3</sup>:

Հիմնվելով մասնագիտական գրականության<sup>4</sup> տվյալների վրա՝ Վ. Ա. Բողոքովն ու Վ. Յա. Օոլովը հանգում են այն եզրակացության, որ ԱՄՆ-ի արդյունաբերական ու ռազմական բնագավառներում մասնագիտական ընտրազատման համակարգի բազմամյա կիրառումը շատ արդյունավետ է: Մասնավորապես՝ ուսուցման ընթացքում «ոչ պիտանիների մաղումը» 30-40 %-ից հասցել է 5-8 %-ի, կառավարման համակարգերի հուսալիությունն աճել է 10-25 %-ով, մասնագետների պատրաստման ծախսերը նվազել են 30-40 %-ով: Օդաչուական ուսումնարաններ ընդունվողների մասնագիտական ընտրազատման շնորհիվ յուրաքանչյուր 100 օդաչուի պատրաստման համար կատարվող ծախսերը նվազում են 6 մլն դոլարով, իսկ թետերի մշակման վրա ծախսված յուրաքանչյուր մեկ դոլարը տալիս է 1000 դոլարի տնտեսում<sup>5</sup>.

Վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում ԱՄՆ-ի ԶՈՒ-ում մասնագիտական ընտրության պրակտիկայում լայն տարածում են ստացել հոգեբանական հարցարանները (Անձնավիրության ուսումնասիրման ստանդարտացված բազմագործոն մեթոդիկա (*MMPI*), 16 գործոնային անձնային հարցարան (*16-PF*), Այգենկի, Թեյլորի, Սպիլբերգի հարցարաններ, Հակումների որոշման Կուղերի թեսու, Հետաքրքրությունների պարզման Ստրոնգի թեսու և այլն), որոնք նախանշանակված են կոնկրետ հոգեբանական տիպին տվյալ հետազոտվողի պատկանելությունը որոշելու, հոգեբուժական ախտաբանություն ունեցողներին հայտնաբերելու, հետաքրքրությունները և հակումները պարզելու համար<sup>6</sup>:

Ներկայումս, հոգեբանական թեսուերից բացի, լայն կիրառություն են ստացել նաև որակավորման թեսուերը, որոնք կիրառվում են ինչպես մինչ աշխատանքի կամ ծառայության անցնելը, այնպես էլ ծառայության ընթացքում՝ պաշտոնեական առաջինադարձման, հերթական գինվորական կոչման շնորհման ժամանակ: Որակավորման թեսուից ստացված բացասական գնահատականը ԱՄՆ-ի բանակում հիմք է, որ հետևողություն արվի, որ տվյալ գիննառայողը լրացնից ուսման կարիք ունի կամ էլ պետք է նշանակվի մեկ այլ հաստիքի:

<sup>2</sup> Տես B. F. Күжисилин. Кадровая политика военного руководства США по формированию офицерского корпуса Вооруженных сил. «Зарубежное военное обозрение», 2001, № 2:

<sup>3</sup> Տես M. M. Решетников. Профессиональный отбор в системе образования, промышленности и армии США. «Психологический журнал», 1987, № 3:

<sup>4</sup> Տես նույն տեղում:

<sup>5</sup> Տես B. A. Бодров, B. Я. Орлов. Психология и надежность: человек в системах управления техникой. М., 1998, с. 221:

<sup>6</sup> Տես U. U. Ոհշեկուլիկով, Նշ. աշխ.:

Սպայական կազմի համար նման բացասական գնահատականը կարող է հիմք ծառայել հերթական զինվորական կոչման շնորհումը հետաձգելու և նույնիսկ ավելի ցածր պաշտոնի տեղափոխելու համար<sup>7</sup>:

Հարկ է նշել, որ մասնագիտական պիտանիության գնահատման ու կանխատեսման ընթացակարգը, մասնավորապես՝ դրա մերժուական և չափանիշային ապարատը, մեծապես կախված են կոնկրետ խնդրի էությունից: Կոնկրետ մասնագիտությամբ սովորելու համար թեկնածուների ընտրության խնդիրների լուծման դեպքում պիտանիության հիմնական չափանիշները որոշվում են ըստ հատուկ գիտելիքները հաջողությամբ յուրացնելու ունակության և նրանց մեջ որոշ մասնագիտական հմտություններ ձևավորելու հնարավորության: Եթե ընտրությունը կատարվում է սպային կոնկրետ հաստիքի նշանակելու նպատակով, ապա զնահատվում են նրա հատուկ մասնագիտական կարողությունները և միշտ անձնային հատկություններ, որոնցով պայմանավորվում է մասնագիտական գործունեության արդյունավետությունը<sup>8</sup>:

ՀՀ պաշտպանական համակարգում սպայական կադրերի պատրաստման որակի բարձրացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է մշակել ընդունելության ավելի կատարյալ համակարգ, որով նախատեսված լինի ԲՌՈՒՀ-ների դիմորդի ուսման և հետազա ծառայողական գործունեության համար կարևոր հատկությունների ամբողջ համալիրի զնահատումը: Դա հնարավոր կլինի, եթե ընտրագատման գործող չափանիշների հետ մեկտեղ ընդունելության ժամանակ հաշվի առնվել նաև դիմորդի հոգեբանական հատկությունները, այսինքն՝ կատարվի դիմորդի հոգեբանական մասնագիտական ընտրություն:

Սպայի անձնավորության ձևափորման գործում որպես անհրաժեշտ հատկություններ պետք է դիտվեն, մասնավորապես, որոշումների ընդունման և գործողությունների կատարման վճռականությունը, նախաձեռնողականությունն ու խնդնությունները, կարգավարժությունն ու կատարողականությունը, ներքին մտազգաստությունը, իրաման կատարելու պատրաստակամությունն ու կարությունը, գաղափարական համոզմունքը, հայրենասիրությունը, կազմակերպչական ընդունակությունները, ենթականներին ուսուցանելու, դաստիարակելու և համախմբելու կարողությունը, մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում հոգեբանական կայունություն լրացնելու ունակությունը:

Սպայի գործունեության առանձնահատկությանը համապատասխանող հմտությունների և կարողությունների ձեռքբերման, ինչպես նաև գիտելիքների յուրացման համար, բացի մտածողության, ուշադրության, հիշողության առանձնահատկություններից և այլ որակներից, անհրաժեշտ են միշտ հատկություններ ևս, որոնց ոչ պատշաճ զարգացման դեպքում անհմաստ է խոսել ԲՌՈՒՀ-ներում հաջող ուսման և առավել ևս՝ հետագայում գորերում արդյունավետ պրակտիկ

<sup>7</sup> Տես նոյն տեղում:

<sup>8</sup> Տես *И. А. Пишко. Технология и опыт развития профессионального психологического отбора кандидатов на военную службу по контракту в сухопутные войска Вооруженных сил Украины (организационно-психологический аспект)*, 2005 ([http://novyn.kpi.ua/2005-1/10\\_Pishko.pdf](http://novyn.kpi.ua/2005-1/10_Pishko.pdf)):

գործունեության մասին: Այդ հատկություններն են. ոացիոնալ ձևով մտածելու կարողությունը, հոգեբանական և բարոյական կայունությունը, նստաշանությունն ու գործունեությունը, կամքը, կոլեկտիվիզմի զգացումը, սերը դեպի ընտրած մասնագիտությունը, բարձր պատասխանատվության զգացումը և այլն<sup>9</sup>:

ԶՈՒ-ի համարման, սպայական կաղըերի ուսուցման, վերապատրաստման, գնահատման ու ատեստավորման աշխատանքների արդյունավետությունը պայմանավորված է այդ գործընթացների միասնականության ու համակարգայնության ապահովմանը: Այսինքն՝ ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի ատեստավորումը՝ որպես հոգեբանական մասնագիտական ընտրազատման համակարգի մի բաղադրիչ, կարող է արդյունավետ լինել, եթե գործարկված է այդ համակարգն ամրողությամբ: Ըստ այդմ՝ պետք է հստակեցվեն նախ՝ ԲՌ-ՈՒՀ ընդունվող դիմորդների ընտրության չափանիշները, ապա՝ կոնկրետ հաստիքներ զբաղեցնող սպաների գնահատման և ատեստավորման չափանիշները: Հակառակ դեպքում՝ ունալ արդյունավետության մասին խոսք լինել չի կարող: Ի վերջո, անձնակազմի գնահատումն ու ատեստավորումը կատարվում են նրա մասնագիտական ներուժային հնարավորությունները, մասնագիտական ձեռնիասության և անհատական գործունեության արդյունավետության միջն կազմը պարզելու նպատակով, ինչի հիման վրա էլ մշակվում են գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մասնագիտորեն նշանակալից հատկությունների ձևավորման ծրագրեր, որոնք պետք է իրագործվեն ռազմակրթական համակարգում: Ուստի բարձրագույն ռազմական կրթօջախներում ապագա սպաների ձևավորման համար անհրաժեշտ հատկությունների գնահատման չափանիշներ չունենալը կասկածի տակ է դնում ընդհանուր առմանը պաշտպանական համակարգում անձնակազմի գնահատումն ու ատեստավորումը: Մեր կարծիքով՝ անձնակազմի պատրաստման, վերապատրաստման, ոացիոնալ բաշխման հետ կապված մի շարք պրոբլեմային խնդիրներ միանգամայն հետին պլան կմղվեն, եթե մշակվի ու ներդրվի հոգեբանական մասնագիտական ընտրազատման օպտիմալ համակարգը՝ ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ: Ընդ որում, այն պետք է ներառի փոխսկապված, գիտականորեն հիմնավորված միջոցառումների և հետազոտությունների համախումբ, որի շնորհիվ կապահովվեն ինչպես ԲՌ-ՈՒՀ ընդունվողների, այնպես էլ գրային կառույցում կոնկրետ հաստիքի նշանակվող սպայի սոցիալ-հոգեբանական ու հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների, ապա և նրանց մասնագիտական գիտելիքների ու կարողությունների գնահատման ու ատեստավորման համակողմանիությունն ու փուլայնությունը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է հատակեցնել թե՝ ԲՌ-ՈՒՀ դիմորդի, թե՝ սպայի անձնավորությանը ներկայացվող մասնագիտական պահանջների համախումբը, մասնագիտական պիտանիության չափանիշները, ըստ մասնագիտությունների ընտրազատման և կաղըերի ոացիոնալ բաշխման սկզբունքները:

<sup>9</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Նշ. աշխ.:

## К ВОПРОСУ ПРОФЕССИОНАЛЬНОГО ПСИХОЛОГИЧЕСКОГО ОТБОРА КАДРОВ В ОБОРОННОЙ СФЕРЕ

*В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель главного редактора военно- научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

PE3IOME

Одной из приоритетных задач военного строительства является создание эффективной системы подготовки и переподготовки офицерских кадров, их должностного распределения. В этом плане актуальной представляется проблема разработки действенной системы профессионального психологического отбора (ППО) как для лиц, поступающих в ВВУЗы, так и при назначении на конкретную должность в войсковом звене. Концептуальность данного подхода подразумевает формирование системы взаимосвязанных научно обоснованных правовых, экономических, организационных и исследовательских процедур с целью обеспечения комплексности изучения личности будущего специалиста, целостности его психологического и психофизиологического обследования и системности анализа данных. Для достижения этих целей необходимо изучить и конкретизировать: совокупность профессиональных и психологических требований, предъявляемых как поступающему в ВВУЗ, так и офицеру; критерии профессиональной пригодности; принципы отбора и распределения по должностям.

## ON THE QUESTION OF PROFESSIONAL PSYCHOLOGICAL SELECTION OF THE COMMISSIONED STAFF IN THE DEFENSE SPHERE

*V. H. MARGARYAN, Colonel, PhD in Psychology, Associate Professor, Deputy Editor-in-Chief of the «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA*

## SUMMARY

The development an effective system of training and retraining of the commissioned staff and their service allocation is one of the priority tasks in the defense sphere making. In this respect it becomes of urgent importance to work out a viable system of professional psychological selection (PPS) both for those who apply to Military Academies and for those who are being assigned to certain positions in the defense link. The conceptuality of the given approach implies the formation of a system of interrelated and theoretically grounded legal, economic, organizational and research procedures aimed to provide a complex examination of an individual future expert as well as integrity of his/her psychological and psycho-physiological examination and the systemacy of the data analysis. With this end in view it is necessary to study and specify the complex of professional and psychological requirements set out to both the applicants to Military Academies and the commissioned officers, the criteria of professional compatibility and the principles of selection and service allocation.

## ՀՀ ԶՈՒ-ՌԻՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

**Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, փոխգնդապետ, հոգեբանական գիրուրյունների քեկմածող, ՀՀ ՊՆ ԱՈՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիրական հանդեսի ռազմագիրական խմբագրման բաժնի պետ**



Յանկացած կազմակերպության գործունեության հաջողությունը մեծապես կախված է կադրերի կառավարման համակարգի արդյունավետությունից, մի համակարգի, որը ներառում է կադրերի ընտրությունը, պատրաստումն ու վերապատրաստումը, տեղաբաշխումը, խրախուսման ու պատժման գործուն մեխանիզմները և այլն: Դա հատկապես կարևոր է զինված ուժերի համար, որտեղ գործում է միանձնյա զեկավարման ու հրամայականաստիճանակարգային կառավարման համակարգը, առանձնակի կարևորություն է տրվում կարգապահությանը և հրամանատարների ու պետերի հրամանների ու կարգադրությունների ճշգրիտ ու ժամանակին կատարմանը: Այս հանգամանքը խիստ պահանջներ է ներկայացնում ինչպես ենթականերին, այնպես էլ հրամաններ արձակողներին, որպեսզի նրանց հրամանները լինեն միանգամայն տեղին ու հասկանալի<sup>1</sup>:

Չննառայողների մասնագիտական առաջնաբացն ապահովելու տեսակետից առանձնակի նշանակություն ունի խրախուսման ու պատժման արդար համակարգի գոյությունը: Այսպես. «Հայաստանի Հանրապետության ռազմական դրվագինում» նշված է, որ «անձնակազմի կառավարման ոլորտի բարեփոխումը նախատեսում է՝ ... անձնակազմի պաշտոնեական առաջխաղացման ... հստակ մեխանիզմների սահմանում՝ միանական և բափանցիկ համակարգի ձևավորմամբ»<sup>2</sup>: Անձնակազմի կառավարման կարևոր բաղադրիչն է նրա ատեստավորումը, որը կադրերի զնահատման հիմնական գործիքներից է<sup>3</sup>: Ատեստավորել նշանակում է «կարծիք՝ բնութագիր տալ որևէ գործի պիտանիության համար»<sup>4</sup>: Ատեստավորումը հնարավորություն է տալիս ոչ միայն տվյալ կազմակերպության կամ դրա ստորաբաժնման դեկավարությանը պարզելու առանձին աշխատողների պիտանիությունը որոշակի պաշտոնի կամ նրա հեռանկարային աճման ներուժը, այլև իրեն՝ մասնագետին, պարզելու իր գիտելիքների մակարդակը և վերացնելու բացերը՝ դրանով իսկ ապահովելով իր մասնագիտական զարգացումը:

<sup>1</sup> Տես Ա. Մ. Մկրտչյան, ԶՈՒ-ի դեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Չիննաման ուժերի օրինակով: «ՀԲ», 2011, հմ. 1-2:

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության ռազմական դրվագինում»: «Աշխատանքային տեսրեկ», 2007, հմ. 4, էջ 53:

<sup>3</sup> Տես «Что такое аттестация персонала» (<http://www.tatsel.ru/delo/attestation/chto-takoe-attestaciya/>):

<sup>4</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1: Ե., 1969, էջ 205:

Ատեստավորման ժամանակ ստուգվում է տվյալ անձի չեղանակատրյումը (կոմպյուտենտությունը), այսինքն՝ գիտելիքները (կրթության արդյունքը), հմտությունները (աշխատանքային փորձի և ուսուցման արդյունքը), իր գործունեության մեջ այդ գիտելիքները կիրառելու կարողությունը: Ընդամենը այդ ձեռնիասությունը լինում է երկու նակարդակի՝ մասնագիրական (համապատասխան տվյալ պաշտոնին, այսինքն՝ իր գործառույթները ժամանակին ու ճշգրիտ, ստեղծագործարար կատարելու կարողություն) ու մեկուսախմբային (կազմակերպության նպատակների ու խնդիրների, կառուցվածքի, քաղաքականությունն ու գործունեությունը կանոնակարգող փաստարդերի իմացություն), և առնչվում է նրա անձնային հատկություններին (աշխատասիրություն, մարդամոտություն, ինքնազարգանալու ձգություն, ինքնուրույն համակարգված ու տրամաբանական նույնություն, ազնվություն ու պատվախնդրություն, արտաքին տեսքի վայելչության նկատմամբ ուշադրություն և այլն):<sup>5</sup>

ՈՒստի զինծառայողի՝ որպես հայրենիքի պաշտպանի ու նվիրյալ քաղաքցու ատեստավորման նկատմամբ եկակետային պետք է լինի հետևյալ նույնությունը. կարո՞ղ է արդյոք տվյալ անձը իր գիտելիքների, հմտությունների և անձնային հատկությունների հաշվառմամբ վարել տվյալ պաշտոնը, ինչպես նաև՝ զիտե՞՞ արդյոք պետության ռազմաքաղաքական դեկավարության նպատակներն ու դրանց հասնելու ռազմավարությունը, վերջինիս շրջանակներում իր խնդիրներն ու անելիքը և իր համապատասխան գործունեության իրավական հիմքերը:

Այսպես. ՌԴ ԶՈՒ-ում ատեստավորման ժամանակ ստուգվում են մասնագիտական պատրաստականության մակարդակը, դեկավար փաստարդերի, զինվորական կանոնագրքերի, հրահանգագրերի, գրադարած հաստիքի համար նախատեսվող պարտականությունների իմացությունը և այդ պարտականությունների կատարման որակը, անձնական կարգապահությունը և ճշտակատարությունը, իր և ենթականների նկատմամբ պահանջկուտությունը, առաջարկված խնդիրները որակյալ կերպով կատարելու, նախաձեռնություն ցուցաբերելու, քարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, իր գործունեությունը քննադատարար գնահատելու, ենթակա անձնակազմին դեկավարելու, ուսուցանելու և դաստիարակելու կարողությունը և այլ հատկությունները<sup>6</sup>:

Սովորաբար ատեստավորումը կատարվում է մի քանի փուլով՝ նախնական (ատեստավորման ներդրման նախագծի պատրաստում), մեթոդիկաների, ստանդարտների, կանոնների ձևարկում (համապատասխան փաստարդերի մշակում, դեկավարության կողմից կազմակերպական որոշումների ընդունում), փորձնական ատեստավորում (գործարկվում է պիլտային նախագիծը, ինչի ժամանակ ստուգվում և լրամշակվում են մեթոդիկաները), նախապատրաստական (անձնակազմի կառավարման (կադրերի) վարչության աշխատողները կատա-

<sup>5</sup> Տես «Что такое аттестация персонала»:

<sup>6</sup> Տես «О порядке организации и проведения аттестации военнослужащих, проходящих военную службу по контракту в Вооруженных Силах Российской Федерации». Приказ Министра обороны Российской Федерации от 29 февраля 2012 г. № 444 (<http://www.rg.ru/2012/06/01/voennie-dok.html>):

բուժ են նախապատրաստական խորհրդատվական աշխատանք՝ 2 շաբաթ առաջ ատեստավորվողներին հայտնում են ատեստավորման չափանիշները, քննության հարցերը, վարում են բացատրական գրույցներ, տեղեկացնում են, թե ինչ և ինչպես պետք է անել), ատեստավորման անցկացում (միջոցառումներ ըստ մշակված մերոդիկաների ու կանոնների), արդյունքների ամփոփում (կառավարյան որոշումների ընդունում, կողեւկտիվում արդյունքների քննարկում և այլն):<sup>7</sup>

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ հարցերը պետք է լինեն տարրերակված՝ ըստ մասնագիտությունների, կոնկրետ պաշտոնների՝ դրանց վկայագրերի հաշվառմամբ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ատեստավորման ժամանակ հիմնական շեշտը դրվում է ինչպես անկախ փորձագետների, այնպես էլ անմիջական դեկավարների փորձագիտական գնահատականների վրա՝ ատեստավորման թերթիկների լրացման և քննազրույցի միջոցով, իսկ թեստավորումն ունի միայն օժանդակ դեր՝ պատկերն ավելի հստակեցնելու համար: Ընդսմին հարցաշարերը հիմնականում կազմվում են հետևյալ սկզբունքով. հարցերի 10-15 տոկոսը վերաբերում է պետության իրավաբարաքական հիմքերին և ընդհանուր քաղաքականությանը, 10-15 տոկոսը՝ տվյալ կազմակերպության, իսկ մնացած մասը՝ մասնագիտական-հաստիքային գործառույթներին<sup>8</sup>: Հակառակ դեպքում արդյունքը կարող է լինել միանգամայն ոչ իրական. թեստերն անզիր արած վատ աշխատողը (որը, ի դեպք, ունի բավականաչափ ազատ ժամանակ) կարող է ունենալ շատ ավելի լավ արդյունք, քանի լավ աշխատողը, որն իր ծանրաբեռնվածության պատճառով չունի այդ ժամանակը:

Երբեմն ատեստավորման հարցաշարում ընդգրկվում են որոշակի թվով այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են մեկ կամ երկու աստիճանով բարձր պաշտոնների գործառույթներին, ինչը հնարավորություն է տալիս պարզելու տվյալ անձի հեռանկարային առաջխաղացման ներուժը: Բացի այդ, որոշ տեղերում փորձագիտական գնահատականներում հաշվի են առնվում նաև ենթականների կարծիքները, սակայն բանակում նման մոտեցման կիրառումը, ըստ մեզ, իմաստ աննպատակահարմար է, քանի որ կարող է բացասաբար ազդել աստիճանակարգության ու կարգապահության վրա:

Մեր կարծիքով՝ կա ատեստավորման փորձի հետ կապված ևս մի կարևոր հանգամանք: Փորձագիտական կարծիքում զգալի տեղ է հատկացվում բարձր պաշտոն զբաղեցնելու համար տվյալ անձի հոգեբանական պատրաստությանը, ինչը դժվար է որոշել հասարակ թեստավորմամբ: Դա նշանակում է, որ պետք է կատարվի նաև հոգեբանական լինտրազատում, իսկ դա պահանջում է հասուն մասնագիտական պատրաստությամբ մասնագետների ներգրավում<sup>9</sup>,

<sup>7</sup> Տես «Что такое аттестация персонала»:

<sup>8</sup> Տես, օրինակ, «Attestation Review of the Nebraska Military Department-Camp Ashland: July 1, 2007 Through January 31, 2010», Nebraska, 2010 ([http://www.auditors.nebraska.gov/APA\\_Reports/2010/SA31-05202010-Camp\\_Ashland\\_July\\_1\\_2007\\_through\\_January\\_31\\_2010\\_Attestation\\_Review.pdf](http://www.auditors.nebraska.gov/APA_Reports/2010/SA31-05202010-Camp_Ashland_July_1_2007_through_January_31_2010_Attestation_Review.pdf)):

<sup>9</sup> Մասնագիտական, այդ թվում՝ հոգեբանական, բնուրազատման մասին համզամանորեն տես Ա. Գ. Մակլակով. Профессиональный психологический отбор персонала. Теория и практика. СПб., 2008:

մինչդեռ անմիջական պետին և տվյալ ստորաբաժանման հետ մշտապես համագործակցող ստորաբաժանումների պետերին ավելի հեշտ է որոշել, թե կարող է արդյոք ատեստավորվողը հոգեբանորեն դիմանալ ավելի մեծ պատասխանատվորյան հետ կապված հոգեբանական ծանրաբեռնվածությանը:

Այսպիսով՝ ատեստավորումը կաղըրային ռեսուրսի կառավարման հուսափ և արդյունավետ գործիքներից է, որը հնարավորություն է տալիս լուծելու ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային խնդիրներ: Սակայն ատեստավորումը սիսալ կազմակերպելու դեպքում կարող է կոնկրետիվում առաջ թերել բացասական երևույթներ, ինչպիսիք են ասեկուսեները հովանավորչության կամ անարդարության մասին, անվստահություն իր ուժերի նկատմամբ, առաջքաշում այնպիսի անձերի, որոնք օրյեկտիվություն չեն կարող կատարել պետի պարտականությունները, և այլն:

Կան ատեստավորման արդյունավետ մեթոդիկաներ, սակայն պետք է հիշել, որ դրանք բոլորն ել «անձնավորված» են, այսինքն՝ մշակված են կոնկրետ կազմակերպություններում կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Ուստի նպատակահարմար կիմներ ՀՀ ԶՈՒ-ի համար գոյություն ունեցող մեթոդիկաների հիմքի վրա մշակել իր ուրույն մեթոդաբանությունը՝ հարմարեցված ՀՀ ԶՈՒ-ի պայմաններին ու պահանջներին:

Ելնելով վերը շարադրվածից՝ նպատակահարմար ենք համարում անել հետևյալ առաջարկությունները.

– ատեստավորումն անցկացնել տարրերակված եղանակով՝ տվյալ (կամ նախատեավող) պաշտոնի մասնագիտական-հաստիքային գործառույթների, կրթական ցենզի և հոգեբանական գործուների հաշվառմամբ,

– ապահովել ատեստավորման արդարությունն ու անցկացման ընթացակարգերի քափանցիկությունը՝ յուրաքանչյուր պաշտոնի համար ըստ դրա վկայագրի մշակված փոխհամաձայնեցված չափանիշների համալիրի ներդրմամբ,

– ատեստավորման հանձնաժողովները կազմել համապատասխան մասնագիտական ու զիտամանկավարժական որակավորում ու փորձ ունեցող անկախ փորձագետներից, որոնց հանձնարարել նաև հարցաշարերի կազմումը,

– ատեստավորման արդյունքների ամփոփման ժամանակ նախապատվորյուն տալ փորձագիտական գնահատականներին (ատեստավորման թերթիկներ և քննազրույց),

– նախքան ատեստավորումը ատեստավորվողներին բաժանել տիպային հարցաշարերը, որոնցում ներառված լինեն նաև իրավիճակային խնդիրներ, այսինքն՝ ստուգել ատեստավորվողի ոչ թե տվյալ թեմայի իմացությունը, այլ գիտելիքը՝ դրա կիրառման մակարդակով,

– հատակորեն սահմանել այն եզրագիծը, որից ցածր գնահատականների դեպքում է պաշտոնեական անհամապատասխանության հարցը, մյուս անբավարար արդյունքների դեպքում սահմանել ժամկետ, որում տվյալ ատեստավորվողը պետք է շտկի թերությունները (երկրորդվող ատեստավորումը):

**ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**



ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային համալսարանի՝ որպես  
պաշտպանական գիտակրթական համակարգի բարձրագույն քաղադրատարրի  
ստեղծման նախագծի բննարկումը.

Ճախից աջ՝ Հայաստանում ԱՄՆ-ի փոխդեսպան Բ. Դոնահյու,  
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական  
հետազոտությունների ինստիտուտի պետ, քաղաքական գիտությունների դոկտոր,  
գեներալ-մայոր Հ. Քորանջյան (նախագծի մշակման գիտական ղեկավար),  
ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության  
կենտրոնի առաջատար Վերլուծաբան, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի «Ռազմավարական  
փոփոխություններ» ծրագրի ղեկավար, վաստակավոր պրոֆեսոր, դոկտոր Ջ. Փրոլ,  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի՝ գիտության գծով տեղակալ, գիտավերլուծական կենտրոնի  
պետ, պատմական գիտությունների թեկնածու Բ. Պողոսյան

Երևան, 2012 թ. հունիսի 25



Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ  
Մարշալ Բաղրամյանի անվան ուսումնական զորամասում  
համակարգչային լսարանի բացումը.  
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան,  
Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախագահ Կ. Ավագյան  
Երևան, 2012 թ. սեպտեմբերի 14



Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար  
Յուկնախինի գլխավորած պատվիրակության այցը  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ՝  
ՀՀ ռազմական կրթության համակարգի զարգացմանը  
միջազգային խորհրդավական աջակցության շրջանակներում

Երևան, 2012 թ. հունիսի 25



ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դ. Տոնյանը  
և ՀՀ ՊՆ Կադրերի և ռազմական կրթության վարչության պետ Մ. Շիրինյանը  
վկայականներ են հանձնում քաղաքացիական հատուկ ծառայողներին

Երևան, 2011 թ. սեպտեմբերի 27



Թեկնածուական ատենախոսության պաշտպանություն ՀՀ ՊՆ ԱՌՀ-ում.  
Ժամանակակից աշխատավայր՝ ԱՌՀ-ի գիտնական-վերլուծաբան Մ. Ավետիսյան,  
«Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական  
խորհրդի նախագահի տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր Մ. Մարգարյան,  
խորհրդի նախագահ, քաղաքական գիտությունների դոկտոր, գեներալ-մայոր Հ. Զորանջյան,  
խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր Պ. Չորանյան

Երևան, 2012 թ. մայիսի 17



Մասնագիտական պարապմունք մարշալ Ա. Խանֆերյանցի անվան  
ավիացիոն ինստիտուտում



Նախնական զինվորական պատրաստում  
և հայրենասիրական դաստիարակություն

## К ВОПРОСУ ВНЕДРЕНИЯ ЭФФЕКТИВНОЙ СИСТЕМЫ АТТЕСТАЦИИ В ВС РА

З. Д. АСАТРЯН, подполковник, кандидат психологических наук,  
начальник отдела военно-научного редактирования  
военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА

### РЕЗЮМЕ

Аттестация является одним из основных инструментов оценки кадров. Существуют эффективные методики аттестации, однако все они разработаны применительно к конкретным организациям. Поэтому целесообразно на основе существующих методик разработать для ВС РА собственную методологию с учетом следующих требований: дифференцированность по каждой должности с учетом профессионально-штатных функций (70–80 % вопросов должны относиться к этим функциям); справедливость и прозрачность; включение в состав комиссии экспертов с соответствующими специальными и научно-педагогическими квалификациями; приоритетность экспертных оценок в отношении тестовых; четкое определение критериев должностного несоответствия с предоставлением возможности для устранения недостатков; включение в тесты ситуационных задач для определения способности применять теоретические знания на практике и т. д.

## ON THE QUESTION OF INculcATING AN EFFECTIVE MERIT RATING SYSTEM IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

Z. D. ASATRYAN, Lieutenant-Colonel, PhD in Psychology,  
Head of the Department of Defense-Academic Edition  
of the «Haykakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA

### SUMMARY

Merit rating is one of the main tools for personnel assessment. There exist effective methods of merit rating, however, all of them are applicable to certain organizations. That is why it is expedient for the Armed Forces of the Republic of Armenia to work out its own merit rating methodology based upon the existing methodologies. The following requirements should be taken into consideration: differentiation by each position taking into account the professional staff responsibilities (70-80 % of the questions should deal with those responsibilities); justice and transparency; inculcating experts with corresponding special and research and pedagogical qualifications in the commission; priority of expert assessments in relation to the rating ones; discrete definition of the criteria of one's job incompatibility with rendering opportunity to eliminate his/her inadequacies; including situational tasks in the tests so as to discern the testee's abilities to apply his/her theoretical knowledge into the practice and so on.

**ՈԱԶՄԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐԱԶԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**Ռ. Վ. ԱՌՈՒԶՈՒՄՅՅԱՆ, հոգեբանական զիրուրյումների քեկնածու,  
դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ**



Մարդու յուրաքանչյուր գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մարդկային գործոնով՝ նրա ուսուցման որակով ու արդյունքներով, այդ գործունեության համար բնորոշ հոգեբանական մասնագիտական անհրաժեշտ հատկությունների առկայությամբ։ Հոգեբանության մեջ այդ խնդրի լուծումը ապահովվում է հոգեբանական մասնագիտական ընտրազատմանը, ուսուցմանը, պատրաստմանը ու վերապատրաստմանը և մարդկային ռեսուլսների ճիշտ օգտագործմանը։ Նկատի ունենալով այն հաճախանքը, որ սպա-հրամանատարի և քաղաքական գործչի առաջավարական դերերում կազմակերպություն, մենք նպատակահարմար համարեցինք պաշտպանական համակարգի կաղղերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցը դիտարկել քաղաքական հոգեբանության դիրքերից՝ քաղաքական գործիչ-առաջավարի օրինակով։ Դա քացատրվում է այն փաստով, որ քաղաքական հոգեբանությունում, որը զարգացած է առաջատար երկրներում, կատարվել են մեծ թվով հետազոտություններ՝ կապված քաղաքական առաջավարի հոգեբանական դիմանկարի ուսումնասիրության հետ, թեև տարբեր երկրների հետազոտությունների արդյունքները տարբեր են և նույնիսկ կարող են հակասել միմյանց։ Մինչդեռ Հայաստանում այդպիսի հոգեբանական հետազոտությունների թիվը քավարար չէ, և դրանց արդյունքները հնարավորություն չեն տալիս գիտական հիմունքներով գործնականորեն կազմակերպելու հոգեբանական մասնագիտական ընտրազատմանը կարերի ուսուցման և պատրաստման, ճիշտ քաշխման գործընթացը։

Հոգեբանական մասնագիտական ընտրազատման հիմքում դրված են մասնագիտագիրը (սյուժեսիոգրամնամատական մասնագիտության հոգեբանական ընութագիրը) և հոգեկանագիրը (սպիհիոգրամնամատական մասնագիտական անհրաժեշտ հատկությունների համակարգը)։ Ըստ այդմ՝ նախ պետք է որոշել տվյալ անձի հոգեբանական ու մասնագիտական շրջանակները (մասնագիտագիրը), ապա կազմել հոգեկանագիրը, որում պետք է ներկայացվեն հոգեբանական մասնագիտական անհրաժեշտ հատկությունները։ Դա հնարավորություն կտա ստեղծելու գնահատման հոգեբանական մեթոդիկաներ (թեստեր), որոնցով կարելի է անցկացնել հոգեբանական մասնագիտական ընտրազատում։ Այս ճանապարհը դասական է և պահանջում է ժամանակ, ներդրումներ ու հոգեբանա-

կան մշակույթ: Անշուշտ, այդպիսի հետազոտություններ պետք է սկսել և դրանց տալ գերակա նշանակություն: Խսկ մինչ այդ նպատակահարմաք է.

– ղեկավար-հրամանատարական օղակի համար կադրեր պատրաստող բուհերի (ԲՌՈՒՀ-ների) ուսումնական ծրագրերը փոխել՝ ավելացնելով տեսական և գործնական դասընթացներ քաղաքական գործիշ պատրաստելու ուղղությամբ (օրինակ՝ անձի ճանաչման և կառավարման հոգեբանություն, հոետորական արվեստ, հաղորդակցման հոգեբանություն և այլն), ընդսմին որպես օրինակ կարելի է օգտագործել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում տեսարանների և ինժեներ-ֆիզիկոսների պատրաստման մոդելը,

– կազմակերպել ղեկավար-հրամանատարական օղակի կադրերի վերապատրաստում և վերառակավորում՝ օգտագործելով Հայաստանում գործող վերապատրաստման քազմաքիվ դասընթացների փորձը: Վերապատրաստման ամենակարևոր նպատակը պետք է լինի այնպիսի ստեղծարար մասնագետի ձևավորումը, որը կարողանար ժամանակին համահունչ և ճկուն կերպով մտածել ու որոշումներ ընդունել: Մասնավորապես՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան ունի համապատասխան մասնագետներ և հնարավորություններ,

– քանի որ քաղաքական առաջավարները լինում են երեք մակարդակի՝ փոքր խմբի առաջավար (նարտավարական օղակ), հասարակական շարժման, կազմակերպության կամ կուսակցության առաջավար (օպերատիվ օղակ), քաղաքական առաջնորդ (օպերատիվ-ռազմավարական օղակ), այդ մակարդակներից յուրաքանչյուրի համար կիրառել տարրեր հոգեբանական պահանջները: Այսպես առաջին մակարդակի համար դրանք պետք է լինեն կազմակերպական, գործարարական, քարտ խնդիրներով որոշումների ընդունման, ոչ ստանդարտ որոշումների ընդունման, հաղորդակցման, խմբի ներսում հոգեբանական քարենապատ մքնողրոտի ստեղծման և պահպանման ունակությունները: Երկրորդ մակարդակում այն անձն է, որի հետ կապված կոնկրետ սոցիալական շերտերը և խմբերը ունեն իրենց պահանջմունքների քավարարման սպասումները: Այստեղ կարևոր են այն անձնային հատկությունները, որոնց շնորհիվ խմբերում առաջնում է հավատ, հույս, որ իրենց սպասելիքները կիրականացվեն: Որքան անորոշ են լինում հասարակական շարժման նպատակներն ու խնդիրները, այնքան կարևոր է քաղաքական առաջավարի նշանակալիությունը: Երրորդ մակարդակում առաջնային դեր ունեն սոցիալ-հոգեբանական հատկությունները, որոնց շնորհիվ առաջնորդն ապահովում է տարրեր սոցիալական խմբերի պաշտպանությունն ու հավասարակշռությունը:

Անձնային հատկությունները առավելապես կարևոր են առաջին դեպքում, և հոգեբանական ընտրազատումն արդյունավետ կլինի հենց այդ փուլում: Մյուս փուլերում արդյունավետությունը պետք է ապահովվի համապատասխան ուսուցման և վերապատրաստման միջոցով, իհարկե, առանց հոգեբանական ընտրազատման նշանակությունն անտեսելու: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ երկրորդ և երրորդ մակարդակներում առաջնային են դառնում քարոյական հատկանիշները, որոնք գնահատելը շատ քարդ է:

Միևնույն ժամանակ, այն բոլոր հոգեբանական օրինաչափությունները,

որոնք պայմանավորում են մարդկային գործունեության հուսալիությունն ու արդյունավետությունը, անհրաժեշտ է կիրառել դեկավար-հրամանատարական կադրերի գործունեության կազմակերպման ժամանակ: Տվյալ մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու այդ կադրերի արհեստավարժությունը և որպես արդյունք՝ մեր նորաստեղծ պետությունը դարձնելու ժամանակակից և հզոր:

Այսախով՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

– դեկավար-հրամանատարական կադրերի գործունեության արդյունավետության մեծացման համար անհրաժեշտ է ձևավորել հետևյալ աստիճանակարգված համակարգը՝

- հոգեբանական մասնագիտական ընտրազատում,

- ուսուցում և պատրաստում,

- պարբերական վերապատրաստում և վերառուակավորում,

– գործունեության արդյունավետությունը ապահովում են ոչ թե առանձին հոգեբանական հատկությունների բարձր ցուցանիշներ, այլ հոգեկանագրի բոլոր հոգեբանական հատկությունների փոխսկապվածությունը: Հարաբերակցային վերլուծությունը հնարավորություն է տալիս ոչ միայն կազմելու և զնահատելու մասնագետի հոգեբանական դիմանկարը, այլև կազմակերպելու ուսուցումն ու պատրաստումը՝ համակշռիչ (կոմպենսացիոն) հնարավորությունները,

– հոգեբանական դիմանկարի առկայությունը հնարավորություն է տալիս կազմակերպելու հոգեբանական ծառայություն, որը կկատարի անհատական խորհրդատվություն և խմբային աշխատանք (քրենինգներ):

Ժամանակն է անցնելու դեկավար-հրամանատարական կադրերի գործունեության կազմակերպելու հոգեբանական ծառայություն որպես կատարական հայաստանի միջոցներին և մերողներին:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռ. Վ. Աղուլումյան, Քաղաքական առաջնորդ. քաղաքականության որոշ անձնային առումներ: «ՀԲ», 2008, հմ. 2-3:
2. Գ. Բարսեղյան, Գ. Հարությունյան, Քաղաքական PR. նրա դրսնորման հայաստանի առանձնահատկությունները: Ե., 2009:
3. С. Иванова. Искусство подбора персонала. М., 2004.
4. Д. В. Ольшанский. Политическая психология. СПб., 2002.

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО ПСИХОЛОГИЧЕСКОГО ОТБОРА ВОЕННЫХ КАДРОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ

*Р. В. АГУЗУМЦЯН, кандидат психологических наук, доцент, заведующий кафедры  
психологии управления академии государственного управления Республики Армении*

### РЕЗЮМЕ

С учетом определенной схожести лидерских ролей офицера-командира и политического деятеля проблемы профессионального психологического отбора (ППО) в оборонной системе могут быть рассмотрены с позиций политической психологии, в которой проведены многочисленные исследования по выявлению профессионально-психологических качеств, необходимых политическому лидеру. Методика ППО политических лидеров основана на составлении профессиограммы и психограммы. ППО имеет особое значение на начальных этапах деятельности руководящих-командных кадров. Представляется важным создание иерархической системы обеспечения эффективности и надежности их деятельности, включающей поэтапно: психологический отбор и подготовку; переподготовку и повышение квалификации; организацию психологической службы для индивидуального консультирования и групповых тренингов.

### SEVERAL ASPECTS OF PROFESSIONAL PSYCHOLOGICAL SELECTION OF THE MILITARY PERSONNEL FROM THE VIEWPOINT OF POLITICAL PSYCHOLOGY

*R. V. AGHUSUMCYAN, PhD in Psychology, Associate Professor, Head of the Chair  
of Psychology of Governance at the State Public Administration Academy  
of the Republic of Armenia*

### SUMMARY

With the account of certain similarities in the roles of commanding officers and policy-makers the problems of professional psychological selection (PPS) in the defense sphere may be dealt with from the viewpoint of political psychology. Experts in political psychology have done numerous researches so as to educe the professional psychological qualities indispensable for a political leader. The methodology of PPS of political leaders is based upon drawing out professiograms and psychograms. The significance of the PPS is of special importance at the initial stages of the work practice of the commanding staff. It is important to build up a hierarchical system providing means for the effectiveness and reliability in their practice. This very system should include stage by stage the psychological selection and training; retraining and advanced training; management of psychological services both for individual consulting and group trainings.

**ՊԵՏՈՒԹԵՆԱԾԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՎԱԾԻՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԿՈՍՈՎՈՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ\***

**Գ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ԱԳՆ Սպառագինուրյունների վերահսկման  
և միջազգային անվտանգության վարչուրյան ՆԱՏՕ-ի բաժնի վարիչ,  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ասպիրանտ**



Կոսովոյի շուրջ տեղի ունեցող քաղաքական-իրավական զարգացումները լուրջ քննարկումների առարկա են միջազգային իրավունքի մասնագետների և քաղաքագետների շրջանում: Այդ քննարկումների առանցքային մաս են կազմում 2008 թ. փետրվարի 17-ին Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը, Կոսովոյի անկախության ճանաչումը 91 պետությունների կողմից<sup>1</sup>, Եւրայալ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 3 մշտական անդամները (ԱՄՆ, Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա), Արդարադատուրյան միջազգային դատարանի (ԱՄԴ) 2010 թ. հուլիսի 22-ին ընդունած Խորհրդակցական կարծիքը՝ «Կոսովոյի կողմից անկախության միակողմանի հռչակման՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանության վերաբերյալ»<sup>2</sup>, ինչպես նաև Կոսովոյում մինչ օրս շարունակվող միջազգային քաղաքացիական և ռազմական ներկայությունը՝ ի դեմք 4 հիմնական դերակատարների՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի:

Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման տեսակետից Կոսովոյի դեպքի ուսումնասիրությունն արդիական է դիտվում հատկապես հետևյալ առումներով.

Կոսովոյի պարագայում միջազգային կառույցները (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ և ՆԱՏՕ) գործում են համաձայն ՄԱԿ-ի 1244-րդ (1999 թ.) բանաձևի<sup>3</sup> դրույթների և իրականացնում են բազմաբնույթ գործառույթներ՝ սկսած բազմաշերտ և գործուն խաղաղապահությունից (robust peacekeeping), ժողովրդավարական հաստատութենաշինությունից մինչև պետութենաշինություն ու տնտեսական վերակառուցում: Մասնավորապես՝ «Կոսովոյի ուժերը» (Kosovo Force (KFOR)) ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ իրականացնում են գործուն խաղաղապա-

\* Հողմածում ներկայացված տեսակետները հեղինակին են և չեն արտահայտում ՀՀ պաշտոնական դիրքորոշումներ:

<sup>1</sup> 2012 թ. սեպտեմբերի 1-ի դրույթամբ Կոսովոյի անկախությունը ճանաչել է 91 պետություն (առևտությունը՝ «Who Recognized Kosovo as an Independent State?» կայքը (<http://www.kosovothankyou.com>)):

<sup>2</sup> Տես «Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo». International Court of Justice, 22.07.2010 (<http://www.icj-cij.org/docket/files/141/15987.pdf>):

<sup>3</sup> Տես «UN Security Council Resolution 1244 (1999)» (S/RES/1244 (1999)), 10.06.1999 (<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement>):

հուրյուն (*robust peacekeeping*), Կոստվոյում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի առաքելությունը (*United Nations Interim Administration Mission in Kosovo (UNMIK)*) իրականացնում է Կոստվոյի վարչական կառավարումը և ստեղծումից մինչև 2008 թ. Կոստվոյի կողմից անկախության հոչակումը փաստացի կառավարել է այն: Կոստվոյում ժողովրդավարական հաստատությունների և ժողովրդավարության ամրապնդման ուղղված աշխատանքները կատարվում են ԵԱՀԿ առաքելության աջակցությամբ, Եվրոպական Միությունը աջակցում է Կոստվոյի վերակառուցմանը և տնտեսական զարգացմանը, իսկ 2008 թ. դեկտեմբերից *UNMIK*-ը օրենքի գերակայության հաստատման ուղղված իր գործառույթները փոխանցեց Կոստվոյում ԵՄ-ի Օրենքի գերակայության առաքելությանը<sup>4</sup> («European Union Rule of Law Mission» (EULEX)):

Կոստվոյի ժամանակավոր կարգավիճակը, նրա կողմից անկախության հոչակումն ու մի շարք պետությունների կողմից ճանաչումը և Կոստվոյի խնդրի հանգուցալուծումը որպես առանձահատուկ դեպք (*sui generis*) ներկայացնելը\* (թեև այն ԱՄԴ կարծիքում չի ամրագրված) պայմանավորված է այն հանգամանքով, որ անջատման ճգոտող սուբյեկտների կողմից դրանք ժողովրդական իրավունքի և վերականգնողական անջատման (*remedial secession*) իրավունքի տեսության զարգացման տեսանկյունից կարող են ընկալվել որպես նախադաշտ: Թեև Կոստվոյի դեպքը ներկայացվում է որպես *sui generis* դեպք, սակայն Կոստվոյի վերաբերյալ ԱՄԴ-ի ընդունած խորհրդատվական կարծիքը պարունակում է նախադեալ տարրեր, ինչը համապարփակ ուսումնասիրության կարիք ունի:

### Միջազգային քաղաքացիական և ռազմական ներկայությունը Կոստվոյում

Կոստվոյում իրականացվող խաղաղաշինությունը և գործուն խաղաղապահությունը պետք է դիտարկել 4 միջազգային կազմակերպություններին (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ և ՆԱՏՕ) ՄԱԿ-ի ԱԽ-ի 1244-րդ բանաձևով սահմանված գործառույթների տիրույթում: Այս ներակատարների միջև համագործակցությունն ու գործառույթների համակարգումը հույժ կարևոր են, թեև ոչ միշտ է, որ դա հաջողվում է: Այսպես. Օյա Դուրզան-Օսկանցայի բնորոշմամբ՝ «միջազգային կազմակերպությունները տանգ պարելիս տրորում են մեկը մյուսի ոտքը». Կոստվոյում քաղաքացիական պատերազմի ավարտից 11 տարի հետո միջազգային

\* Կոստվոյում ԵՄ-ի առաքելության (EULEX) գործունեության մասին ավելի հանգամանքուն տես Erika de Wet. The Governance of Kosovo: Security Council Resolution 1244 and the Establishment and Functioning of EULEX. «The American Journal of International Law», 2009, Vol. 103, Issue 1, PP. 83–96:

\* Կոստվոյի՝ որպես առանձնահատուկ դեպքի (*sui generis*) ներկայացումը հիմնավորվում է մի քանի փաստականությունով, մասնավորապես, Հարավսլավիայի վիտակումն ուղեկցվեց բանություններով, 1999 թ. Արևմտյան իրականացրեց հումանիտար միջանություն՝ Կոստվոյում հումանիտար ճգնաժամի խորացումը կանխելու նպատակով, սկսած 1999 թվականից Կոստվոյի փաստացի կառավարումը իրականացվել է ՄԱԿ-ի կողմից, նաև Հարավսլավիայի, հետազոտությունների կողմից Կոստվոյի նկատմամբ ինքնիշխանության սառեցումը՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի 1244-րդ բանաձևով, ինչպես նաև Կոստվոյի կարգավորման Աստիճանի առաջարկի հիման վրա Սերբիայի և Կոստվոյի միջև բանակցություններում առաջընթաց շինելը և այլն:

հանրությունը այդ հետհակամարտային հասարակություններում (Բոսնիա և Հերցեգովինա, Կոսովո, –Գ. Հ.) դեռ չի հասել ցանկալի արդյունքների»<sup>5</sup>:

1999 թ. հունիսին սկսեց գործել 4 հիմնական ուղղություններ (pillar) ներառող՝ Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի առաքելությունը<sup>6</sup> (*UNMIK*)՝ յուրաքանչյուր ուղղության համար պատասխանատու նշանակվեցին ՄԱԿ-ի Գ.Ք հատուկ ներկայացուցչի տեղակալները, մասնավորապես՝ 1-ին ուղղության՝ քաղաքացիական ժամանակավոր վարչակարգի ստեղծման իրազործումն ստանձնեց ՄԱԿ-ը, 2-րդ ուղղությունը՝ մարդասիրական աջակցության, փախստականների և ներքին տեղահանվածների հետ կապված հարցեր, դրվեց ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերազույն հանձնակատարի գրասենյակի վրա\*, 3-րդ ուղղության՝ ժողովրդավարացման և հաստատութենաշինության իրականացման դեկավար կառույցը ԵԱՀԿ-ն է, և 4-րդ ուղղությունը՝ վերակառուցում և տնտեսական զարգացում, դրվեց Եվրամիության վրա:

Չուզահեռներ անցկացնելով Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի միջև՝ կարող ենք փաստել, որ այն վերոհիշյալ գործառույթները, որոնք Կոսովոյում իրականացվում են ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի կողմից՝ վարչական կառավարումից, ժողովրդավարական հաստատութենաշինությունից, տնտեսական վերակառուցումից մինչև գործուն խաղաղապահություն, իրականացվում են նաև Լեռնային Ղարաբաղի դեպքում ու ոչ պակաս արդյունավետությամբ, սակայն մի շատ կարևոր տարրերությամբ՝ ԼՂՀ-ում այդօրինակ գործառույթներն իրականացվում են իր իսկ ուժերով՝ ՀՀ և Սփյուռքի աջակցությամբ: Մասնավորապես՝ աշխարհասփյության շանքերով վերականգնվում են ԼՂՀ կենսապահովման ենթակառուցվածքները և տնտեսությունը (Կոսովոյի դեպքում՝ ԵՄ-ի կողմից), ԼՂՀ իշխանությունները Հյայատանի աջակցությամբ և փորձի փոխանակման միջոցով մշակել և ընդունել են ԼՂՀ Սահմանադրությունը, իրականացնում են ԼՂՀ վարչական կառավարումը (Կոսովոյի դեպքում՝ ՄԱԿ-ի), ժողովրդավարության ամրապնդումը և հաստատութենաշինությունը (Կոսովոյի դեպքում՝ ԵԱՀԿ-ի), օրենքի գերիշխանությունը և արդարադատությունը (Կոսովոյի դեպքում՝ ԵՄ-ի *EULEX* առաքելության<sup>7</sup>), իսկ խաղաղության և անվտանգության

<sup>5</sup> *Oya Dursun-Ozkanca.* Does it take four to tango? A comparative analysis of international collaboration on peacebuilding in Bosnia and Herzegovina and Kosovo. «Journal of Balkan and Near Eastern Studies», 2010, Vol. 12, Issue 4, P. 456.

<sup>6</sup> Stu «Report of the Secretary-General Pursuant to Paragraph 10 of Security Council Resolution 1244 (1999)» (S/1999/672), 12.06.1999 (<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/175/05/IMG/N9917505.pdf?OpenElement>):

\* ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերազույն հանձնակատարի գրասենյակի կողմից Կոսովոյում փախստականների և ներքին տեղահանվածների վերաբարձր բարեհաջող ավարտելուց հետո 2-րդ ուղղությունը 2001 թ. նայիսից փոխարինվեց Խստիկանության և արդարադատության ուղղությամբ:

<sup>7</sup> Թեև *EULEX* առաքելությունն ստեղծվել է ԵՄ-ի Խորհրդի 2008 թ. փետրվարի 4-ի որոշմամբ, սակայն սկսել է իր ամբողջական գործառության կարություններով գործել 2009 թ. ապրիլից: *EULEX*-ի լիազորությունները սահմանվել են ԵՄ-ի Խորհրդի որոշմամբ (տես «COUNCIL JOINT ACTION 2008/124/CFSP of 4 February 2008 on the European Union Rule of Law Mission in

ապահովումը (Կոսովոյում՝ ՆԱՏՕ-ի KFOR առաքելության միջոցով), իրադադարի ռեժիմի պահպանումը, անիրածեշտուրյան դեպքում նաև հարկադրման (*enforcement*) միջոցառումները՝ ուղղված խաղաղության ամրապնդմանը, իրականացվում են ԼՂՀ Պաշտպանության բանակի առաքելությամբ:

Փաստացի ոչ միայն այս գործառույթների իրականացումը ԼՂՀ-ում պակաս արդյունավետ չէ, քան Կոսովոյում՝ միջազգային կազմակերպությունների կողմից, այլև ներկայում ԼՂՀ-ն իր ժողովրդավարության զարգացման տեսմանը գերազանցում է Ալբրեժանին և Էամբս նպաստում է տարածաշրջանում կայունության և անվտանգության ամրապնդմանը:

Էնն-Մարի Գարդները առաջ է քաշում այն թեզը, թե՝ որքան տվյալ շճանաշված պետությունում կամ ոչ պետական սուբյեկտում բարձր է ժողովրդավարության, հատկապես՝ մարդու իրավունքների հարգման մակարդակը, մեծ են հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու ձգումը և բազմաէթնիկ հասարակության ձևափորման հանձնառությունը, այնքան մեծ է տվյալ սուբյեկտին միջազգային հանրության ցուցաբերած աջակցությունը<sup>8</sup>: Ըստ այդ՝ Կոսովոյի համար առաջնային էին համարկում ժողովրդավարացումը, օրենքի գերակայության հաստատումը և մարդու իրավունքների հարգմանն ուղղված ջանքերը<sup>9</sup>: Այդ էր պատճառը, որ 2003 թ. UNMIK-ը առաջ քաշեց «չափանիշներ մինչև կարգավիճակը» կարգախոսը\*:

Չուզագաղաքայի կողմանը անցկացնելով Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի միջև՝ Էնն-Մարի Գարդները նշում է, որ միջազգային հանրության կողմից որդեգրած «չափանիշներ մինչև կարգավիճակը» հասկացությունը կիրառելի է նաև ԼՂՀ-ի համար: Որքան ԼՂՀ իշխանություններն ամրապնդել են ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների հարգումը, այնքան մեծացել է միջազգային հանրության աջակցությունը ԼՂՀ-ին<sup>10</sup>:

Հայկական կողմը՝ ՀՀ Նախագահի մակարդակով, ԵԽ-ի և ԵՄ-ի ամբիոններից ներկայացրել է ԼՂՀ ժողովրդավարության փաստարկը՝ այդ կառույցներին կոչ անելով անմիջականորեն աշխատելու ԼՂՀ իշխանությունների հետ: Այսպես, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ «Հայաստանը մշտապես կարևորել

---

Kosovo, EULEX Kosovo». «Official Journal of the European Union» ([http://www.eulex-kosovo.eu/en/info/docs/JointActionEULEX\\_EN.pdf](http://www.eulex-kosovo.eu/en/info/docs/JointActionEULEX_EN.pdf)):

<sup>8</sup> Տես Anne-Marie Gardner. Democratic governance and non-state actors. New York, 2011:

<sup>9</sup> Մասնավորապես՝ ՍԱԿ-ի ԱԽ-ի Նախագահի 2003 թ. հայտարարության մեջ նշված է. «Վերահստատելով «Զափանիշներ մինչև կարգավիճակ» քաղաքականությունը՝ Խորհուրդը շեշտում է, որ 1244-րդ բանաձևին (1999) համապատասխան՝ Կոսովոյի ապագա կարգավիճակի որշման գործընթացում հետաքա առաջնական կախված կլիմի այս համապարփակ վերանայման դրական արդյունքից» (տես «Statement by the President of the Security Council» (S/PRST/2003/26), 12.12.2003 (<http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N03/654/29/PDF/N0365429.pdf?OpenElement>)):)

\* Կոսովոյի համար սահմանված չափանիշները 8-ն են՝ գործունակ ժողովրդավարական հաստատությունների կայացում, օրենքի գերիշխանության հաստատում, ազատ տեղաշարժի ապահովում, ժամանակավոր տեղահանությունների վերադարձ և հետիմտեգրում, տնտեսության զարգացում, սեփականության իրավունքի պաշտպանություն, Քելքադի հետ երկխոսության հաստատում և Կոսովոյի պահպանության կրտսության ստեղծում:

<sup>10</sup> Տես Էնն-Մարի Գարդներ, Նշ. աշխ., էջ 72–73:

Է Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ ուղիղ շփումների և ԵՄ-ի ներկայացուցիչների Ղարաբաղ պարբերական այցելությունների անհրաժեշտությունը: Մենք քազմից շեշտել ենք, որ Լեռնային Ղարաբաղը եվրոպական ընտանիքի մաս է, նույն արժեքների կրողն է և հետապնդում է ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության վրա հիմնված հասարակարգ ձևավորելու նպատակներ»<sup>11</sup>:

Թեև հայկական կողմն իր փաստարկներում օգտագործում է ԼՂ-ում ժողովրդավարության զարգացածության հանգամանքը<sup>12</sup>, սակայն կարծում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես միջազգային, առավելապես եվրոպական, չափանիշներին համապատասխանող ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգման և օրենքի գերակայության ամրապնդման ուղղակիծը որդեգրած պետության մասին թեզը պետք է ավելի շեշտադրված լինի, գիտականորեն զարգացվի և օգտագործվի ԼՂ հիմնահարցի ներկայացման առաջնային դրույնների շարքում: Մեր կարծիքով, եթե չճանաչված, բայց դեֆակտո գոյություն ունեցող պետությունը զարգանում է մարդու իրավունքների հարգման, ժողովրդավարության և օրենքի գերակայության արմատավորման ճանապարհով, ապա այն պետք է ստանա միջազգային հանրության աջակցությունը: Եվ այն դեպքերում, եթե միակողմանի ինքնորոշմանը անկախության ձգողող սուրբեկուն իր զարգացման տեմպերով ու ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգման ցուցանիշներով անհամեմատ ավելի բարձր դիրքերում է, քան մետրոպլիսամ, որից նա ցանկանում է անջատվել, և որդեգրել է ազատական արժեհամակարգը, շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելը\*, ապա միջազգային հանրությունը ոչ թե պետք է մերժի, այլ ընդհակառակը՝ քաջալերի և համապատասխան օժանդակություն ցուցաբերի վերջինիս կողմից գործադրած ջանքերին, ինչպես դա արվեց Կոստնոյի պարագայում: Խաղաղության հաստատման ժողովրդավարական սկզբունքների (*democratic peace*) տեսության լույսով՝ կայացած ժողովրդավարություն ունեցող երկրները միմյանց դեմ սպոնտար չեն պատերազմում, այլ հակված են կնճռու հարցերը կարգավորելու խաղաղ ճանապարհով, և այս առումով տվյալ չճանաչված սուբյեկտի ժողովրդավարացումը, կայունությունն ու կանխատեսնելիությունը միայն կարող են նպաստել շրջապատող անվտանգային միջավայրի և հարատև խաղաղության ամրապնդմանը: Ավելին, այդ կանխատեսելիությունը չճանաչված պետությունը դարձնում է միջազգային համայնքի համար հուսալի գործընկեր:

Այս համատեքստում անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որպեսզի մինչև ԼՂ

<sup>11</sup> «Մերժ Սարգսյանը Բելգիայում համույթում է ունեցել Եվրոպական հանձնաժողովի նախագահ ժողեւ Սանուել Բառողուի հետ», 06.03.2012 (<http://president.am/events/news/arm/?pn=5&id=2046>):

<sup>12</sup> Տես Հայկ Ս. Քորանչյան, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան: Ե., 2009, էջ 627–628:

\* Տվյալ տերմինները բնորոշ են խաղաղության հաստատման ազատական սկզբունքների (*liberal peace*) տեսությանը:

վերջնական կարգավիճակի որոշումը միջազգային կառույցների, նաև առանձին պետությունների և ՀՀ ժողովրդի կողմից ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանությունների միջև գտնվեն և հաստատվեն մարդու իրավունքների, ժողովրդավարական հաստատությունների և օրենքի գերակայության ամրապնդման ոլորտներում անմիջական համագործակցության ձևաչափեր:

**Դիտարկումներ Կոսովոյի անկախության հոչակման իրավաչափության վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական կարծիքի լուսավորության վերաբերյալ 2010 թ. հուլիսի 22-ին ԱՄԴ-ի խորհրդատվական կարծիքը պարունակում է մի շարք փաստարկումներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար: Թեև Կոսովոյի անկախության կողմնակիցները Կոսովոյի պրոբլեմի հանգույալուծումը համարում են *sui generis* և շեշտվում է, որ այն չի կարող նախադեպ լինել այլ հակամարտությունների կարգավորման համար, այնուամենայնիվ, այն պարունակում է նախադեպի տարրեր\*, որոնք կարող են կիրառելի լինել նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից: Միջազգային իրավունքի պրոֆեսոր Հուրստ Հանումը նշում է, որ «Զնայած յորահատկության վերաբերյալ պարունակումներին, դժվար է Կոսովոյի միակողմանի հոչակագիրը առանձնացնել որպես տարբերվող բոլոր նրանցից, որոնք տարրեր փուլերում արվել են Հարավային Օսերիայի, Արխագիայի, Լեռնային Ղարաբաղի, .... կողմից»<sup>13</sup>:**

Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի միջև գուգահեռներ տանելիս մենք հարկ ենք համարում շեշտել հետևյալ հանգամանքները:

1. ԱՄԴ-ն փաստեց, որ Կոսովոյի կողմից անկախության միակողմանի հոչակումը չի խախտում միջազգային իրավունքի նորմերը<sup>14</sup>, քանի որ միջազգային իրավունքը չի բովանդակում որևէ արգելվ՝ ամբողջ ժողովրդի կամքը արտահայտող նրա ներկայացնությունների կողմից հոչակելու անկախությունը: Այսինքն՝ անկախության հոչակումը միջազգային իրավունքի տեսանկյունից չի համարվում անօրինական ակտ: Այս համատեքստում ՀՀ-ի կողմից անկախության հոչակումը նույնպես չի կարող միջազգային իրավունքի տեսանկյունից համարվել անօրինական:

2. ԱՄԴ-ը փաստորեն եզրակացնում է, որ տարածքային ամբողջականութ-

\* Օրինակ՝ Դատավոր Յուսուփը իր Առանձին կարծիքում նշում է, որ ԱՄԴ-ի կարծիքը «կարող է բյուր մեկնարանի որպես միջազգային իրավունքի դրամակներում նմանօրինակ (անկախության) հոչակագիրի օրինականացում բոլոր տեսակի անջատողական խմբերի կամ սուբյեկտների կողմից, որոնք կամ հոչակել են, կամ ծրագրում են հոչակել իրենց անկախությունը» (տես «Separate Opinion of Judge Yusuf», para. 6, P. 2 (<http://www.icj-cij.org/docket/files/141/16005.pdf>)): Իսկ Դատավոր Կորուման իր Տարակարծության մեջ նշում է, որ «Դատարանի կարծիքը որպես ուղեցույց և հանձնարարական դասագիր կծառայի ամբողջ աշխարհի անջատողական խմբերի համար, և միջազգային իրավունքի կայունությունը էապես կրուլան» (տես «Dissenting Opinion of Judge Koroma», para. 4, P. 2 (<http://www.icj-cij.org/docket/files/141/15991.pdf>)):

<sup>13</sup> Hurst Hannum. The Advisory Opinion on Kosovo: An Opportunity Lost, or a Poisoned Chalice Refused? «Leiden Journal of International Law», 2011, Vol. 24, Issue 1, P. 161.

<sup>14</sup> Տես «Accordance with International Law...», para. 122, P. 43:

յան սկզբունքի կիրառման շրջանակները սահմանափակվում են միայն պետությունների միջև հարաբերություններով<sup>15</sup>, և այն պետք է դիտարկել միջազնության հարթության մեջ: Այսինքն՝ դրանով փաստվում է, որ Կոսովոյի կողմից անկախության հռչակումը չի կարող որևէ կերպ խախտել Սերբիայի տարածքային ամբողջականությունը, քանի որ, ինչպես նշվեց, տարածքային ամբողջականության սկզբունքը\* կիրառվում է ոչ թե ոչ-պետություն սուբյեկտի և պետության, այլ պետությունների միջև հարաբերություններում<sup>\*\*</sup>: Այս տեսանկյունից հետաքրի հարցադրում է անում միջազգային իրավունքի պրոֆեսոր Ռ. Խրիստակիսը, որը նշում է՝ «Կընկալե՞ն արդյոք պետությունները ՍԱԿ-ի ԱԽ-ի կամ որևէ այլ միջազգային կազմակերպության երաշխիքները՝ ինքնավարության կամ ժամանակավոր միջազգային վարչակարգի հետ կապված միջոցառումների դիմաց հարգելու իրենց տարածքային ամբողջականությունը, գիտենալով, որ տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառումը սահմանափակվում է պետությունների միջև հարաբերությունների ոլորտով, և որ այս երաշխիքը պարտավորություն չի դնում անջատողական շարժմանը, որը կարող է օգտագործել այդ իրավիճակը իր անկախությունը հռչակելու և գործուն կառավարում հաստատելու համար: Այս տեսակետից Կոսովոն «նախադեպ» է, և՝ վաս նախադեպ: Այն, ինչ ասում է դատարանը «տարածքային ամբողջականության» վերաբերյալ, կարող է պետություններին դարձնել իրենց անջատողական հակամարտություններում միջազգային ներգրավման նկատմամբ ծայրաստիճան թերահավաս հենց այն պահին, եթե կինդի դրա ամենամեծ անհրաժեշտությունը»<sup>16</sup>.

3. Կոսովոյի պարագայում օգտագործվում են և՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, և՝ վերականգնողական անջատման (*remedial secession*) իրավունքի տեսությունը: Հիմնավորումն այն է, որ եթե կենարունական կառավարության կողմից անտեսվում են ինքնորոշման ձգտող սուբյեկտի ինքնակառավարման սկզբունքները, կանոնավոր կերպով խախտվում են մարդու հիմնարար

<sup>15</sup> Տես նոյն տեղում, պար. 80, էջ 30:

\* Կոսովոյի անկախության իմմանափրումների շարքում որպես ծանրակշիռ փաստարկ նշվում էր, որ ԱԽ-ի 1244-րդ բանաձևով (1999), փաստարեն, առկասվում էր Կոսովոյի նկատմամբ Սերբիայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության իրավունքը: Խոկ Քրիստոփեր Բորգենի իր հոդվածում ոչարդույթը է դարձնում, որ ՀԴՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարգումը իշխառակվում է ոչ թե ՍԱԿ-ի ԱԽ-ի 1244-րդ բանաձևի (1999) գործառական նասում, այլ միայն նախարանում (տես Christopher Borgen. Is Kosovo a Precedent? Secession, Self-determination and Conflict Resolution (<http://www.wilsoncenter.org/sites/default/files/MR350Borgen.doc>)):

\*\* Նման եղանակում է անում նաև Ռալֆ ՈՒայլը ԱՄՊ-ի Խորհրդական կարծիքի 79–84 պարագաֆների վերլուծության ժամանակ՝ մասնավորապես նշելով, որ «Բոլոր ոչ-պետությունների աշխարհում այժմ ներ ի նկատի կունենան, որ համաձայն այս տեսակետի, ի հայտ չի գա լինիանոր միջազգային իրավունք, որը նրանց կարգի անկախության հռչակումը» (տես *Ralph Wilde. Self-Determination, Secession, and Dispute Settlement after the Kosovo Advisory Opinion. «Leiden Journal of International Law», 2011, Vol. 24, Issue 1, P. 152, նաև «Written Statement of USA», 17.04.2009, P. 69 (<http://www.icj-cij.org/docket/files/141/15640.pdf>)).*

<sup>16</sup> Theodore Christakis. The ICJ Advisory Opinion on Kosovo: Has International Law Something to Say about Secession? «Leiden Journal of International Law», 2011, Vol. 24, Issue 1, PP. 85–86.

իրավունքները, տեղի են ունենում եթիկական գորումներ և ցեղասպանություն, տվյալ սուբյեկտի ներկայացուցիչները ներկայացված չեն պետության կառավարման համակարգում և չեն օգտվում հավասար իրավունքներից, ինչպես նաև խախտվել է այդ սուբյեկտի ներքին ինքնորոշման իրավունքը\*, ապա նման դեպքերում ինքնորոշման ձգող սուբյեկտն իրավունք ունի միակողմանիորեն անջատվելու իր «ծնող» պետությունից՝ վերականգնողական անջատման իրավունքի կիրառման միջոցով: ԼՂՀ պարագայում՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա խարսխվող անկախության իրավաչափության հիմնավորությունը կարող է լրացնել վերականգնողական անջատման իրավունքի տեսությամբ՝ այն նույն փաստարկներով և տրամարանությամբ, որով հիմնավորվում է Կոսովոյի անջատման իրավունքը, իսկ Աղքադանի շարունակվող ազրեսիվ կեցվածքը, պատերազմական հոեսորդաբանությունը և ներկայումս ԼՂ-ի շուրջ ծևավորված անվտանգային միջավայրը ավելի են ամրապնդում նրա վերականգնողական անջատման իրավունքը:

4. Կոսովոյի՝ որպես *sui generis*-ի դեպքի ներկայացումը գտնվում է առավելապես քաղաքական հարթության մեջ: Կոսովոյի վերաբերյալ ԱՄՆ-ի խորհրդատվական կարծիքում չի ամրագրվում այն փաստը, որ Կոսովոյի կողմից անկախության հոշակումը նյուտոների համար նախադաս չէ: Ռալֆ Ուայլը իր հոդվածում եզրակացնում է, որ «Կոսովոն դեռ կլինի դեֆակտո Սերբիայից անկախ, և ամրող աշխարհում այլ ոչ-պետություն խնդրեր, եական չէ՝ օգտվում են, թե ոչ ինքնորոշման իրավունքից, կհամոզվեն, որ իրենց ձգումների հեռանկարները գլխավորապես գտնվում են ոչ թե միջազգային իրավունքի, այլ միջազգային քաղաքականության տիրություն, քանի որ ինքնորոշման իրավունքը և տարածքային ամրողականության իրավունքը կհարգվեն կամ չեն հարգվի այնպիսի եղանակով, որն առնչություն չունի հետևողականության և անկողմնակալության հետ»<sup>17</sup>:

\* Հետաքրքրական է, որ Կոսովոյի անկախության ճանաչման հակառակորդները ժողովուրդների ինքնորոշման իրավունքը մեկնարանում էին ոչ թե արտաքին ինքնորոշման, այլ ինց ներքին ինքնորոշման իրավունքի (*right to internal self-determination*) տեսանկյունից:

<sup>17</sup> Ռալֆ Ուայլը. Նշ. աշխ., էջ 154:

## ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

### МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГОСУДАРСТВОСТРОИТЕЛЬСТВА И МИРОСТРОИТЕЛЬСТВА В КОСОВО

Г. М. ОГАНЕСЯН, аспирант ИНСИ МО РА, руководитель отдела НАТО Управления по контролю над вооружениями и международной безопасности МИД РА

#### РЕЗЮМЕ

В статье рассматривается международный опыт государствостроительства и миростроительства в Косово, осуществляемых в целях поддержания мира и стабильности в регионе. Отмечается, что между Косово и Нагорным Карабахом можно провести много параллелей, в частности, и в

ցանկանալ բուժվել և որքան հնարավոր է արագ	ունենալ բարձր մակարդակի գիտելիքներ և կարողություններ՝ հիվանդի պրոբլեմների լուծման համար
օգտվել արհեստավարժ բժշկական օգնությունից և համագործակցել բժշկի հետ	գործել ոչ թե հանուն իր անձնական շահերի, այլ՝ հիվանդի և հասարակության առողջության
բույլատրվում է (անգամ սպասվում է) բողնությունները և սոցիալական պարտականությունների կատարման (աշխատանք, ուսում, ծառայությունների մատուցում և այլն)	իմել օրյեկտիվ ու հավասարակշռված (զգահաստել բուժվող հիվանդի վարքագիծը իր արժեքային համակարգի տեսակետից կամ էլ շարժագանքել հույզերին)
դիտվում է որպես կարիքով պայմանավորված անհրաժեշտություն, ի վիճակի չէ ապարհնելու իր որոշումներով ու ցանկություններով	գործել արհեստավարժ կերպով, ըստ պրակտիկայի և տեսության բոլոր հնարավոր նույնությունների ու կանոնների

արտակարգ իրավիճակներում դերերի հիմնական հատկանիշները ձեռք են բերում տարբեր նշանակություն: Ուազմարժշկական պրակտիկայում հիվանդի ինքնուրույնության սահմանափակումը չունի բախումնածին բնույթ, ընդհակառակը՝ ապահովում է պատշաճ որակով բժշկական օգնության տրամադրումը: Այդ վարկածը բազմաթիվ անգամներ է ապացուցվել տեսականորեն և գործնականում բժշկության սոցիոլոգիայի մեթոդներով:

Պատերազմի պայմաններում զինվորական բժիշկների սոցիալական դերերում տեղի է ունենում զերակայությունների փոփոխում. մարտական գործողությունների հետևանքով բժիշկ-զինծառայողի կարգավիճակում սկսում է գերակշռել նրա՝ որպես սպայի դերը: Հակառակ դրան՝ վիրավորների դեպքում հիվանդի սոցիալական դերը զերակշռում է զինծառայողի սոցիալական դերի նկատմամբ: Դա բացատրվում է այս հանգամանքով, որ նրանք կարիք ունեն շտապ բժշկական օգնության և ի վիճակի չնն կատարելու իրենց ծառայողական պարտականությունները՝ պայմանավորված զինծառայողի կարգավիճակով:

Զինվորական բժշկի և հիվանդի հարաբերություններում կարևոր է նաև այն հարցը, թե զինվորական բժիշկը ծառայության անցնելուց հետո ինչ ժամանակահատվածում է հարմարվում զինվորական կյանքին: Տվյալ դեպքում մասնագետների հարմարումն ունի բավական բարդ հոգեֆիզիոլոգիական հիմք և, կախված ելակետային շարժառիթավորումից, կարող է լիարժեք կերպով ձևավորվել ծառայության 5-6-րդ տարիներին: Ուազմարժշկական բուհերի շրջանավարտները շատ ավելի մեծ դժվարությամբ են հարմարվում զինծառայող-սպայի դերին, քան բժշկի: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այս խնդրի վրա, քանի որ տվյալ հանգամանքը կարող է անմիջականորեն անդրադառնալ ՀՀ ԶՈՒ-ի ուազմարժշկական համակարգում կադրային ներուժի ամրապնդման վրա<sup>5</sup>:

<sup>5</sup> Զինվորական բժիշկ-մասնագետների գիտելիքների ու գործնական հնարժությունների մակարդակի բարձրացման հիմնախնդիրների գիտական վերլուծությունը տես *Ա. Փարսապանյան, ՀՀ ԶՈՒ-ի ուազմարժշկական ծառայության զարգացման որոշ հայեցակարգային հարցեր: «ՀԲ», 2011, հմ. 4:*

Ուազմական բժշկության ոլորտում հիվանդի իրավունքների իրացումը գործնականում կախված է ոչ թե նրա կողմից որոշում ընդունելու ունակությունից, այլ այդ որոշումն ընդունող բժշկի ընտրությունից: Ընդհանրապես, առողջապահության ոլորտում կարելի է առանձնացնել երեք կատեգորիայի հիվանդների:

– նրանք, ովքեր ի վիճակի չեն որոշում ընդունելու ֆիզիոլոգիական պատճառներով,

– նրանք, ովքեր որպես հիվանդ կարող են և ցանկանում են իրենց հայեցողությամբ տնօրինել իրենց առողջության ճակատագիրը:

Ուազմաքաղական բնագավառում գերակշռում են առաջին և երկրորդ կատեգորիաների հիվանդները: Կարելի է հետևողություն անել, որ թեև անառողջ զինծառայողի գերակա ու վարքագիծը որոշող սոցիալական դերը նրա հիվանդ լինելն է, սակայն բուժսպասարկման գործընթացում նրա համար առկա են օբյեկտիվ, անհրաժեշտությամբ պայմանավորված սահմանափակումներ:

Քաղաքացիական բժշկի և զինվորական բժշկի դերերի տարրերությունը հիմնականում պայմանավորված է վերջինիս բնորոշ այն առանձնահատկությամբ, որ նա միաժամանակ կատարում է երկու սոցիալական դերերի գործառույթներ՝ մասնագետ-բժշկի և զինծառայող-սպայի, ընդունելու խաղաղ պայմաններում դրանք հավասարակշռված են, իսկ պատերազմի ժամանակ գերակշռում է սպայի դերը, ինչն էլ պահանջում է կազմակերպչական ու կամային հատկությունների ավելի մեծ շեշտվածություն<sup>6</sup>: Ավելին, հիվանդ զինծառայողը կանգնած չէ ընտրության առջև՝ դիմելու կամ չդիմելու բժշկին, քանի որ դա անում է հրամանատարը:

Բժշկի և հիվանդի փոխհարաբերությունների ցանկացած տարրերակ ենքառում է հարգանք հիվանդի առողջության և նրա իրավունքների նկատմամբ: Քաղաքացիական և ռազմական բժշկության մեջ հիվանդի բուժման ընտրությունը դրսնորվում է տարրեր ձևերով՝ խորիրդակցական տարրերակից մինչև որոշման միանձնյա ընդունում: Ուազմական բժշկության մեջ բժիշկը պետք է առանձնակի ուշադրությամբ վերաբերվի հիվանդի շահերին, որովհետև այս դեպքում զինվորական բժշկի ծառայողական (մասնագիտական) պարտականությունների կատարման հենքը նրա կողմից հիվանդի բուժման կազմակերպումն է՝ վերջինիս ինքնուրույնության որոշակի սահմանափակումների պայմաններում:

Զինվորական հոսպիտալներում անցկացված սոցիալական հարցումների<sup>\*</sup> արդյունքներով՝ զինվորական բժիշկներն իրենց համարում են, առաջին հերթին, բժիշկ (հարցվածների 83 տոկոսը), ապա նոր՝ զինծառայող: Շատ դեպքերում նրանք հիվանդների հետ հարաբերություններում նախապատվությունը

<sup>6</sup> Տես «Военно-медицинская подготовка (для студентов медицинских институтов)». Под ред. Ф. И. Комарова. М., 1984, с. 5:

\* Սերկայացված հարաբերակցությունը որոշվել է ըստ հոսպիտալային օդակների զինվորական բժիշկների ջրանում 2012 թ. հեղինակի մասնակցությամբ կատարված սոցիոլոգիական հարցումների, որոնք ներկայում գտնվում են ամփոփիչ վերլուծության փուլում:

տալիս են հրամայական տարբերակին: Հիվանդ զինծառայողները բժիշկներին նույնացնում են հրամանատարների հետ (68 տոկոսը) և այդ հարաբերություններում նույնպես ընդունում են հիվանդի ստորադասությունը:

Սույն համառոտ վերլուծությունը վկայում է, որ ուզմաքաջկական պրակտիկայում բժիշկների ու հիվանդների հարաբերություններն ունեն որոշակի յուրահատկություն և այնպիսի կողմեր, որոնք բուժապատճենան բարելավման համար պահանջում են անընդհատ կատարելագործում: Այս առումով ՀՀ ԶՈՒ-ի ուզմաքաջկական ծառայության զարգացման համար արդիական են զինծառայողներին ու նրանց ընտանիքներին բժշկական ծառայությունների տրամադրման, անհրաժեշտ տեխնիկայով հազեցման, նորագոյն տեխնոլոգիաներով համարման ու միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հիմնախնդիրները, որոնց հետևողական լուծումը խթան կլինի նաև զինվորական բժիշկների սոցիալական կարգավիճակի և զինվորական բժիշկ – հիվանդ զինծառայող փոխհարաբերությունների որակի բարձրացման, ոլորտի կադրային քաղաքականության արդյունավետության, ուստի և Զինված ուժերի մարտունակության պահպանման հնարավորությունների մեծացման համար:

## ԾԱԶԱՐԱԽՏԱՅԻՆ ԵՐԻԿԱՄԱԽՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

- Ք. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ, ք/օ կապիկան, բժշկական զիրուրյունների թեկնածու,  
ԵՊԲՀ ՌԴԹԱ ղոցենկ, Վ. Վ. ԾԱՏՈՒՐՅԱՆ, ք/օ մայոր, բժշկական  
զիրուրյունների թեկնածու, ԵՊԲՀ ՌԴԹԱ ղոցենկ,  
Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, ք/օ զմղապետ, բժշկական զիրուրյունների ղոկպոր,  
պրոֆեսոր, ԵՊԲՀ ուզմաքաջկական ֆակուլտետի պետ



Չաքարախսոր բավական տարածված հիվանդություն է. ղրանով տառապում է ամբողջ աշխարհի բնակչության մոտ 10 %-ը: Մասնավորապես՝ ՀՀ-ում կա շորջ 100 հազ. հիվանդ:<sup>1</sup> Այդ հիվանդության տարածվածությունը տարեցտարի աճում է: Ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ տիպի շաքարախսոր բնորոշ բարդությունն է երիկամախստությունը: Զարգացած երկրներում շաքարախստային երիկամախստությունը այսօր դարձել է սահմանային երիկամային անբավարարության հիմնական պատճառը: ՈՒստի պետք է սպասել, որ շաքարախստով հիվանդների թվի աճման համեմատ կամի նաև սահմանային երիկամային անբավարարության պատճառների կառուցվածքում շաքարախստային երիկամախստության դերը:

<sup>1</sup> Տես Դ. Դավիթյան, Մի քանի տարի անց կունենանք 300 մլն շաքարախստով հիվանդ: «Առավոտ», 2011 թ. նոյեմբերի 14 (<http://www.aravot.am/2011/11/14/6354/>):

Երիկամների քրոնիկական հիվանդություններով հիվանդների մոտավորայես կեսը տառապում է սակավարյունությամբ: Դա նշանակում է, որ երիկամային սակավարյունության զինավոր պատճառներից մեկը կարելի է համարել շաքարախտը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ շաքարախտային երիկամախտության ժամանակ սակավարյունությունը զարգանում է ավելի հաճախ ու վաղ և ընթանում է ավելի ծանր, քան երիկամների այլ բնույթի հիվանդություններով հիվանդների դեպքում<sup>2</sup>, ինչը հաստատվում է նաև մեր ուսումնասիրություններով: Սակավարյունությունը անցանկայի ազդեցուրյուն է գործում հիվանդների կյանքի որակի վրա, նվազեցնում է նրանց աշխատունակությունը և ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմադրողականությունը, ճնշում է սեռական ու ճանաչողական ֆունկցիաները, ուղեկցվում է տարրեր տեսակի ախտանիշներով (հնոց, զինապատույտ, վատ ախտրժակ և այլն): Շաքարախտով հիվանդների դեպքում սակավարյունությունը հաճգեցնում է մեծ ոխսայնությամբ անբարեհաջող ելքերի կանխատեսման (անկախ երիկամախտության ծանրությունից): Եթե արյան միզանյութի ազոտը հասնում է 36 մմլ/լ և ավելի արժեքների, իսկ կրեատինի շիճուկային կոնցենտրացիան գերազանցում է 265–442 մկմլ/լ արժեքները, հենոզլորինի կոնցենտրացիան դառնում է 70 գ/լ-ից փոքր: Դա պայմանավորված է երկու պատճառներով՝ միզարյունության ֆոնի վրա երիբրոցիտների կյանքի կտրուկ կրծատմամբ և երիկամների ախտահարման հետևանքով երիբրոպնետինի արտադրության նվազմամբ<sup>3</sup>:

Զանի որ երիկամային սակավարյունության ախտածագումը (պարոզենեզը) մեծապես պայմանավորված է երիկամներով արտադրվող երիբրոպնետինի (սպիտակուց) պակասուրդով, ուստի արվել է ենթադրություն, որ երիկամախտով հիվանդների դեպքում դրա վաղ կիրառումը կարող է հաճգեցնել ավելի բարեհաջող կանխատեսումների<sup>4</sup>:

Սակավարյունության ախտորոշման չափանիշն է հենոզլորինի մակարդակի նվազումը. կանաց համար՝ 120 գ/լ-ից և տղամարդկանց համար՝ 130 գ/լ-ից ցածը<sup>5</sup>: Եթե առաջնորդվենք այդ չափանիշով, ապա կստացվի, որ սակավարյունությունը հասուն է 1-ին կամ 2-րդ տիպի շաքարախտով տառապող յուրաքանչյուր չորրորդ հիվանդին:

Սակավարյունության զարգացման ռիսկը էապես մեծանում է շաքարախտային երիկամախտության նշաններ ի հայտ գալու դեպքում (երիկամների ֆունկցիայի նվազում և/կամ սպիտամիզուրյուն (ալրումնուրիա):

Թեև շաքարախտավորների երիկամային սակավարյունությունը կարող է պայմանավորված լինել տարրեր պատճառներով (երկարի պակասուրդ,

<sup>2</sup> Տես «Анемия при заболеваниях (болезнях) почек» ([humbio.ru/humbio/har/00061e20.htm#00699104.htm](http://humbio.ru/humbio/har/00061e20.htm#00699104.htm)):

<sup>3</sup> Տես նույն տեղում:

<sup>4</sup> Տես, օրինակ, J. Q. Hudson, R. M. Samery. Darbepoetin alfa, a new therapy for the management of anemia of chronic kidney disease. «Pharmacotherapy», September 2002 ([www.ncbi.nlm.nih.gov/pubmed/12222584?dopt=Abstract](http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/12222584?dopt=Abstract)):

<sup>5</sup> Տես, օրինակ, Б. И. Шупутко, С. В. Макаренко. Стандарты диагностики и лечения внутренних болезней. 3-е допол. изд. СПб., 2005:

քաքնված արյունակորուստ և այլն), դրա զարգացման գործում առաջնային դեր է խաղում էրիթրոցիտների առաջացումը կարգավորող և երիկամների կեղևային շերտի շուրջխողովակային (*peritubularlymphocytes*) թելքաքիզներով (ֆիբրոադենոմաներով) արտադրվող էրիթրոպուտինի-զիկոպորոտինի պակասությունը:

Շաքարախսով հիվանդների օրգանիզմում էրիթրոպուտինի արտազատնան խախտման պատճառը, հավանաբար, երիկամների խողովականերիուսվածքի (*tubulouointerstitialis*) ախտահարումն է, որը, ինչպես և սակավարյունությունը, նախորդում է կծիկային զոման (*glycotoxicity* ֆալուրացիա) արագության նվազմանը: Կծիկային զոման արագությունը (ԿԶԱ) որոշվում է հետևյալ երկու բանաձևերով.

ա) Քոկրոֆտ-Գոլտի (*Cockcroft-Gault*) բանաձև:

$$\text{ԿԶԱ} = n \times \frac{(140 - \text{տարիք}(\text{տարի})) \times \text{մարմնի} \text{ զանգված}(\text{կգ})}{\text{արյան} \text{ կրեատինին}(\text{մկմոլ/լ})},$$

որտեղ  $n=1,23$  տղամարդկանց համար (նորման 90-150 մլ/ր),

$n=1,05$  կանանց համար (նորման 90-130 մլ/ր),

բ) *MDRD* (*Modification of Diet in Renal Disease*)-ի բանաձև:

$\text{ԿԶԱ} = 170 \times \text{շիճուկի} \text{ կրեատինին} (\text{մգ}/\text{դլ})^{-0,999} \times \text{տարիք}^{-0,176} \times \text{միզանյութի} \text{ մնացուկային} \text{ ազոտ}^{-0,17}(\text{մմոլ}/\text{l}) \times \text{շիճուկի} \text{ սպիրտի} \text{ (ալքումին)} \text{ կոնցենտրացիա}^{0,318}(\text{գ}/\text{l})^x 0,762$  (կանանց դեպքում):<sup>6</sup>

Շաքարախսային երիկամախսության սկզբնական փուլերում նկատվում են ծորանմերի հիմնարանքի (*базальная мембрана канальцев*) տափակացում, և կարելի է ենթադրել, որ էրիթրոպուտինի արտադրող ներիուսվածքային (*интэрститиальная*) քիզների վճարվելը կամ ծորանմերի, շուրջխողովակայային թելքաքիզների ու էնդրելերի միջև փոխգործության խախտումը նպաստում են էրիթրոպուտինի արտազատնան նվազմանը: Որոշ հեղինակներ առաջարկում են այդ հորմոնի արտադրությունը դիտել որպես շաքարախսի ժամանակ տեղի ունեցող խողովականերիուսվածքային փոփոխությունների ծանրության գծանշչչ:

Հավանաբար, սակավարյունության զարգացմանը կարող է հանգեցնել ոչ միայն խողովականերիուսվածքի քիզների վճարվածությունը, այլև հյուսվածքի թրվածնայնացման (*оксигенация*), էրիթրոպուտինի և հեմոգլոբինի միջև հետադարձ կապի մեխանիզմների խախտումը: Հօգուտ տվյալ վարկածի է խոսում այն փաստը, որ և շաքարախսավորները, և սակավարյունությամբ հիվանդները պահպանում են հակագրումն սուր թրվածնի սակավությանը: Անգիստենզին վերափոխող ֆերմենտի (*ԱՎՖ*) ինիիրիտացումը քրոնիկական երիկամային անբավարարությամբ հիվանդների օրգանիզմում հանգեցնում է արյան մեջ *Ac-SDKP* էրիթրոպեզ-տետրապեպտիդ ֆիզիոլոգիական ինիիրիտորի մակարդակի կարուկ բարձրացմանը: Ընդսմին ԱՎՖ ինիիրիտորներով բուժման դեպքում հիվանդներին անհրաժեշտ է ավելի մեծ շաքարաժիններով էրիթրոպուտին:

<sup>6</sup> Տես *M. B. Шестакова, С. А. Мартынов. Анемия при диабетической нефропатии: диагностика и лечение. Под редакцией академика РАН и РАМН И. И. Дедова. с. 4 ([http://www.voed.ru/anemia\\_nefr.pdf](http://www.voed.ru/anemia_nefr.pdf)):*

Պահպանվող երիկամային համախտանիշով հիվանդների օրգանիզմում սպիտակուցական բարգավարարության զարգացման դեպքում շրջանառող երիթրոցիտների զանգվածը կարող է զգալի չափով նվազել, քանի որ հիմնական փոխանակման նվազմանը համապատասխան կնվազի երիթրոպոետինի արտադրությունը: Սակայն սակավարյունության ծանրության մասին ստուգաբար կարելի է դատել միայն արյան ալլազմայում սպիտի (ալբումին) բնականոն մակարդակի վերականգնումից հետո:

Սակավարյունությունը գրուզովիմ է շաքարախտի այնպիսի անորային բարդությունների զարգացման բարձր ռիսկի հետ, ինչպիսիք են շաքարախտային երիկամախտությունը, ցանցենախտությունը (ռետինոպարիա) և նյարդախտը (*hepatopatia*): 2-րդ տիպի շաքարախտով հիվանդների օրգանիզմում հեմոգլոբինի ցածր կոնցենտրացիայի դեպքում կարելի է կանխատեսել երիկամների ախտահարման արագ զարգացում: Հարկ է նշել, որ սակավարյունությունն ինքնին չի առաջացնում միկրոանորախտ (միկրոանցիոպարիա), այլ կարող է դիտվել որպես դրա դրսություն: Դա հճարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու է սակավարյունությունը հանդես գալիս որպես միկրոանորախտին բարդությունների ռիսկի գծանշիչ:

Երիկամային սակավարյունության հիմնական բուժումը մարդու ռեկումբինատային երիթրոպոետինի կիրառումն է: Երիթրոպոետինի պատրաստուկները (*preparatory*) օգտագործվում են ներերակային կամ ներմաշչային ներարկմամբ: Շատ հաճախ երիկամային սակավարյունության բուժման համար օգտագործում են բետա երիթրոպոետին (ռեկլրմն):

Երիկամային սակավարյունության բուժման վերաբերյալ եվրոպական հանձնարարականներում խորհուրդ է տրվում երիկամների բոլոր քրոնիկական հիվանդներին, որոնց հեմոգլոբինի մակարդակը 110 գ/լ-ից ցածր է, նշանակել երիթրոպոետին\*: Ընդունին նշանակվող չափարաժինը պետք է սահմանվի ըստ հիվանդի արյան մեջ հեմոգլոբինի պարունակության և շտկման փուլում՝ ամսական 10-20 գ/լ աճման ապահովմամբ: Այդ փուլում արյան մեջ հեմոգլոբինի մակարդակը պետք է որոշվի յուրաքանչյուր 2-4 շաբարը մեկ: Եթե հեմոգլոբինի մակարդակի բարձրացումը ամսական 10 գ/լ-ից քիչ է կամ 20 գ/լ-ից շատ, ապա պետք է կատարվի ներմուծվող երիթրոպոետին խթանող ագենտների չափարաժինի փոփոխություն<sup>7</sup>: Երիթրոպոետինը բարեկավում է սրտամկանի աշխատանքը, վերականգնում աշխատունակությունը, լավացնում ախտրժակն ու քունը, մեծացնում սեռական ներուժը, նապաստում է ընկճածության վերացմանը, բացառում է արյան փոխներարկումն ու դրա հետ կապված բարդությունները, վիրուսային ախտահարումները (ՄԻԱ-ախտահարումներ, B և C հեպատիտներ), չի ընկճում երիթրոպոետինի ներածին արտադրությունը, կարգավորում է ցածր ճնշում ունեցողների արյան ճնշումը, բարեկավում է արյունականգը (կրծատում է

\* Հարկ է նշել, որ արյան միզանյութում ազոտի մակարդակի բարձրացման դեպքում անհրաժեշտ է համարվում դրա անհապաղ իջեցումը, ինչի լավագույն միջոցներից է տրամադրությունը (դիալիզ):

<sup>7</sup> Stein D. D. Иванов. Рекомендации ERA-EDTA по лечению анемии у пациентов с хронической почечной недостаточностью (<http://transplantology.info/content/view/29/2/1/0/>):

արյունահոսության տևողությունը, կարգավիրում է արյան մակարդելիությունը<sup>8</sup>:

Այսպիսով՝ սակավարյունությունը դասում են երիկամների քրոնիկական հիվանդությունների առավել հաճախակի արտահայտումների թվին: Դրա զարգացման գլխավոր պատճառը երիկամների հյուսվածքներում էրիթրոպուտինի անբավարար արտադրությունն է:

Երիկամների քրոնիկական հիվանդություններով, այդ թվում՝ շաքարախտային նյարդախտով, հիվանդների սակավարյունության շտկման արյունավետ մերոդ է էրիթրոպուտինի ենթամաշկային ներարկումը, ընդամին ենթարրվում է, որ դրա վաղ նշանակումը կարող է հանգեցնել սրտանորային ախտարանությունների նվազեցմանը:

<sup>8</sup> Տես «Էրիտրոպուտին (օպօտին ալֆա, բետա, օմեգա)» ([http://amt.allergist.ru/eritropoetin\\_l.html](http://amt.allergist.ru/eritropoetin_l.html)):

## ՍՏԱՄՈՔՍԱՄՈՒՏՔԱՅԻՆ-ԿԵՐԱԿՐԱՓՈՂԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Գ. Վ. ԹՈՒՆՅԱՆ, բ/ժ ավագ լեյքինանկ, բժշկական գիլտությունների  
բեկնածու, ՀՀ ՊՆ ԿՎԶՀ ուսուցչարանության գծով համարատող,  
վիրարուժական բաժանմունքի ավագ օրդինատոր



Ստամոքսամուտքային-կերակրափողային քաղցկեղը (ՄԿՔ) ժամանակին ախտորոշելու բարդությունն այն է, որ հիվանդության կլինիկական դրսնորումները, հատկապես՝ վաղ փուլերում, դժվար են տարբերել ստամոքսի քրոնիկական հիվանդություններից: Վերջին 2 տասնամյակներում այդ տեղայնացմանը քաղցկեղի ախտորոշման և բուժման գործում ձեռք են բերվել որոշակի հաջողություններ, որոնք պայմանավորված են ախտորոշման մերողների, օպերատիվ միջամտությունների տեխնիկայի, անզօպացման միջոցների կատարելագործմամբ, իմմնավորված նախավիրահատական պատրաստման և հետվիրահատական թերապիայի անցկացմամբ, բուժման զուգակցված մեթոդների ներդրմամբ<sup>1</sup>: Սակայն այսօր էլ ՄԿՔ վիրահատական բուժման գործում կան մի շարք չլուծված խնդիրներ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես Գ. Ի. Գաֆտոն, Օ. Հ. Վոլկօ. Пути улучшения результатаов лечения рака проксимального отдела желудка. «Биомедицинский журнал», 2003, т. 4. «Medline.ru» (<http://www.medline.ru/public-art/tom4/art121.phthml>); Գ. Կ. Ժերլօ, Դ. Վ. Զյօկօ և օր. Пути улучшения качества жизни после операций по поводу рака желудка. «Российский журнал Гастроэнтэрологии, Гепатологии, Колопроктологии», 2009, т. 21, № 2; Վ. Գ. Լալետին. Показания к расширенной лимфаденэктомии при операциях по поводу рака желудка. «Актуальные проблемы современной онкологии». 1991, вып. 8; Ա. Փ. Չերնոսօվ, Մ. Ա. Կիլաձե. Современные подходы к хирургическому лечению рака кардиоэзофагеальной области. «Хирургия», 1995, № 2:

<sup>2</sup> Այլ մասին ավելի հաճախանորեն տես Գ. Վ. Թունյան, Ա. Ռ. Փարարանյան, Գ. Ա. Ուկանյան և ուրիշներ. Ստամոքսամուտքային-կերակրափողային անցումի քաղցկեղի վիրահատական բուժման փորձից: «ՀԲ», 2011, հմ 1–2:

Ներկայացնենք ստամոքսի պրոքսիմալ հատվածի քաղցկեղի վիրահատական բուժման, ստամոքսի ստամոքսամուտքային մասի բարորակ հիվանդությունների (քրոնիկական խոցեր, պոլիպներ) բուժման մեր փորձը: 2010 թ. ՀՀ ՊԿԶՀ ՎԲ-ում վիրահատվել է 28-ից 79 տարեկան 23 հիվանդ: Բոլոր հիվանդները անցել են ամբողատոր հետազոտման փուլ, ստացիոնար նախահետազոտություն և նախավիրահատական պատրաստում՝ ըստ ընդունված ստանդարտների:

7 հիվանդ ունեցել է բարորակ ախտաբանություն՝ հսկայական, աղեղնափոսիկային, քրոնիկական խոցեր, ստամոքսի ստամոքսամուտքային և ենթաստամոքսամուտքային հատվածների պոլիպներ: Նրանցից երկուսի դեպքում կատարվել է անհետաձգելի օպերատիվ միջամտություն՝ ըստ կենսական ցուցանիշների (առաս խոցային արյունահոսություն):

16 դեպքում ախտահյուսվածքաբանորեն հաստատվել է չարորակ ախտաբանություն: Ըստ ախտաբանական պրոցեսի տեղայնացման՝ 12 դեպքում դիտվել է ստամոքսամուտքային, ստամոքսամուտքային-կերակրափողային տեղայնացում, որոնցից 4 դեպքում՝ անցնամք կարդիալ սեղմանին, 3 դեպքում՝ կերակրափողի որովայնային հատվածին, 4 դեպքում՝ քաղցկեղի ստամոքսակարդիալ տեղայնացում:

Ըստ տարածվածության՝ *TNM* (քաղցկեղի զարգացման փուլերի միջազգային դասակարգում) հաշվառմամբ մեկ հիվանդ գտնվում էր 1-ին (6,2 %), 3-ը՝ 2-րդ (18,8 %), 8-ը՝ 3-րդ (50,0 %) և 4-ը՝ 4-րդ փուլում (25,0 %): Ըստ հյուսվածքաբանական կառուցվածքի՝ 14 դեպքում հայտնաբերվել է տարբեր աստիճանի տարբերակված գեղձային քաղցկեղ, 2 դեպքում՝ քաղցկեղի տափակ բջջային ձևը: 4 դեպքում հայտնաբերվել են ախտօջախավորումներ լյարդում, այլ օրգան համակարգերում, ենթաստամոքսային գեղձում, բոքերում եզակի օջախներով, որովայնամզով տարածվածությամբ:

ՈՒղեկցող ախտաբանություն հայտնաբերվել է 16 դեպքում (69,6 %): Գերակշռել են սրտաբոքային քրոնիկական հիվանդությունները, ստորին վերջույթների երակալայնքային ախտաբանություն՝ համակշռված և ենթահամակշռված վիճակներում: Նախկինում վիրահատված 4 հիվանդի մոտ որովայնախոռոչում դիտվել են հետվիրահատական արտահայտված կպումային պրոցեսներ:

Վիրահատական հասանելիություն ընտրելիս որոշիչ գործոններ են համարվել ստամոքսամուտքային սեղմանի ուռուցքային ախտահարումը, ուռուցքի անցումը կերակրափողի որովայնային հատվածին, ինչպես նաև հիվանդի կազմվածքի տեսակն ու ճարպային սնվածությունը: Առաջին դեպքում ըստ Սավինիխի վերնամիջնային որովայնահատմամբ առաջնահետային (սագիտալ) դիաֆրազմատոնմիայի կիրառումը, և երկրորդ դեպքում՝ ծախակողմյան կրծքառովայնային հատումը ապահովում են բավարար հասանելիություն, որպեսզի կատարվի ավշահատումով (ԱՀ) արնատական ծավալով վիրահատություն, կերակրափողի «հուսալի» ծայրակցման ձևափորում: 3 հիվանդի վիրահատել ենք՝ ապահովելով ծախակողմյան կրծքառովայնային հասանելիություն, 7 հիվանդի՝ վերնամիջնային որովայնահատում ըստ Սավինիխի առաջնահետային դիաֆրազմատոնմայի կիրառմամբ: Մյուս հիվանդների վիրահատությունները կատար-

վել են վերնամիջնային որովայնային հասանելիության ապահովմամբ ՌՍԿ-10 վերքալյանիչով վիրահատական դաշտի անկյան ապարատային շտկմամբ:

Կատարված վիրահատությունների թիվը հետևյալն էր. ստամոքսի 1 մասնագերծում (գաստրէկտոմիա՝ ԳԵ՝ ԱՀ R2 ծավալով ենթաստամոքսային գեղձի պատիճի մասնահատմամբ, ստամոքսի համակցված 1 ԳԵ՝ ԱՀ R2 ծավալով ենթաստամոքսային գեղձի հյուսվածքի ծայրամասային և փայծաղի մասնագերծմամբ (դիստալ պանկրեատոսապլենէկտոմիա), ԱՀ R2 ծավալով Գառոկ-Օսավայի 2 վիրահատություն (կերակրափողի ստորին երրորդ հատվածի և ստամոքսի պրոքսիմալ սուրտոտալ մասնահատում), ԱՀ R2 ծավալով փայծաղի հեռացմամբ համակցված 1 և ԱՀ R2 ծավալով ստամոքսի պրոքսիմալ 5 սուրտոտալ մասնահատում, ԱՀ R2 ծավալով ստամոքսի համակցված պրոքսիմալ 3 սուրտոտալ մասնահատում՝ փայծաղի հեռացմամբ, ստամոքսի ընդլայնված համակցված պրոքսիմալ սուրտոտալ 1-ական մասնահատում՝ ԱՀ R3 ծավալով հաստ առիքի, լայնակի խրադիքի, ենթաստամոքսային գեղձի պատիճի մասնահատմամբ և ԱՀ R2 ծավալով ստոծանու մասնահատմամբ, ստամոքսի պրոքսիմալ 3 մասնահատում, խոցի 1 սեպաձև հատում, ստամոքսի 2 խողովակաձև պրոքսիմալ մասնահատում, առաջնային 1 պրոքսիմալ ստամոքսահատում և խոցի շրջակարում, 1 փորձնական որովայնահատում:

Կերակրափողաստամոքսային և կերակրափողապահիքային ծայրակցնան ընտրության դեպքում կարևոր զործոններ ենք համարել ուսուցքային պրոցեսի տեղային տարածվածության աստիճանը, կերակրափողի ախտահարման մակարդակը, բարակ աղիքի անթքային կառուցվածքի ընդհանուր վիճակը և անստոմիական առանձնահատկությունները, ուղեկցող ախտարանության բնույթը և արտահայտվածությունը, իիվաճնի տարիքը: Ստամոքսի անբողջական ԳԵ-ի ժամանակ կատարվել է առաջնային գաստրոպլաստիկա՝ կերակրափողապահիքային համալիքի ձևավորմամբ ըստ Սիգալ-III-ի (Երկու դեպք): Պրոքսիմալ սուրտոտալ մասնահատման ժամանակ կերակրափողային խողովակի անընդհատությունը վերականգնել ենք ուղղահայաց ծայրակողային կերակրափողաստամոքսային ծայրակցման ձևավորմամբ (12 դեպք) և կերակրափողաստամոքսային ներագուցումային ծայրակցմամբ (4 դեպք):

Վաղ հետվիրահատական շրջանում կատարվել է երկու կրկնակի որովայնահատում. մի դեպքում ստամոքսի մասնագերծումից հետո 7-րդ օրը ախտորոշվել է ենթաստոծանիական բարախսակույտ, մյուս դեպքում պրոքսիմալ խողովակային մասնահատումից հետո 5-րդ օրն ախտորոշվել է փայծաղի ենթապատճային հեմատոմայի պատովածք: Առաջն դեպքում կատարվել է կրկնակի որովայնահատում, բարախսակույտի խոռոչի բացում, ախտահանում և դրենաժում, կերակրափողապահիքային համալիքի կարանների ստուգում (կարանների անբավարություն չի եղել): Երկրորդ դեպքում կատարվել է կրկնակի որովայնահատում, փայծաղազերծում, որովայնախոռոչի դրենաժում: Հիվանդները համակշռված վիճակում դուրս են գրվել, համապատասխանաբար, 23-րդ և 17-րդ օրերին՝ ըստ բնակավայրի ամբողատոր վիրաբուժական վերջնարուժնան:

Թերապևտիկ բարդություններից 3 դեպքում կիմիկառենտգենաբանորեն

հայտնաբերվել է ստորին մասնային կանգային քոքաբորբ, որը բուժվել է քերապևտիկ մեթոդներով: Հարկ է նշել, որ բոլոր քարդացումները դիտվել են քրոնիկական սիրտ-քոքային ախտաբանությամբ մեծահասակ հիվանդների դեպքում:

12 հիվանդ հետվիրահատական շրջանում անցել է 0-քունավորությամբ պոլիքիմիաբերապայիայի կրոս: Վիրահատուրույններից հետո նահացու ելքեր չեն եղել: Վերահսկվել է 11 հիվանդի հետագա առողջական վիճակը: Արձանագրվել է բոլոր հիվանդների քաշի ավելացում՝ 5-7 կգ-ով: Հիվանդներն անցել են ռենտգենարանական, սոնողրաֆիկ, ֆիբրոներոլիտակային հետազոտություն: Ըստ կերակրափողային ծայրակցման գոտու ԷԳ-ԴՌ ծայրակցման շրջանի կայուն բորբոքում, նեղացում չի գրանցվել: Արյան լաբորատոր ցուցանիշները առանց արտահայտված ախտաբանական փոփոխությունների էին:

Եվ այսպես. մեր փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիները սովորաբար ու են դիմում բուժօգնության, ինչի վկայությունն են ստամոքսի ալրոքսիմալ քաժնի քաղցկեղի չքծկված ձևերի (3-րդ և 4-րդ փուլերը կազմել են 75 %), «անուշադրության մատնված» ստամոքսամուտքային և ենթաստամոքսամուտքային խոցերի առաջնային հայտնաբերման ցուցանիշները: ՄԿ-Ձ բուժման վիրահատական մեթոդը միակն է, որը ապահովաման, ոչ հետվիրահատական շրջանում հիվանդների կյանքի լավ որակի հոլոյ է տալիս: Հիվանդի համակշռված ընթանուր վիճակի դեպքում տարիքը, հեռավոր ախտօջախավորումները հակացուցում չեն կիսամիջոցային մասնահատումների և ստամոքսի մասնագերծումների համար: Համապատասխան վիրահատական հասանելիության ճիշտ ընտրությունը հնարավորություն է տալիս ապահովելու վիրահատուրույնների ուռուցքարանական արմատականությունը, կերակրափողի ծայրակցումը ձևավորելու՝ առանց տեխնիկական սխալների ռիսկի: R2 ծավալով ավշահատումը համարվում է ստանդարտ՝ ստամոքսի քաղցկեղի մասնահատումներ կատարելու դեպքում, ինչը, ուռուցքարանական արմատականության ապահովումից բացի, հնարավորություն է տալիս նաև ավելի ստույգ կերպով որոշելու ուռուցքի զարգացման փուլը, կազմելով հիվանդի բուժման պլանը և հետագա վարումը: Ստամոքսի մասնահատման դեպքում առաջնային գաստրոպաստիկան ըստ Միզալ-III-ի և ծայրակողային ուղղահայաց կերակրափողային-ստամոքսային ծայրակցումը ստամոքսի պորքսիմալ սուրստուալ մասնահատման դիագրում վերին աստիճանի հուսալի են՝ քացառելով հետվիրահատական մոտ և հեռավոր փուլերում ծայրակցման շրջանում քարդացությունների զարգացումը և ապահովելով հիվանդների կյանքի լավ որակ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *L. B. Слывко.* Сравнительная оценка способов формирования пищеводно-кишечных анастомозов. Дис. кан. мед. наук. Астрахань, 2004.

2. *M. Ikeguchi, S. Oka, Y. Gomyo, S. Tsujitani, M. Maeta, N. Kaibara.* Postoperative morbidity and mortality after gastrectomy for gastric carcinoma. «Hepatogastroenterology». 2001, Vol. 48, № 41.

3. *O. Liannos, S. Guzman, F. Pimentel, L. Ibanez, I. Duarte.* Results of surgical treatment of gastric cancer. «Digestive Surgery», 1999, Vol. 16, № 5.

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### НЕКОТОРЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ КВАЛИФИЦИРОВАННОЙ И СПЕЦИАЛИЗИРОВАННОЙ ПЕДИАТРИЧЕСКОЙ ПОМОЩИ

Կ. Г. СИМОНЯН, кандидат медицинских наук, доцент кафедры педиатрии № 1 ЕГМУ  
С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник  
Военно-медицинского факультета ЕГМУ

#### РЕЗЮМЕ

Проблема создания эффективной системы педиатрической помощи напрямую связана с проблемой обеспечения комплектования ВС, в особенности в случае малых государств с ограниченными людскими ресурсами, каковым является и Республика Армения. Подобная система должна охватывать и перинатальный период, обеспечивая охрану здоровья матери и ребенка.

На основе многофункционального анализа истории болезней детей с соматической патологией, а также смертности по этой причине разработана математическая модель организации педиатрической помощи как для РА в целом, так и ее отдельных медико-географических районов. С учетом результатов моделирования разработана концепция развития системы педиатрической помощи, включающая основные принципы и направления, а также рекомендации по совершенствованию данной системы. В частности предлагается: привести общие положения и механизмы развития педиатрической службы республики в соответствие с законодательством и экономическими возможностями; обеспечить переход педиатрической службы РА от потребительского принципа к эффективному использованию финансовых, материальных и кадровых ресурсов; рационально использовать коечный фонд педиатрической службы в масштабах РА; создать постоянно действующую выездную педиатрическую бригаду; создать в удаленных от столицы марзах (областях) межмарзовье педиатрические центры, что позволит квалифицированную и специализированную педиатрическую помощь приблизить к сельскому населению; в качестве стратегического направления развития системы медобеспечения матери и ребенка рассматривать создание перинатальных центров и т. д.

### ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНО-ПРАВОВЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ ВОЕННЫХ ВРАЧЕЙ И БОЛЬНЫХ И ИХ ВЛИЯНИЕ НА ПРОЦЕСС МЕДОБЕСПЕЧЕНИЯ

Р. Г. ХАЧАТРЯН, советник ректора ЕГМУ им. М. Гераци

#### РЕЗЮМЕ

Военная медицина имеет древнюю историю, и во все времена военные врачи входили в элиту армии. Они всегда имели офицерские звания, а наличие специальных знаний и профессионализм позволяли им быть достаточно

мобильными, пользоваться некоторыми дисциплинарными привилегиями. Военные врачи всегда пользуются уважением, и в то же время гражданская медицина всегда нуждается в них.

Представленное в статье исследование показывает, что отношения врачей и пациентов в военно-медицинской практике имеет свои особенности и содержит элементы, постоянно нуждающиеся в совершенствовании. Актуальны вопросы предоставления медицинских услуг военнослужащим и их семьям, необходимой оснащенности военно-медицинским оборудованием, передовыми технологиями, внедрения в военно-медицинской службе электронной информационной системы, последовательное решение которых послужит стимулом для повышения социального положения военных врачей, совершенствования кадровой политики и повышения качества взаимоотношений военных врачей-офицеров и пациентов-служащих.

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ЛЕЧЕНИЯ АНЕМИИ ПРИ ДИАБЕТИЧЕСКОЙ НЕФРОПАТИИ

*К. М. СААКՅԱՆ, капитан м/с, кандидат медицинских наук, доцент кафедры ВПТ ЕГМУ, В. В. ՑԱՏՎՐՅԱՆ, майор м/с, кандидат медицинских наук, доцент кафедры ВПТ ЕГМУ, С. Г. ԳԱԼՍՏՅԱՆ, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник Военно-медицинского факультета ЕГМУ*

### РЕЗЮМЕ

При хронических заболеваниях почек одним из наиболее распространенных осложнений является анемия. Основная причина ее развития – недостаточная выработка почечными тканями эритропоэтина. При диабетической нефропатии анемия развивается чаще и протекает тяжелее, чем в случае других хронических заболеваний почек. Почечная анемия вызывает ухудшение качества жизни больного сахарным диабетом, понижение сексуальной и когнитивной функций, ухудшение аппетита и сна, снижение работоспособности и физической активности.

Одним из наиболее эффективных методов профилактики развития анемии при диабетической нефропатии является подкожное введение эритропоэтина. Согласно общепринятой гипотезе, раннее назначение эритропоэтина предотвращает развитие сердечно-сосудистых осложнений.

## ОБ ОПЫТЕ ХИРУРГИЧЕСКОГО ЛЕЧЕНИЯ КАРДИОЭЗОФАГЕАЛЬНОГО РАКА

*Г. В. ТУНЯՆ, старший лейтенант м/с, кандидат медицинских наук, координатор по онкологии ЦКВГ МО РА, старший ординатор хирургического отделения*

### РЕЗЮМЕ

В работе представлены результаты хирургического лечения 23 больных раком проксимального отдела, доброкачественных заболеваний кардиального отдела желудка (хронические язвы, полипы) в возрасте от 28 до 79 лет

за период с 2010–2012 годы на базе ХО ЦКВГ МО РА. Определены показания и противопоказания к выполнению простой и комбинированной проксимальной резекции, гастрэктомии, трубчатой резекции желудка, критерии выбора хирургического доступа, объема резекции, выбора вида пищеводного соусъя на основании анализа интраоперационных, послеоперационных осложнений в ближащем и в отдаленном периодах. Рекомендованы наиболее оптимальные виды восстановления непрерывности пищеводной трубы, обеспечивающие хорошее функциональное состояние и качество жизни оперированных больных.

## MILITARY MEDICINE

### SOME CONCEPTUAL ISSUES OF ORGANIZING COMPETENT AND SPECIALIZED PEDIATRIC CARE IN THE REPUBLIC OF ARMENIA

K. H. SIMONYAN, PhD in Medicine, Associate Professor at the Pediatrics Department № 1, YSMU, S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, MD, Professor, Head of the Military and Medical Faculty, YSMU

#### SUMMARY

The problem of creation of an effective system of pediatric care is directly related to the problem of ensuring the recruitment of the Armed Forces, especially in the case of small states with limited human resources, as the Republic of Armenia is. Such a system should also cover the perinatal period ensuring the mother and child health protection.

Based on the multi-functional analysis of children's case histories with somatic pathology, as well as the consequent mortality a mathematical model is developed to organize pediatric care for both the Republic of Armenia in general and its individual medical-geographic areas. Taking into account the modeling results a concept for the development of the pediatric care system is elaborated inclusive of the basic principles and directions, as well as guidelines for improving the system. In particular it is proposed to: conform the general regulations and mechanisms of developing the Republic's pediatric service to the legislation and economic capacities; ensure the transition of the RA pediatric service from the consumer principle to the effective use of financial, material and human resources; make the most efficient use of the hospital stock of the pediatric service on the RA scale; form a standing mobile pediatric team; establish interdistrict pediatric centers in the districts (marzes) remote from the capital which will enable to bring the competent and specialized pediatric care closer to the rural population; consider the establishment of perinatal centers, etc. as a strategic direction to develop the mother and child healthcare system.

## THE CHARACHTERISTICS OF THE SOCIAL AND LEGAL RELATIONS OF MILITARY PHYSICIANS AND PATIENTS AND ITS IMPACT ON THE MEDICAL SERVICE PROCESS

*R. G. KHACHATRYAN, Advisor to the Rector of the YSMU after M. Heratsi*

### SUMMARY

Military medicine has got an ancient history, and at all times, military physicians have been part of the army elite. They have always had officer ranks, and their expertise and professionalism have allowed them to be quite mobile and enjoy some disciplinary privileges. Military physicians have always been respected, and at the same time, civilian medicine is always in need of them.

Presented in the paper survey shows that the relations of physicians and patients in military-medical practice have its own characteristics and contain elements that constantly need improvement. The live issues are the provision of healthcare services for servicemen and their families, the necessity of the military-medical equipments and advanced technologies and the introduction of electronic information system in the military medical service, the consistent solution of which will serve as an incentive to enhance the social status of military physicians, develop the personnel policy and improve the quality of the relation of medical officers and employee-patients.

## SOME ISSUES OF ANEMIA'S TREATMENT IN DIABETIC NEPHROPATHY

*K. M. SAHAKYAN, Captain of Medical Service, PhD in Medicine, Associate Professor  
of Field Therapy Department, Faculty of Military Medicine, YSMU,  
V. V. TSATURYAN, Major of Medical Service, PhD in Medicine, Associate Professor of Field  
Therapy Department, Faculty of Military Medicine, YSMU, S. G. GALSTYAN, Colonel  
of Medical Service, MD, Professor, Head of the Military and Medical Faculty, YSMU*

### SUMMARY

One of the most common complications in chronic kidney diseases is anemia, the main cause of which is the lack of erythropoietin's production by renal tissue. In diabetic nephropathy anemia occurs more frequently and progresses severer than in other chronic kidney diseases. Renal anemia causes deterioration of the life quality of patients with diabetes mellitus, reduction of sexual and cognitive functions, poor appetite and sleep, decrease of efficiency and physical activity.

One of the most effective methods for preventing anemia in diabetic nephropathy is the subcutaneous injection of erythropoietin. According to the generally accepted hypothesis the early prescription of erythropoietin prevents the development of cardiovascular complications.

## ON THE EXPERIENCE OF SURGICAL TREATMENT OF CARDIOESOPHAGEAL CANCER

*G. V. TUNYAN, Senior Lieutenant of Medical Service, PhD in Medicine,  
Coordinator of Oncology in Central Clinical Military Hospital of MOD, RA,  
Senior Resident of Surgical Department*

### SUMMARY

The author of the article discloses the end results of surgical treatment of 23 patients, who suffered from proximal cancer, benign diseases of forestomach cancer (*chronic ulcers, polyps*) at the age of 28 to 79 in the period of 2010–2012 on the basis of the practice in the Surgical Department of CCMH of MoD, RA. Indications and contraindications to simple and combined cardieotomy, gastrectomy, tubular gastrectomy, as well as the criteria of the alternatives of surgical approach, the extent of resection, alternatives of enterostomy on the basis of the analysis of intraoperative and post-surgical treatment complications for immediate and late periods are defined. The author recommends the most effective aspects of rehabilitation of continuity of esophagel tube providing a good functional state and an improved quality of life of those patients undergone surgical treatment.

## **Ի գիտություն և լեռնակների և լճերցողների**

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմավարական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ուստերեն և անզերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալու:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանառ են հոդվածներում թերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահպանցների պահպանման համար:

Հեղինակները դիրքորոշում պարտադիր չեն, որ համրամեն խմբագրության դիրքորոշման հետ:

Դիմագրամները, պիտեամերը, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապալումները:

Զեւագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելոց հետո:

Նյութերի մասամբ կամ ամրողությամբ արտասպառ բույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՆԱԿ

Պատասխանառու քարտուղար՝ *S. U. Անդրեյան*

Ո-պմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասալյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարերյան*

Ձեսվորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*  
Լուսանկարիչ՝ *Ա. Վ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարերյանի*  
Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավետիսյանի*, *Ա. Հ. Հակոբյանի*, *Ա. Մ. Մարգիրոսյանի*,  
*Լ. Հ. Պասիկյանի*, *Ք. Վ. Փիրոյանի*  
Համակարգչային ապահովումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*, *Ն. Զ. Ծագուրյանի*  
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*, *Ա. Հ. Սարուհանյան*

Լուսանկարչական ապահովումը՝  
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavareget.wordpress.com>

Էլ. փոստ՝ [haykakan\\_banak@mail.am](mailto:haykakan_banak@mail.am)

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ուսումնավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ուսումնագիտական հանդես, 2012 թ.

Ստորագրվել է տպագրության 05.10.2012: Թուղթ՝ օֆսեթային: Ձևաչափ՝ 70x100 1/16:  
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամով: Տպաքանակը՝ 500:  
Տառատեսակները՝ «Արհապ», «Թայմ» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասի՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



ՀԱՊԿ-ի արագ արձագանքման ուժերի  
«Փոխգործակցություն – 2012» համատեղ զորավարժության ժամանակ.  
(առաջին շարքում՝ ձախից աջ)

ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Յովիի Խաչատրով,  
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան,

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյան,  
ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորյոյուժա,  
ՌԴ Պաշտպանության նախարար Անատոլի Սերոյուկով,  
ՀՀ Նախագահի Գլխավոր ռազմական տեսուչ  
գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյան)

Երևան, 2012 թ. սեպտեմբերի 19



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ